ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ

VII

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ
ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱՐՍԱՄՅԱՆԻ
ԵՎ
«ՋԳՈՆ ԵՊՍ. ՏԵՐ-ՀԱԿՈԲՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»
ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

СВОД АРМЯНСКИХ НАДПИСЕЙ

ВЫПУСК
VII

УКРАИНА
МОЛДОВА

СОСТАВИЛ
Г.М. ГРИГОРЯН

CORPUS INSCRIPTIONUM ARMENICARUM

LIBER
VII

UKRAINA
MOLDOVA

ИЗДАТЕЛЬСТВО "ГИТУТЮН" НАН РА
ЕРЕВАН 1996

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ՊՐԱԿ

VII

ՈՒԿՐԱԻՆԱ ՄՈԼԴՈՎԱ

ԿԱԶՄԵՑ
Գ.Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

A III 6706
003.071 (479.25)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1996

ԳԴՄ 63.4(2Ուկ)+63.4(2Մ)
Դ 520

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Բ.Ն. Առաքելյան, Գ.Մ. Գրիգորյան, Գ.Հ. Կարախանյան, Պ.Մ. Մուրադյան

Պրակի խմբագիր՝ Պատմ. գիտ. դոկտոր Վ.Ռ. Գրիգորյան

Դիվան հայ վիմագրության. Հայաստանի ԳԱԱ Հնագիտ. և ազգագր. ին-տ:

Խմբ. կոլեգիա Բ.Ն. Առաքելյան և ուրիշ. -Եր.: Հայաստանի ԳԱԱ «Գիտություն» հրատ.1996

Պր.7. Ուկրաինա Մոլդովա- /Կազմ. Գ.Մ. Գրիգորյան, Խմբ. Վ.Ռ. Գրիգորյան

Դ 520 Դիվան հայ վիմագրության. /ՀՀ ԳԱԱ Հնագիտ. և ազգագր. ին-տ [Խմբ. կոլեգիա Բ.Ն. Առաքելյան և ուրիշ.] -Եր.. ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996

Հրատ. է 1996թ.

Պր. VII. Ուկրաինա, Մոլդովա- /Կազմ. Գ.Մ. Գրիգորյան. - 1996. -404 էջ

Պրակում ամփոփված են այժմյան Ուկրաինայի և Մոլդովայի տարածքներում գոյություն ունեցած հայկական նախկին գաղթօջախների հայերեն, ռուսերեն, լեհերեն, յատիներեն և մասամբ՝ մոլդովերեն ու հայատառ ղփչաղերեն վիմագրությունները, որոնք հավաստի տեղեկություններ են պարունակում այդ վայրերում ապրած հայ ազգաբնակչության քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքի վերաբերյալ: Իրրև սկզբնաղբյուրներ, պատմագիտական յարևոր արժեք են ներկայացնում հատկապես Կիևի, Ղրիմի, Լվովի, Տեռնոպոլի, Սմելնիցկու, Իվանո-Ֆրանկովսկի, Չեռնովցիի, Օդեսայի մարզերի, ինչպես նաև Մոլդովայի Քիշնև, Գրիգորիոպոլ, Օրգեև, Բելցի և այլ բնակավայրերի վիմական արձանագրությունները, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ:

Գիրքը նախատեսվում է հայագիտական խնդիրներով և ԱՊՀ ժողովուրդների պատմական անցյալի կապերով զբաղվող մասնագետների համար:

Դ 0505000000
703(02) - 96

ԳԴՄ 63.4(2Ուկ)+63.4(2Մ)

ISBN 5-8080-0144-7

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1996

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Եվրոպայի հայկական գաղթավայրերի վիմական արձանագրությունների հավաքչական աշխատանքներով և ուսումնասիրությամբ ստարբեր ժամանակներում զբաղվել են մի շարք գիտնականներ: Առաջին երախտավորներից հատկապես պետք է նշել Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Մինաս Բժշկյանին, որն իր «Ճանապարհորդութիւն ի Լեհաստան» մեծարժեք աշխատության մեջ զետեղել է իր իսկ ընդօրինակած բազմաթիվ վիմագրություններ, որոնցից շատերն այժմ գոյություն չունեն և հայագիտության անդաստանն են մտել նրա վերծանությունների շնորհիվ[1]:

Ուկրաինայի և Մոլդովայի հայերեն արձանագրությունների ընտիր նմուշներ կան Ցովհ. Տէր-Աբրահամյանի[2] Խ. Ստեփանեի[3], Ք.Քուշներյանի[4], Գ.Այվազովսկու[5], Ք.Քուչուկ-Ցովհաննիսյանի[6] Ղ.Ալիշանի[7], Լ. Մելիքսեթ-Բեկի[8] և այլոց աշխատություններում:

Լեհաստանի՝ Հայաստանի ու հայերի մասին եղած այլալեզու վիմագրությունները բնագրով և թարգմանաբար լույս են ընծայել լեհահայ մեծանուն պատմաբան Սադոկ Բաբոնչը[9], Կայտան Կայտանովիչը[10], և ուրիշներ: Հայ գաղթավայրերի պատմաճարտարապետական ժառանգությունն ուսումնասիրելու բնագավառում լուրջ աշխատանք է ծավալել հայ մշակույթի հմուտ գիտակ Ա.Լ.Ցակոբսոնը[11].)

Տարբեր ժամանակներում հայկական եւ հայերի մասին այլալեզու արձանագրությունները ուսումնասիրության նյութ են դարձրել Գ. Գալեմքեարյանը[12], Ն. Մառը[13], Ի. Բաբկովը[14], Ի. Ս.-

---

1 Մինաս Բժշկյան. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան եւ յայլ կողմանս րնակեալս ի հայկազաց աերելոց ի նախնեաց Անի քաղաքին. շարադրեալ հանդերձ զանազան բանասիրական տեղեկութեամբք. Վենետիկ, 1830: Այսուհետև՝ Մ. Բժշկյան:

2 Ցովհաննէս Տէր-Աբրահամեան, Պատմութիւն Խրիմու հանդերձ աշխարհագրական և ուսումնական տեղեկութեամբք զնահանի եւ զայժմու րնակչաց ի Տարիոյ. մասն Բ, Թէոդոսիա, 1865: Այսուհետև՝ Հ.Տեր-Աբրահամյան:

3 Խորէն ծ.վ. Ստեփանէ, Ղրիմի Ս.Խաչ վանքը, ՍՊր, 1891: Այսուհետև՝ Խ. Ստեփանե:

4 Հ.Ք.Քուշներեան, Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց, Վենետիկ, 1895: Այսուհետև՝ Ք.Քուշներյան:

5 Г. Айвазовский, Армянские надписи, находящиеся на юге Росии. „Записки Одесского общества истории и древностей„ т.У , 1867, с. 223-233 далее-ЗООИД.

6 Х.Кучук-Иоаннесов, Стариниые армянские надписи и старнинные рукописи в предеях юго-западной Руси и в Крыму, М.,1892. Далее-Кучук-Иоаннесов.

7 Ղևոնդ Ալիշան. Կամենից: Տարեգիրք հայոց Լեհաստանի և Ռումինիոյ հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896: Այսուհետև՝ Կամենից:

8 Л.Меликсет-Беков, Армянскне древности в Аккермане /в Бессарабии), Тифлис, 1911, ои жв. Старнинные армянские надписи в музее Общества истории древностей в Одессе, Тифлис, 1912. ои же. Из материалов для истории армян на юге Росии, ЗООИД, т. 29, Одесса, 1911, Тифлис, 1914.

9 Sadok Bara,cz, Zywoty Slawnych ormian w Polzce, Lwow, 1856, նույնի՝ Rus dziejow ormianskich, Tarnopol, 1869.

10 Х. Д[оmі n ік] Kajetanowicz, Катедра ормі a nска, отоцзание, (Przewodnik), Lwow, 1926.

11 А.Л. Якобсон, Армянская средневековая архитектура в Крыму. „Византийский временник„ 1956, N.8, с. 166-191. Он же: Армянские историко- архитектурные памятиики Крыма /рукопись/.

12 Գ. Գ(ալեմքեարեան), Լեհահայոց քանի մը հայ արձանագրութիւնները. «Հանդէս ամսօրեայ». 1897, հունվար, էջ 19-21

13 Н.Я. Марр, Заметки о двух армянских надписях, иайденных в Херсонесе. Отдельный оттиск из „Известий императорскои археологической комиссии„ N.9

14 Очерки исторической и культурной географии Крыма. II. (К вопросу о времени появаления армян в Тавриде). Древнеармянская надпись феодосиского музея. „ Известия государственного географического общества„ т.71, 1939. Далее: И.И. Бабков.

դուլլինը[15], Հ. Անասյանը[16]:

1960-ական թվականների վերջերին Հայաստանի Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտական խորհուրդը որոշում ընդունեց կազմակերպել վիմագրական արշավախումբ Խորհրդային Միության սահմաններում հայկական գաղթօջախների հայերեն ու այլ լեզուներով եղած վիմագրերը հավաքելու և գիտական հիմունքներով սպագրության պատրաստելու նպատակով:

Հարմար գտնվեց սկզբնապես ուսումնասիրել Խորհրդային Միության հարավարևմտյան շրջանները, այսինքն՝ Ուկրաինայի և Մոլդովայի հանրապետությունները, որոնց հայերեն արձանագրությունների մի փոքր մասը գիտակից աշխարհին էր մատուցվել դեռևս անցյալ դարի 30-ական թվականներին:

Նկատի ունենալով այն պարագան, որ արդի շինարարական աշխատանքների վիթխարի ծավալի պատճառով արագորեն կործանվում և ոչնչանում են, մասնավորապես, կոթողային հուշարձանները, արշավախումբը ձեռնամուխ եղավ հավաքելու նաև ընտրազույն շրջանի առավել կարևոր վիմագրերը՝ հայերեն, ռուսերեն, լեհերեն, յատիներեն և, մասամբ, հայատառ ղփչաղերեն լեզուներով:

Ներկա պրակում զետեղել ենք հիշյալ հանրապետությունների թանգարաններում պահպանվող հայկական ցուցանմուշների մակագրությունները ևս:

Հավաքչական աշխատանքներ ծավալվեցին Ղրիմի, Օդեսայի, Խմելնիցկու, Չերնովցիի, Տեռնոպոլի, Լվովի, Իվանո-Ֆրանկովսկի մարզերում և Մոլդովայի սր շարք րնակավայրերում:

Վիմագրական արշավախմրի կազմում ընդգրկվել են Ուկրաինայի ԳԱ հնագիտության ինստիտուտի ավագ գիտական աշխատող, պատմական գիտությունների դոկտոր Ս.Ա. Վիտոցկին, պատմական գիտությունների թեկնածուներ Ն.Կ.Կրիվոնոսը, Ա.Ա.Մանուչարյանը, վիմագրագետ- պատմարան Ս.Տ.Սաղումյանը, լուսանկարիչներ Ա.Ա.Վրույրը, Պ.Գորուն և Վ. Բոյկոն:

Արշավախմրին իրենց խորհուրդներով աջակցել են Հայաստանի ԳԱԱ ակադեմիկոսներ Լ.Ս.Խաչիկյանը, Բ.Ն. Առաքելյանը, Վ.Բ. Բարխուդարյանը, Վ.Ա. Միքայելյանը, պատմական գիտությունների դոկտոր Վ.Ռ. Գրիգորյանը, արվեստագիտության թեկնածու Է.Մ.Կորխմազյանը: Շրջագայության ժամանակ առանձին տեղերում հավաքչական աշխատանքներին նպաստել են Հով.Հ. Այվազովսկու անվան պատկերասրահի տնօրեն Դ.Գ. Տրուշինը, գեղանկարիչ Ս.Ի. Մալիշևը, Թեոդոսիայի երկրագիտական թանգարանի տնօրեն Ե.Ա. Կատյուշինը, աշխատակիցներ Ի.Կ. Պանտելեևը, Ա.Ն. Գավրիլովան, Ի.Պ Պրիխոդկոն, Ե.Ա. Այրարինան, Ա.Տ. Չաուշյանը, ուկրաինացի վերականգնող ճարտարապետներ Ա.Դ. Տյուպիչը, Ե.Մ. Պլամենիցկայան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի երկրագիտական թանգարանի տնօրեն Գ.Ն. Խոտյունը և ուրիշներ: Մոլդովայի սահմաններում շրջագայելիս արշավախմրին օգնել են նաև Պատմական հուշարձանների պահպանման Մոլդովական ընկերության նախագահի տեղակալ Գ.Դ. Ռեմենկոն, ճարտարապետության դոկտոր- պրոֆեսոր Ա.Խ. Թորամանյանը, բնիկ գրիգորիոպոլցի հայուհի Ալ.Գ. Խորասանյանը (Գոլուրինսկայան), Օրգեևի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն Տ.Խ. Բրաչկոն և ուրիշներ, որոնց հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Պրակի գրչագրական աշխատանքները կատարել են գեղանկարիչներ Ն.Հ. Խանզադյանը, Լ.Ս. Ավագյանը և գիտական աշխատակից Հ.Ա. Մելքոնյանը:

Գ. Մ. Գրիգորյան

---

15 И. Абдуллин, Армяно-кипчакская эпиграфика. „Тезисы докладов итоговой научной сессии за 1972 г., Казань, 1973, с. 48-52.

16 Հ.Ս. Անասյան. Ստեփանոս Սալմաստեցի. (Հատուածներ նոր ուսումնասիրութիւնից «Սիօն» ամսագրից, Երուսաղեմ, 1980-1981, էջ 1-23:

ОТ СОСТАВИТЕЛЯ

В VII выпуск "Свода армянских надписей" включено около 800 текстов, собранных с пределов бывших армянских колонии Украины и Молдовы.

При экспедиционно-полевых работах на местах автору настоящего труда содеиствовали и оказывали необходимую помощь ученые-специалисты, сотрудники музеев и отдельные граждане, искренне ценившие культурное наследство армянского народа.

Предки наши, где бы они не находились, отличались своим мирным трудом, содействовали процветанию их края, кровью защищали свою родину от иноземных завоевателей...

Обо всем этом повествуют помещенные в настоящем "Своде" армянские лапидарные надписи и иноязычные тексты об Армении и армянах.

Пользуясь приятным событием выхода в свет сей книги, хочу искренне поблагодарить спонсоров и тех, которые стали опорой процветания арменистики. Приношу свою признательность руководству Киевского Софийского собора- В. Н. Ачкасовой, И. Ф. Тоцкой, Э. Г. Арустамян (Музей Киево-Печерской Лавры), ныне покоиному доктору наук, эпиграфисту С. А. Высоцкому, архитекторам-реставраторам Е. М. Пламинецкой и А. Д. Тюпичу (г. Киев), замечательным специалистам по армянским колониям Н. К. Кривонос, Я. Р. Дашкевичу (г. Львов), Г. Н. Хотюну (г. Каменец-Подольский), Е. А. Катюшину, Г. А. Кульясовои, бывшему директору Картинной Галереи им. И. К. Айвазовского Д. Г. Трушину (г. Феодосия), научному сотруднику Симферопольского краеаедческого музея В. К. Гарагуле, директору Оргеевского краеведческого музея Т. Х. Брачко, сестрам Хорасанян (Молдова) и многим моим друзьям.

В 1971 г. в городе Феодосия, в залах армянской церкви Сурб Саргис был открыт филиал городского краеведческого музея -лапидарии, где были помещены в основном памятники армянского зодчества- искусные хачкары, нагробные камни, мраморные плиты с надписями XIV-XIX веков. Переводы всех надписей с древнеармянских оригиналов на русскиий язык были оделаны безвозмездно автором настоящей работы. Феодосийскии лапидарий стал ценнейшим культурным очагом города. Ряд надписей повествует о великих деяниях мариниста И. К. Айвазовского. Одна из них гласит:

"Сей храм Сурб Саргиса (Св. Сергия) возобновлен из руин благодаря Вожию в 1888 году увещанием и старанием архимандрита Хорэна Степанэ, чему содеиствовали армянин, профессор художеств Ованнес Айвазовский, подаривший великолепные картины, и благочестивый армянский народ Феодосии".

Армянские надписи, как достоверные первоисточники, наглядно показывают исторические связи и вековую дружбу армянского, русского, украииского и молдавского народов. К большому сожалению, из-за отсутствия средств, книга выходит в свет только на армянском языке, но мы нвдеемся, что в скором будущем она будет издана также на русском, украинском и молдавском языках.

Г. М. ГРИГОРЯН

ԱՌԱՋԱԲԱՆ

Բաղրատունյաց թագավորության անկումից հետո, XI դարի երկրորդ կեսին, ֆիզիկական ընաջնջումից ղերծ մնալու ձգտումով Հայաստանից դեպի օտար երկրներ արտագաղթեցին հազարավոր հայ ընտանիքներ: Նրանց մի մասը մեկնեց Կիլիկիա, իսկ տասնյակ հազարանոց մի խումբ, զանազան ճանապարհներով զրկանքներ կրելով, նախ՝ ապաստանեց Վոլգա գետի ստորին ջրաբաշխում, Աստրախանում, ապա՝ հաստատվեց Մեծ Բուլղարում, Ազաարայում, Կազանում և այլուր:

1299թ., այլևս չդիմանալով թաթարական հալածանքներին՝ հայերը պատվիրակություն ուղարկեցին Ղրիմում հաստատված ջենովական իշխանությունների մոտ և խնդրեցին՝ իրավունք տալ բնակվելու թերակղզու հարավարևելյան ափերին[1]: Չնայած թաթարական իշխանությունների դիմադրությանը, նրանց հաջողվեց 1330թ. հասնել Ղրիմ, ուր արդէն տեղակայվել էին Տրապիզոնի վրայով եկած կիլիկեցի շատ հայեր:

Անդրադառնալով Ղրիմի տարածքում հայերի բնակության ժամանակաշրջանի խնդիրներին, ակադեմիկոս Լ.Ախէյկյանը «Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա» մեծարժեք ուսումնասիրության մեջ չի առարկում, որ Աարայ-Բաթուի (Նոր Աարայի) անկումից հետո հայ բնակչության մի մասը փոխադրվեց Ղրիմ և նոր շունչ հաղորդեց «այդ թերակղզու հայկական հին դաղթօջախներին»[2]: Սակայն նա հիմնադրուրկ է համարում Մարաիրոս Ղրիմեցու և այլոց վկայությունն այն մասին, թե իբր հայերը Ղրիմում հաստատվել են զենքի ուժով, թաթարների դեմ կռվելով: «Թաթարների դեմ հայերի զինված ընդհարումը 14-րդ դարի 30-ական թթ., դրում է ուսումնասիրողը,- բացառված է»[3]: Նա անընդունելի է համարում նաև այն վարկածը, ըստ որի Ազաարայում հաստատված հայերը («իշխանք և ազնիւք և հաստարակ ժողովուրդք») «զայման կազելով ջենովացիների հետ, կռվելով թաթարների դեմ, դալիս հասնում են Ղրիմ»[4]:

Ապացուցված իրողություն է, որ Ղրիմում հայերը հաստատվել են ջենովացիներից ու թաթարներից շատ ավելի վաղ: Այս կարծիքը բաժանում են Ֆ. Բրունը[5], Վ.Միքայելյանը[6], Խ.Փորքշեյանը[7] և ուրիշներ:

Ե. Շահազիզը ենթադրում է, որ հայերը մուտք են դործել Ղրիմ՝ դեռևս X դարում, սակայն թերակղզու հարավ-արևելյան ափերին զանգվածաբար հաստատվել են 1330-ական թվականներին[8]:

Պատմադիտական դրականության մեջ տարածված է այն վարկածը, ըստ որի ղրիմահայերը կամ նրանց մեծադույն մասը եկել են Անիից: Այս տեսակետին նոր մեկնարանություն է տալիս ա-

---

1 Ե. Շահազիզ. Նոր Նախիջևանը և Նոր Նախիջևանցիք. «Ազգագրական հանդէս», գիրք 7-8, Թիֆլիս, 1901, էջ 13:

2 Լ. Ս. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա», «Բանբեր Մատենադարանի», N 13, Երևան, 1980, էջ 15:

3 Նույն տեղում, էջ 26:

4 Լ.Ս. Խաչիկյան, Հայերը Հին Մոսկվայում..., էջ 26: Լ.Ս. Խաչիկյանը Ղրիմի հայոց գաղթօջախի պատմությունը ուսումնասիրում է չորս շրջափուլի (տե՛ս նույն տեղում, էջ 25):

5 Տե՛ս Ф.Брун Черноморье, ч. 11 , Одесса,1880, с.137.

6 Վ.Ա. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964 էջ 41-60:

7 Խ.Ա. Փորքշեյան, Ե՞րբ է կատարվել հայերի մուտքը Ղրիմ, ՊԲՀ. 1962, N.2, էջ 104-117:

8 Ե. Շահազիզ, նշվ. աշխ., էջ12-13:

կաղ. Լ.Ախաչիկյանը: Նա գրում է. «Հավաստացած ենք, որ, օրինակ, ղրիմահայերը իրենց շազկապել են Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի հետ ոչ միայն փառավոր անցյալով պճնվելու համար, այլև հենվելով պատմական հիմք ունեցող որոշ իրողության վրա, Անիի մեծահարուստ վաճառականներն էին առաջին հերթին (Արծնի, Կարսի, և հայկական այլ քաղաքների հետ միասին), որ գործարար կապեր հաստատեցին Ղրիմի ծովափնյա քաղաքների հետ, որոնցից շատերում սահմանեցին հենակետեր, պահեստներ, մշտական կայաններ, որոնք հետագայում գարձան կենսունակ գաղթօջախներ»[9]:

Ավանդություն է պահպանվել այն մասին, որ Անիի բնակիչները կառուցել են 1001 եկեղեցի[10]: Ինչպես կտեսնենք ստորև, նույն ավանդությունը, գրեթե առանց փոփոխման, պահպանվել է նաև ղրիմահայերի մոտ: Միայն այն փաստը, որ Կաֆա քաղաքում հայերը կառուցել են 45 եկեղեցիներ, իսկ դա սկզբնաղբյուրներով հավաստված իրողություն է, պետք է հավատալ նաև ղրիմահայերի՝ Անիից գաղթելու վարկածին:

Այսպես է առաջացել Անիում կառուցված 1001 եկեղեցու ավանդապատման ղրիմյան տարբերակը:

Ղրիմահայ քաղգործ վարպետներն իրենց կերտվածքներում ձգտում էին պահպանել ազգային ճարտարապետության և հատկապես քանդակագործության ինքնատիպ հորինվածքները: Հայաշունչ խաչքարերի հյուսկեն մանրաքանդակները, բուսական և երկրաչափական զարդամոտիվները, վիմական ընագրերի ոճական առանձնահատկությունները պահպանվել են ոչ միայն հայկական, այլև տեղական ժողովուրդների կոթողային կառույցների վրա: «Հայ վարպետներն իրենց արվեստով հարստացրին տեղական մշակույթը»[11]: Դրա վառ ապացույցն են թերակղզու տարածքում նրանց թողած հոյակապ հուշարձանները[12]: Հովհ. Տեր Աբրահամյանը[13], Խ.Քուչուկ- Հովհաննիսյանը[14], Ե.Շահազիզը և ուրիշներ, վկայակոչելով Թեոդոսիայի Ս. Աստված եկեղեցու խաչքարերից մեկի արձանագրությունը, որը Մ. Բժշկյանի կողմից թվագրվել է ՆՀԶ (1027)[15], կարծում են, թե հայ ազգաբնակչությունը Ղրիմում հաստատվել է հիշյալ թվականից շատ ավելի վաղ:

Մ.Բժշկյանի այս վարկածը հիմք է ընդունել նաև Վ. Ա. Միքայելյանը[16]: Երախտավոր գիտնական Մ.Բժշկյանի թվագրությունը ավյալ դեպքում սխալ վերծանության հետևանք է և ուղղվում է պրակիս N.31 արձանագրության նույնական ընդօրինակությամբ:

Մարմարակերա խաչքարի վրա կարդում ենք.

---

9 Լ.Ս. Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում, էջ 28:

10 Այս վկայությունը պահպանվել է նաև վրաց աղբյուրներում (տե՛ս История и восхваление венценосцвв. Грузинскии текст перевел, предисловием и примечаниями снабдил действ. член АН ГССР, проф. К.С. Кекелидзе, Тбилиси, 1954, с. 20.

11 Е. Крикун, Архитектурные памятники Крыма, под редакцией О.И.Домбровского, Симферополь, изд. „Таврил„ 1977, с. 20-23.

12 Նույն տեղում, էջ 20:

13 Հովհ. Տեր-Աբրահամյան, էջ 170:

14 Кучук-Иоаннесов, Старнные армянские надписи..., с. 38.

15 Մ.Բժշկյան, էջ 347: Տե՛ս նաև՝ Փ.Երուն, նշվ. աշխ., էջ 139:

16 Վ.Ս. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, նույնի՝ На Крымской земле, Ереван, 1974, с.12) տե՛ս նաև И.И. Бабков, նշվ. աշխ. էջ 1385:

ԲԱՐԷԽԱԻՍ Է ԽԱՋՍ ՄԿՐՏԻՉ ՍԱՐԿԱՒԱԳԻՆ, ՈՐ ԸՆԿՂՄԵՑԱՒ Ի ՄԷՋ ԾՈՎԻՆ Զ ԹՎ[Ա] [Կ] [Ա] ՆԻՆ ԼԸ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ[17]:

Մ. Բժշեյանը արձանագրության 3-րդ տողի Զ-ն (900-ը) չի նկատել և «ԹՎԱԿԱ.ՆԻՆ» բառի մերձին Ն-ն կարդացել է իբրև առանձին միավոր՝ ասանալով Ն (400)+Հ (70)+Զ (6) = ՆՀԶ (1027): Իրականում արձանագրությունը թվագրվում է ՋԼԶ, այսինքն՝ 936+551=1487 (Տե՛ս լուսանկարը): Ե. Շահազիզը նշում է, որ Նոր Նախիջևանում շարադրված ճեռագրերից մեկի հիշատակարանի վկայությամբ՝ ղրիմահայերը թերակղզու տարածքում կառուցում են «հարիւր հազար տուն և շատ զօրանում ու բազմանում են»[18]: Նրանք եղել են «հինդ հարիւր հազար հոգուց ոչ պակաս»[19], կառուցել են հազար վանք ու եկեղեցի[20], բազմաթիվ կրթամշակութային օջախներ: Հոգևոր պատուհասների այս քանակը թերես չափազանցություն է. սակայն անժխտելի է. որ ղրիմահայերը, իրոք, մեծապես նպաստել են այս տարածքի տնտեսական կյանքի և նյութական մշակույթի զարգացմանը: Ա. Լ. Յակորսոնը նկատում է. որ «... Անդրկովկասի ժողովուրդները. առաջին հերթին հայերը. մեծ ներդրում ունեն միջնադարյան Ղրիմի քաղաքային մշակույթի մեջ»[21]:

Ղրիմի տարածքում բացված հայկական կրթամշակութային օջախները զգալի դեր կատարեցին հայագիտության գործում: Դեռևս XIV դարում մեծ համբավ ունեին գրիչ Նաթերը, նրա որդիներ Սվեհիսը, Ստեփանոսը, Հովհաննեսը և Գրիգորը[22], շնորհաշատ Գրիգոր Սուքասանցը, Սիմեոնը և այլք[23]: Ս.Խաչ վանքի հովանու ներքո առաջացան նորանոր գրչօջախներ ու դպրոցներ: Ս.Խաչի մատենագիրներից էին Ստեփանոս Թոխաթցին, Օգսենար[24]: Նշանակալից դեր խաղաց Կաֆայից ոչ հեռու գտնվող ս. Անտոն վանքի դպրոցը, որի աներից էին գրիչներ Թադեոս (Ստավածատուր) Սրբահամենցը և Քրիստոսատուրը[25]:

Բուռն զարգացում ապրեց բանաստեղծական արվեստը: Հանգեպ եկան գրոգներ և տազատացներ Խաչատուր Կաֆայեցին (Խաստեկ Երեց, 1610-1686), Վարդան Կաֆայեցին (1615-1712), Վրթանես Կաֆայեցին (XVI դ.), Ստեփանոս Թոխաթցին (XVII դ.) Մարտիրոս Ղրիմեցին[26] և ուրիշները:

Հայ ազգարնակչության հիմնական զանգվածն ապրում էր Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա), Սուրխաթ (Սուրբ Խաչ, այժմ՝ Սաարի Կրիմ), Խազարաթ (կազարաթ, այժմ հիմնովին կործանված), Սուրոժ (այժմ՝ Սուդակ), Սդմեչիդ (այժմ՝ Սիմֆերոպոլ), Գեոզլև (Գեսզլևէ, այժմ՝ Եվպատորիա), Օր-

---

17 Հ.Ա. Օրբելին ՆՂԶ (1047)-ի փոխարեն ստաջարկել է ընթերցել ՌԶ (1557), որը նույնպես սխալ է (տե՛ս И.А. Орбели, Избранные труды, Ереван, 1963, с. 214, примеч. 1). Արձանագրության թվականը ճիշտ են վերծանել Ս.Տ. Սալումյանը և Ա.Մ. Ենգոյանը (տե՛ս Վիմագրական շտկումներ, «Լրարեր հասարակական գիտությունների» 1973, N.11 էջ 77.

18 Շահազիզ. նշվ. աշխ., էջ 17:

19 Նոյն տեղում:

20 Նոյն տեղում:

21 А.Л.Якобсон, Средневековый Крым,М.-Л., 1964, с. 116.

22 В.А.Микаелян, На Крымской земле, с.114-115.

23 Там же.

24 А.Н.Гаврилова. Хачкары из фондов феодосийского краеведческого музея. II Международный симпозиум по армянскому искусству, Ереван,1978, с. 4-5.

25 В.А. Микаелян, На Крымской земле, с. 118-125.

26 Ա.Ա. Մարտիրոսյան, Մարտիրոս Ղրիմեցի, Երևան, 1958:

բազար (Արմյանսկի Բազար, Արմյանսկ) քաղաքներում ու Թոփսի (Թոփլի, այժմ՝ Տոպոլեվկա), Բախչիսելի (այժմ՝ Բոգատոյե), Օրթասլանկ (այժմ՝ Զեմլյանիչնոյե), Սալա (այժմ՝ Գրուշևկա) և այլ գյուղերում: Հավասար տեզեկությունների համաձայն հայերը մեծ թիվ են կազմել Կաֆա, Սուրխաթ, և Սուրոժ քաղաքներում[27]: Ջենովական ապրյուրներում Ղրիմի հարավարևելյան հատվածը կոչվում էր Armenia Maritima - Ծովային Հայաստան[28]: Ուսումնասիրողներ Ե. Զեակինը և Ն. Պենչենկոն իտալական սկզբնապրյուրների հիման վրա եկել են այն եզրակացության, որ թերակղզու տնտեսական կարդացման մեջ «գլխավոր գերը Ղրիմում, ըստ երևույթին, կատարել է հայկական առևտրական բուրժուազիան»[29]:

Ղրիմահայ ազնվական դասն ամեն կերպ աշխատում էր կուլ չգնալ ջենովացիներին և պահպանել ներքին ինքնավարության իրավունքը: Այս առումով որոշակի գեր խաղացին Մուղալենք, Դարեջաններ, Աղամալենք և այլ ընտանիքները[30]: Հետագայում այստեղ մեծ համբավ ձեռք բերեցին Բագրատունյաց տոհմի շառավիղները: XVII դարի սկզբին, Շահ-Աբասի տեղահանությունների պատճառով հայրենիքից հեռացան և Ղրիմ տեղափոխվեցին Արևելյան Հայաստանի մանավորապես Ծղուկ, Գողթն և Ապուլիս գավառների, բամբիով ընտանիքներ: Քրիստոնյա ազդերի հախուռն հոսքը դեպի Տավրիկյան թերակղզի, բնականարար, սկսեց անհանգստացնել տեղի թաթարական իշխանություններին:

1448թ. Ղրիմի Հաջի-Գիրեյ խանը պատերազմեց ջենովացիների դեմ, սակայն չկարողացավ հազթել, քանի որ հայերը միարանել էին վերջիններիս և ուժգին դիմադրություն էին ցույց տալիս: Հաջի Գիրեյին հաջորդած Մենգլի-Գիրեյը օգնություն խնդրեց օսմանցիների Մուհամմեդ Բ Ֆաթիհ սուլթանից (1451-1481) և ծովակալ Կեաիկ- Ս.Հմամղ. փաշայի նավատորմիզով չախչախեց ջենովացիներին: Թուրքերի ձեռքն անցան Սուրոժի (Սուդակի) հզոր ամրոցը, Բալըկլավան, Կերչը և այլ քաղաքներ, սակայն Կաֆան, շնորհիվ Ֆրանկհիսար ե. Հայոց բերդ ամրոցների, մնաց անառիկ: Հետագայում ջենովացիները լքեցին.դիրքերը և դիմեցին փախուստի: Քաջարար կռվող հայերին Կեաիկ փաշան առաջարկեց հանձնվել: Անհավատար կռվում հերոսի մահով ընկան բազում հայորդիներ:

1475 թ. հունիսի 20-ին թուրքերը ներխուժեցին Կաֆա և սկսեցին կոտորածն ու թալանը[31]: Նույն բախտին արժանացան հայարնակ Սուրխաթ և Խազարաթ քաղաքները[32]: Անգթաբար ոչնչացվեցին կրթամշակութային օջախները, կործանվեց Ս.Խաչ վանքը՝ ղրիմահայոց գ.պրության

---

27 Լ.Ս.Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում..., էջ 33-34: Հմմտ. Խ.Ա. Փորքշեյան, նշվ. աշխ. էջ 104-117: Տե՛ս նաև՝ Ф.Брун, նշվ.աշխ., էջ 140:

28 Լ.Ս. Խաչիկյանը նշում է, որ Ղրիմի արևելյան ծովափը կոչվել է նաև «Հոնաց աշխարհ»: Նա հակված է կարծելու, որ Անիի մեծահարուստ «Սմբատորենց Սույեմայի որդի Տիգրան Հոնենցը» այդ տոհմանունն է կրել «Հոնաց աշխարհի» հետ առնչվելու կապակցությամբ (Տե՛ս Լ.Ս. Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում..., էջ 28, ծանոթ. 67, հմմտ. Դիվան հայ վիմագրության, ճ.I, Անի քաղաք և շրջակայք, կազմեց Հ.Ա. Օրբելի, Երևան, 1966, էջ 63..

29 տե՛ս ,,Исторические Записки,, 1938, Н. 3, с. 127

30 Ե.Շահազիզ.նշվ. աշխ., էջ 21, В.А. Микаелян, На Крымской земле, с. 54.

31 А.Л. Якобсон, նշվ. աշխ., էջ 108:

32 Հովհ. Տեր- Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 62-66: Տե՛ս նաև՝ Հ. Մանանդյան, Հր. Աճառյան, Հայոց նոր վկաները, էջ 685-686:

խոշոր կենտրոնը:

Թուրքերի տիրապետության շրջանում անհամեմատ ծանրացավ քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես ղրիմահայերի, իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը[33]: Ստեղծված դաժան պայմանները պատճառ դարձան նոր արտագաղթերի՝ դեպի Ռուսաստան, Ուկրաինա, Լեհաստան, Մոլդովա և այլ երկրներ: Այս ժամանակաշրջանում արգելն ամայի դարձան էին առաջացել Լվովում, Կամենիցում[34], Ցաղկովեցում, Ստանիսլավում, Կուտիում, Մնյատինում, Բերեժանում, Տիմեննիցայում, Դորոգենկայում, Գալիչում, ինչպես նաև Զեռնովցիում, Քիշնեւում, Բելցիում, Օրգեեւում և այլուր: Ընդարձակվել էր Սպքրմտնի հայոց գաղթօջախը Դնեստր գետի ափին, համալրվում էր հայոց համայնքը Կիևում, որի հայ բնակիչների մասին ամուլդ տեղեկություններ են պահպանվել Կիև-Պեչորյան «Հարանց վարք»-ում[35]:

Հետագարձ հայացք գցելով մեր ժողովրդի դժալի մի հատվածի անցած տարաբախտ ուղուն, որոշակիորեն տեսնում ենք, թե ինչպես ուշ միջնադարի թոհուբոհում անգամ, ազգերի մերձեցման և ուծացման պայմաններում՝ Ռուսաստանի հաըավում մնացած ղրիմահայությունը երբեք չկորցրեց իր ազգային կերպարանքը, լեզուն և սեփական մշակույթը: Միայն Մաշտոցի անվան Մատենագարանում այժմ պահպանվում են շուրջ 300 հայկական ձեռագիր մատյաններ, որոնք գրվել և ընդօրինակվել են Ղրիմի քաղաքներում ու գյուղերում[36]:

Հասարակական-քաղաքական կյանքը Ղրիմում այլ ընթացք ստացավ XVIII դարում, երբ թերակղզին անցավ Ռուսաստանի տիրապետության ներքո: Հնարավորություն ստեղծվեց զարկ տալու արգյունարերությանը, երկրագործությանն ու առևտրին: Այս ոլորաններում առաջատար գերքեր գրավեցին Սահփանյանները, Օրերյանները, Քուշնարյանները, Սպենգիարյանները, Սեֆերյանները, Սերերըյակյանները, Բենգլիևները, Միրզայանները, Նալրանգյանները, Թոփալյանները: Գործարաններ հիմնեցին Մոմջյանները, Ռաֆայելյանները, Դևորգյանները, Սրապիոնյանները և այլք[37]:

Մ.Կյումյուշհանեցու և Մ. Բժշկյանի աշակերտ Դարրիել Սյվաղովսկու նախաձեռնությամբ և Նոր Նախիջևանի քաղաքագլուխ Հ.Խալիպյանի ծախսով 1858 թ. հոկտեմբերի 14-ին Թեոդոսիայում բացվեց Խալիպյան ուսումնարանը[38], որի եռահարկ շենքը (ճարտարապետ Ս. Սերգիսյան) ոչնչացավ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ ռմբակոծության պատճառով:

Ռուս ականավոր գրող, ազգագրագետ- ճանապարհորդ Սլ.Սֆանասև-Զուժրինսկին (1817-1875) իր «Ճամփորդական նոթերում» Թեոդոսիայի Խալիպյան ուսումնարանի մասին գրել է.

---

33 Հայոց նոր վկաները, էջ 329-331, Մ.Բժշկյան, էջ 342:

34 Ղ.Ալիշան, Կամենից, Վենետիկ, 1896, Վ.Ռ.Գրիգորյան, Կամենեց- Պոդոլսկի հայկական դատարանի արձանագրությունները, Երևան, 1963:

35 Л.М. Меликсет-Бек, Древняя Русь и Армения. ,,Сборник трудов Инстнтута языка АН Арм. ССР,, т. I, Ереван. 1946, с. 97-151. Г.М. Григорян, Армянские надписи Киевского собора св. Софни, ,,Вестник общ. наук АН Арм. ССР,, 1979, N 4, с. 85-93.

36 *Э.М. Корхмазян, о времени постройки армянскои церкви св. Ствфана в Феодосии. ,,Вестник общ. иаук АН Арм. ССР,, 1975, N. 2, с. 91.*

37 Վ.Ա. Միքայելյան, Ղրիմ. Հայ ժողովրդի պատմութիւն, հ. 6, Երևան, 1981, էջ 652-65: Նոյնի՝ Ղրիմի հայկական գաղութի պատմություն (1801-1917), Երևան, 1970, նույնի՝ На Крымской земле,. 179. Ղրիմահայոց տասնմություն. Երևան, 1989, էջ 278:

38 Տե՛ս Պատմություն Խալիպեանոս ուսումնարանիս ազգիս Հայոց (1858-1871), շարագրեալ ի Գարրիէլէ արքեպիսկոպոսէ Այվազեան, Տփխիս, 1880:)

«Բայց հնության փոշոտ մնացորդների փոխարեն ևս տեսա ավելի մխիթարով բաներ, հատկապես հայկական ուսումնարանին կից եզած աքանչելի տպարանը: Այս ածականը մի ընդունեցեք իբրե. թեթևակի շլացնող բառ. Թեոդոսիայի տպարանը իր կառուցվածքով, տառատեսակների առատությամբ և շքեղությամբ կարող է մրցել Օդեսայի ցանկացածդ տպարանի հետ: Ես տեսա առանձնատիպեը՝ երեք լեզուներով՝ ռուսերեն, ֆրանսերեն և հայերեն... Զեզ հայտնի է. որ Թեոդոսիան մեր նշանավոր Սյվազովսկու հայրենիքն է: Սյստեղ է տեղափոոխվել և տպրում նրա գիտական եզրայրը՝ Գարրիել վարդապետը, որը զեկավարում է Նախիջևան-Բեսարարիայի հայոց թեմը. մարգ, որ ունի բազմակողմանի գիտելիքներ և ամսագիր է հրատարակել Փարիզում: Նա է համոզել Նախիջեանցի մեծահարուստ վաճառական Խալիպյանին՝ Թեոդոսիայում հիմնագրելու ուսումնարան՝ գիմնազիայի ասաիճանով. և երբ արդեն հարցը վճռված էր, թուլլավություն խնդրեց հրատարակել... ամսագիրը հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով... Այստեղ սատցվում են ռուսերեն շուրջ քսան, նույնքան ֆրանսերեն և հայերեն տասը թերթեր ու ամսագրեր...»[39]:

Հետագայում մի շարք ուսումնարաններ ու գպրոցներ բացվեցին Սիմֆերոպոլ, Եվպատորիա և այլ քաղաքներում:

Ղրիմահայ գաղութի կյանքը վերելքներով ու վայրէջքներով գոյատեեց շուրջ յոթ գար: Ուկրաինայի և Մոլգովայի հայկական (և հայերի մասին այլաեկու) արձանագրություննները հիմնականում ունեն շինարարական_հիշատակագրային բնույթ: Նրանցում սուսյգ վկայություններ են պահպանվել հայորդիների կառուցած տաճարների, կրթամշակութային օջախների, ճանապարհների, ազբյուր_ջրանցքների, ինչպես նաե. տեղի ունեցած ողբերգական գեպքերի մասին:

Սիմֆերոպոլի Հայկական (զինվորական) գերեզմանոցի մի շարք հուշակոթողներ տեղացի հայերի ջանքերով կանգնեցված են զոհված հայ կամավորականների տճյունների վրա: Վիմագրերի համաճայն՝ նրանց մի մասը Շապին_Գարահիսարից են, որոնք իրենց կյանքը «աւանգել են» «ազատութեան գազափարի համար» «ի կամաւորութեան»:

Հայկական գաղութների արձանագրությունները լեզվաոճական տեսակետից ներկայացնում են խայտաբղետ պատկեր. կայուն և նորմավորված չէ ընագրերի շարահյուսությունը, փորագրված են ուղղագրական սխալներով, երբեմն անհարկի կիրառված են աւ երկհնչյունի՝ Օ-ի վերածվելու կանոնները (զաւակաց-զօակաց, շինեցաւ-շինեցօ և այլն): Զգալի թիվ են կազմում այլ լեզուներից կատարված փոխառությունները, որոնցում գերիշխում են թուրք-թաթարական և գիչեզական անձնանունները (Եօլ Մելիք, Խանի Պիքե, Խութլուշահ, Կուլաֆչա, Սովունչ Պուզա և այլն): Հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում տեղի ունեցած իրագարձություններն իրենց կնիքն են գրել Լեհատանի, Ուկրաինայի և Մոլգովայի Հայ ազգարնակչության վրա:

Եթե մինչև XVII գարը, այսինքն՝ մինչև կաթոլիկացումը, հայերը կրում էին իրենց ազգին բնորոշ անուն-ազգանուններ, ապա այդ ժամանակից ատաիճանարար ենթարկվելով ուծացման, սկսեցին իրենց ազգանուններին կամ անուններին կցել կո (քո) կամ սկի և կամ ովիչ վերջավորությունները (Խաչքո, Կրեսքո, Զայկովսկի, Ժուլինսկի, Թորոսովիչ, Թումանովիչ, Վարգերեսովիչ, Մանուկեվիչ և այլն):

---

39 А. Афанасьев-Чужбинский, Дорожные записки. См. Город двадцати пяти веков. Литературно-художествввнный сборник о Феодосии, Составил П.Дегтярев, издательство „Крым„ Симферополь, 1971, с. 61

Ցաւովեցում տպրող Ավագյան դերդաստանի ժառանդները սկսեցին կոչվել Ավագովիչ, տպա նաև Ավագովսկի, իսկ կոմսությունն ընդունելուց հետո՝ Վակովսկի[40]:

Շատերը դրվեցին ոչ հարազատ անուն-ազգանուններով՝ Ադոկ Բարոնչ, Կայտան Կայսանովիչ, Խրիստափոր կամ Նիկոլայ Բեռնատովիչ, Կարլ Մրկուլի, Ռոշքա, Ռոմաշքան, Հոսքա, Մարմարոշ և այլն:

Մոլդովահայերից ոմանք ընդունեցին կաինա, Բալիոզ, Նեդրուշ և այլ ազգանուններ: Ռուսական միջավայրում այս երևույթը տեղի էր ունենում թարգմանության կամ հարմարեցման սկզբունքով՝ Աստվածատուր-Բոդդան (Թեոդոր), Մկրտիչ-Նիկիտա, Կարապետ-Կարպ, Հովհաննես-Իվան, Լուսեզեն- Լուկիան և այլն: Անուն-ազգանունների՝ տեղական միջավայրին հարմարեցնելու իրողությունը առավել ցայտուն է նկատվում հայ խոշոր առևտրական դասի ներկայացուցիչների մոտ: Օրինակ՝ Գյուլնազար Օռուխենցը դարձել է Նազար Օրեխովիչ, Հովհաննեսի որդիներ Աթանաս ու Բարսեղը կոչվել են Աֆանասի և Վասիլի Իվանովներ, Պողոս Զեննենցը՝ Պավել Զինովև, Աստվածատուրի որդի Եղիան՝ Իլյա Բոդդանով[41]: Առանց ուղեկցող նյութերի, դժվար է կռահել, որ Ռուսաստանի խոշոր առևտրական կապիտալի ներկայացուցիչներ Իվան և Վասիլի Մակարովները, Դավիդ Գրիդորևը, Բոդդան Բոդդանովը, Աերդեյ Իվանովը, Մաքսիմ Ֆիլիպովը, Պետր Իվանովը ծագումով եղել են հայեր[42]: Մի շարք անձնանուններ սկսում են կիրառվել Թուրքերեն վերջավորություններով. Խալաճեանը դառնում է Խալաճօղլու, Արարեանը՝ Արարօղլու և այլն:

Լեհաստանում պարոն հայացած բառի փոխարեն լայնորեն գործածվում է բան (պան-պարոն, պոնի-տիկին) ձևը:

Արժանադրություններում հիշատակվում են ամենաարբեր ասպարեզներում գրազված անձինք. հոգևորականներ, առևտրականներ, պետական գործիչներ, զինվորականներ, կալվածատերեր, դիտության ու մշակույթի գործիչներ, ճարտարապետներ, նկարիչներ, ինչպես նաև արհեստագործներ՝ ջուլհակներ, ոսկերիչներ, հյուսներ, դերձակներ, դարբիններ, դինեզործներ և այլն:

Ներկա պրակում զետեղված է ավելի քան 700 արժանադրություն, որի կեսից ավելին հավաքված է Ղրիմի տարածքից (398 արժ.), ընդ որում՝ 306-ը թվագրված է (XIVդ.-19, XVդ.-56, XVIդ.-30, XVIIդ.-31, XVIIIդ.-48, XIXդ. -84, և XXդ. սկզբներից-38): Կիևից ընդօրինակվել է 36 արժանադրություն, որից 26-ը՝ թվագրված (XVIդ.-13, XVIIդ.- 7 XVIIIդ.-6), Լվովի մարզից՝ 102, որից 83 -ը թվագրված (XIIIդ.-1, XVդ.- 3, XVIդ.- 5, XVIIդ.- 29, XVIIIդ.-21, XIX դ.-16, XXդ.-6), Տեռնոպոլի մարզից՝ 5, որից 4-ը թվագրված (XVIIդ.- 3, XVIIIդ.-1), Իվանո-Ֆրանկովսկի մարզից՝ 21 (թվագրված են XVIII-XXդդ.), Խմելնիցկու մարզից՝ 20 (XV-XXդդ.) Բուկովինայից /Չեռնովցիից/՝ 5 (XIX -XXդդ.), Վիննիցայի մարզից՝ 2 (XIXդ.), Օդեսայի մարզից՝ 65 (XV-XXդդ.), Մոլդովայից՝ 109 (XVIII-XXդդ.):

Այն բնագրերը, որոնք ունեն միևնույն բովանդակությամբ ոուսերեն կամ այլալեզու տարբերակներ, մասնակի բացառությամբ, չեն մտցված ընդհանուր համարակալման մեջ. դրանք տրվում են եթահամարներով՝ անուն- ազգանունների փոփոխությունները ցույց տալու կամ

---

40 «Արարատ», 1902 մարտ-ապրիլ, էջ 290:

41 Լ.Ս. Խաչիկյան. Հայերը հին Մոսկվայում..., էջ 71:

42 Նույն տեղում, ծանոթ. 199:

լրացուցիչ աեղծկութիւնները քաղելու նպատակով: Օրինակ՝ հայերեն ընադրում Արգար է, ռուսերենում՝ Մակար, Մելքոնը՝ Եմելյան, Թորոսը՝ Տարաս, Դժխուհին՝ Նաասյա և այլն: Այն արձանագրութիւնները, որոնց մատենագիտութիւնը չի արված՝ հրատարակվում են առաջին անգամ կամ պարագապես մեզ ծանոթ չէ այդպիսիների հրապարակման փաստը:

Հետագայում մի շարք ուսումնարաններ ու գպրոցներ բացվեցին Սիմֆերոպոլ, Եվպատորիա և այլ քաղաքներում:

Ղրիմահայ գաղութի կյանքը վերելքներով ու վայրէջքներով գոյատեւեց շուրջ յոթ գար: Ուկրաինայի և Մոլդովայի հայկական (և հայերի մասին այլաղեղու) արձանագրութիւնները հիմնականում ունեն շինարարական-հիշատակագրային բնույթ: Նրանցում առույգ վկայութիւնները են պահպանվել հայորդիների կառուցած աաճարների, կրթամշակութային օջախների, ճանապարհների, աղբյուր-ջրանցքների, ինչպես նաև աեղի ունեցած ողբերգական գեպքերի մասին:

Սիմֆերոպոլի Հայկական (ղինվորական) գերեզմանոցի մի շարք հուշակոթողներ աեզացի հայերի ջանքերով կանգնեցված են գոհված հայ կամավորականների աճյունների վրա: Վիմագրերի համաձայն՝ նրանց մի մասը Շապին-Գարահիսարից են, որոնք իրենց կյանքը «աւանդել են» «ազատութեան գաղափարի համար» «ի կամաւորութեան»:

Ինաախառւաի վիմագրության բաժնում ապագրության է պատրաաավում հայ գագթավայրերի արձանագրութիւնների երկրորդ պրակը, ուր գեաեղված են լինելու Ռուսաաանի Դաշնության աարածքում եղած վիմագրերն ու թանգարանային իրերի մակագրութիւնները:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ալիշան- Ղևոնդ Ալիշան. կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ, հաւաստչեայ յաւելուածովք, Վենետիկ, 1896:

Բժշկյան- Մինաս Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան և յայլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, շարագրեալ հանգերձ ղանաղան բանասիրական տեղեկութեամբ, Վենետիկ, 1830:

Ս.Թորամանյան- Ա.Խ.Թորամանյան, Մոլդավիայի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1986:

Սեւիանե- Խորէն ծայրագոյն վարդապետ Սեւիանէ, Ղրիմի Ս.Խաչ վանքը, ՍՊր, 1891:

Տեր-Սբրահամյան, Բ.- Յովհաննէս Տէր-Աբրահամեան, Պատմութիւն Երիմու հանգերձ աշխարհագրական և ուսումնական տեղեկութեամբք ղնախնի և ղայժմու բնակչաց ի Տաւրիոյ, մասն Բ, Թեոդոսիա, 1865:

«Լրարեր» - «Լրարեր Հայկական ԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների»:

«ՊԲՀ» - «Հայկական ԽՍՀ ԳԱ Պատմարանասիրական հանգես»:

Григорян- Григорян Г.М., Новые данные об армянских эпиграфических надписях Северного Кавказа и Крыма, ИФЖ, 1970, N.3.

Григорян, АНК- Григорян Г.М., Армянские надписи Киевского собора св. Софии, ,,Вестник общественных наук АН Арм. ССР,, 1979, N.4.

Дашкевич, АОП - Я.Р. Дашкевич, Армянские общественные печати на Украине (XVI-XVII вв.), ,,Вестник Матенадарана,, 1971, N. XI.

Дашкевич, АЧП -Я.Р. Дашкевич, Армянские частные печати на Украйне (XIV-XVIII вв.), ,,Вестник Матенадарана,, 1980, N. XIII.

Из истории- А. Х. Тораманян, Из истории строительной деятельности армян в Молдавии, М., 1991

Кучук-Иоаннесов - Х. Кучук-Иоаннесов, Старинные армянские надписи и старинные рукописи в пределах юго-западной Руси и в Крыму, М., 1892.

Меликсет-Бек-Л.М.Меликсет-Беков, Армянские древности в Аккермане (в Бессарабии), Тифлис, 1911.

ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

_ - Գծիկով բնագրի գծագրության մեջ նշանակված են համապատասխան քանակի եղծված գրերը.

... կետերով բնագրի գծագրության մեջ նշանակված են եղծված գրերը՝ անկախ նրանց քանակից.

⊓ փակագծով նշանակված են եղծված գրերի վերականգնումները.

⊔ փակագծով նշանակված են բնագրում փորագրողի բաց թողած գրերը կամ առանց հապավման նշանի սղումները (վերծանության մեջ).

[] _ փակագծով նշանակված են բնագրի մեջ եղած ավելորդ գրերը (վերծանության մեջ).

/ նշանով արվում է արձանագրության տողերի քանակը՝ վերծանության մեջ:

ԹԵՈԴՈՍԻԱ (ԿԱՖԱ)

Ղրիմահայոց հասարակական, անտեսական ու մշակութային խոշոր կենտրոնը եղել է Կաֆա (այժմ՝ Թեոդոսիա) քաղաքը[1], որն իրրև Արևելքի ու Արևմուտքի հանդուցակետ XIII-XV դդ. «մի շարք կողմերով առաջ էր անցել նույնիսկ Եվրոպայի ու Ասիայի կամուրջը համարվող Կոստանդնուպոլսից»[2]: Դեպի Եվրոպա առաքվող տրևելյան ապրանքների դերակշիռ մասն անցնում էր Կաֆայով, որտեղ դժալի դեր էին կատարում հայերը: Նրանք ընակվում էին Միհրդատ լեռան լանջերին, այժմյան «Կարանտինում» և նրա մերձակայքում: Պրոֆ. Վ.Ա. Միքայելյանը սկրնադրյուրներով պարզել է, որ դեռևս XIII դարի 60-ական թթ. Կաֆայում եղել է հայոց երեք եկեղեցի, մեկը՝ կործանված[3]: Ջենովական աղբյուրները վկայում են, որ XIV դարի սկզբներին հայ համայնքի եպիսկոպոսն այստեղ անց էր կացրել ջրմուղ[4]: Ջեռաղիր հիշատակարաններից մեկի վկայությամբ՝ 1305 թ. Ավետիք վարդապետ Կաֆայում կառուցում է Աերրորդության եկեղեցին, իսկ փոքր-ինչ հետո՝ քաղաքից ոչ հեռու, նաև վանք և Ա Աստվածածին անվամբ տաճարը[5]:

XIV դարի սկզբներին Կաֆայի լատին եպիսկոպոս Հերոնիմոսը Հռոմի պապ Հովհաննես 22-րդի հորդորանքով խռովություն սերմանեց քաղաքի համայնքի մեջ: Բաղմաթիվ խոսաումների դնով նրան հաջողվեց կաթոլիկ եկեղեցու հետևորդներ դարձնել Կաֆացի հայերի դժալի մի հատվածին: 1318 թ. Կաֆայի լուսին եպիսկոպոսը ջանքեր դործադրեց, որպեսզի հայ միաբարները (ունիթոռները) հիմնադրեին իրենց առանձին եպիսկոպոսությունը[6] հանձին Թադեոս եպիսկոպոսի: Փաստորեն ստեղծվեցին երկու հակամետ հոդևոր վիճակներ՝ ինքնուրույն եպիսկոպոսական աթոռներով ու կրթամշակութային օջախներով:

1439 թ. տվյալներով Կաֆան ուներ 70000 բնակիչ[7], որի մեկ երրորդը կազմում էին հայերը[8]: Կաֆայում թեև քաղաքական իշխանությունը դտնվում էր ջենովացիների ձեռքին, սակայն նրանց թիվը անհամեմատ փոքր էր. 1475 թ. տվյալներով՝ ջենովացիների քանակը չէր անցնում մեկ հազարից[9]:

Նկատի ունենալով թաթարական հորդաների տոպատակությունների անխուսափելի վտանդը, հայ աղդարնակչությունն այստեղ՝ Ջրանկհիսար ամրոցի մոտ, կառուցել էր նաև իր պաշտպա-

---

1 Տե՛ս И.А.Гольдшмитд, Кафа - генуэзская колония в Крыму в конце XIII-пол. XVвв. Автореф. дисс., М., 1952, с. 10.

2 Լ.Ս.Խաչիկյան. Հայերը հին Մոսկվայում.... էջ 22:

3 В.А. Микаелян. На Крымской земле, с.9, 15-16, 133-136, М.К.Старокадомская, Очерки по социально-экономической истории генуэзскои Каффы конца XIII-первои пол. XV вв., диссертация, М., 1950, с. 261.

4 Г. Айвазовский, Заметки о происхождении новороссиийских армян ЗООИД, N.VI, 1862, с. 552. Л.М. Меликсет-Беков. Старинные армянские надписи в музее общества истории и древностей в Одессе, Тифлис, 1912. с. 16.

5 В.А. Микаелян. На Крымскои земле, с. 8.

6 Там же, с. 65.

7 А.Л.Якобсон, Средневековыи Крым, с.109

8 В.А. Микаелян, На Крымской земле, с. 133-136. Э.М.Корхмазян, указ. раб., с. 99; ИТУАК. N.52, 1915, с. 168.

9 В.А. Микаелян, На Крымской земле, с. 21

նական ամրությունները (Հայոց բերդը), որոնց ավերակները պահպանվել և հասել են մինչև մեր օրերը[10]:

Գրավոր աղբյուրների համաձայն հայերը Կաֆայում կառուցել են 45 եկեղեցի, որոնցից 24-ը գործել են մինչև 1475 թվականը, այսինքն՝ մինչև թուրքերի ներխուժումը Ղրիմի թերակղզի[11]: Քանդչորս եկեղեցիների գոյությունը հավաստում է 1775 թ. Ղրիմ այցելած Պեյսոնելը[12]:

XVII դարի հեղինակ Բոպլանի հաղորդմամբ (նրա աշխատությունը Ուկրաինայի և Ղրիմի մասին առաջին անգամ լույս է տեսել 1650 թ.) Կաֆայում գործող եկեղեցիներից 33-ը պատկանում էին հայերին[13]: Դոմինիկյան Լմիգիո Դորտելի գր Ամկոլին, որ տասը տարի շարունակ աշխատել էր Կաֆայում իրրև պրեֆեկտ-ռատիկանապետ և լավ գիտեր հայերեն, հավաստում է քաղաքում 28 հայկական եկեղեցիների փաստը 1624 թվականին[14]: 1784 թ. Կաֆայի հատակագծում ներկայացված է հայոց առավել նշանավոր 7 եկեղեցիներ[15]:

Նոր Նախիջևանցի Մարտիրոս քահանան իր «Ժողովածու պատմագիրք» աշխատության մեջ (1787 թ.) անուն առ անուն հիշատակում է Կաֆայի հայոց 27 եկեղեցի.

Ս. Սարգիս, Հրեշտակապետաց, Ս. Նիկողոս, Ս. Հակոր, Ս. Խաչ, Ս.Լուսավորիչ, Ս. Հարություն, Ս. Գևորոս, Ս. Աստվածածին, Ս. Օգսենտ, Ս. Ս.Հարոն, Ս. Խունկ, Ս. Մինաս, Ս.Հովհաննես, Ս. Ստեփանոս, Ս. Համբարձում, Ս. Գևորգ («Քաշոտի»)[16]: Ս. Աննա, Ս. Թեոդորոս, Ս. Գևորգ, («Մյուսր»), Ս. Սիմեոն, Ս. Սիմեոն («Ներսինր»), Ս. Աստվածածին («Խոճինր»), Ս. Սոտաքել, Ս.Ուրբաթ, Ս. Երրորդություն, Ս. Աստվածածին («Կալինր»)[17]:

Ուսումնասիրելով Կաֆայի հայոց հոգևոր օջախների քանակի հարցը, Վենետիկի Մխիթարյան միաբանության անգամ Հ.Ա. Քուշներյանը պարզել է, որ այսօրեզ գոյություն ունեցած 45 եկեղեցիներից «մինչև անցյալ գարուն վերջերը գեռ. կանգուն մնացած էին քսանչորս եկեղեցիք», որոնցից 16-ը գանվել են քաղաքի պարսպապատերից դուրս[18]: Նա վկայակոչում է Ղրիմում գրված (Վարգան Կաֆայեցու) տեղագրական ընույթի պոեմներից մեկը, որտեղ հանվանե հիշա-

---

10 Նույն տեղում, էջ 28, 131-132:

11 Նույն տեղում:

12 Ch. Peysonel. De Traite sur le commerce de la Mer Noire, 1787. Տե՛ս П.Кеппен, Крымский сборник (о древностях южного берега Крыма и гор Таврических), СПб, 1837, с. 29

13 Боплан,Сочнненния, Описание Украины. Перевод с французского, 1832, с. 38.

14 А.Л.Якобсон, Армянская архитектура в Крыму (рукопись), с. 6. См. таюке: ЗООИД, т. 24, с.118-119

15 ЗООИД, т. VIII, 1872, табл. IV.

16 «Քաշոտը» XV-XVII դարերում Կաֆայի թաղամասերից մեկն էր (տե՛ս «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատ. Մեսրոպ վարդ. Նշանեան. Երուսաղեմ. 1915. էջ 80): Նրա րնակիչները. հավանարար. եկել էին Ձերքեզիայից. որը հին աղբյուրներում կոչվում էր Կասոխ կամ Կոսոխ (մանրամասն տե՛ս Լ.Ս.Խաչիկյան. Հայերը հին Մոսկվայում.... էջ 39-40. նաև՝ Ս.Հակորյան. Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 212, 217):

17 Հովհ. Տեր-Արրահամյան. էջ 69-70: Այս ձեռագիրը գտնվել է Թեոդոսիայի քահ. Մարտիրոս Տեր-Դավթյանի անձնական գրադարանում:

18 Հ.Ա. Քուշներյան. նշվ. աշխ.. էջ 141:

տակված են տյդ եկեղեցիները և նրանց մեծ մասի դտնվելու տուլդ վայրը[19]:

Քէֆէ, կասեն, մեծ քաղաք է[20]՝
Թաղաւորաց հաստատած է,
Քահանուչորս եկեղեցի է,
Քարերն ոսկեն սըրբատաշ է:
Քէֆէ քաղաք ծովահայեաց,
եկեղեցիքըն ղարդարած:
-Սուրբ Աննա բարձըր տեղ է,
Սատուածածին անոր քովն է.
Վարդապետաց աթաբան է.
Հաբաբճումն անկից վար է,
Սուրբ Թորոս բերդէն դուրս է,
Սուրբ Դևորդ ամենհաս է:
Հրեշտակապետ բերդէն ներս է՝
Սմենեցուն բարեխօս է:
Սուրբ Նիկողոս սարի վրայ է,
Սուրբ Ակոբ հայրապետ է,
Սուրբ Խուչն անկից վեր է՝
Փլիտոնէից մեծ նըշան է:
Սուրբ Սարդիս յոյժ մեծ ժամ է,
Մարաիրոս որդւովրն դինուոր է՝
եկեղեցեաց աթոռակալ է
Նախնեաց մերոց հաստատեալ է:
Սուրբ Լուսաւորիչ կաթողիկկ՝
Հաւատացելոց մեծ զարիսպ է,
Հայոց աղդի հայրապետ է,
Հերճուածողացըն վանիչ է.
Քէֆէ քաղաք ծովահայեաց՝
եկեղեցիքըն ղարդարած:
Սուրբ Յարութիւն բերդի քով է,
Քարէ խաչերն խիստ շատ է,
Տասը տեղան շըրջատատ է,
Մէկ քան դմէկն զայժաու է:

Սուրբ Սատուածածին նոր ժամ է,
Զորեք կողմը Հայոց տուն է՝
Հաւատացելոց մեղ յոյս է,
Դատաստանին բարեխօս է:
Սուրբ Անաոն վոքրիկ ժամ է,
Սուրբ Նիկողոս տեղըն տիւղ է,
Սուրբ Սիմէոն բերդէն դուրս է՝
Մէջի նահատակն երկուս է:
Քէֆէ քաղաք ծովահայեաց,
եկեղեցիքըն ղարդարած:
Սուրբ Քառասունք ոննըման է,
կաթուղիկէն իսանէ խան է,
վերնատունն բարձրըման է,
Երկոտասան առաքեան է:
Սուրբ կարապետ տեղըն ճոր է,
Քովըն, կասեն մեծ ջըրհոր է.
Սուրբ Մերկիանոս տեղըն սար է՝
Քաջամարտ դինուոր է:
Սուրբ Օվանես պատրն ցած է,
Զորեք կողմը պարըսպած է:
Սուրբ Օդսէնտ մեծ բըժիշկ է,
Սուրբ Օհաննէս տեղրն ճոր է,
կաթուղիկէն յոյժ յարմար է:
Սուրբ Ստեփաննոս վրկայ նախ է.-
Սա մէկ վոքրիկ մատուռ է.
Սուրբ Մինաան է ղօրաւոր.
Նորաշէն դեղեցիկ տաճար է,
Մէջըն կայ չորեսին կամար,
Ուխտավոր երթայ անհամար.
Քէֆէ քաղաք ծովահայեաց
եկեղեցիքըն ղարդարած»[21]:

---

19 Մատենադարանի N.2939 ձեռագրի 471 թերթում հիշատակվում են Ղրիմի հայոց 19 եկեղեցիներ, որոնք թուրքական սուլթանին վճարել են հարկ (տե՛ս В.А. Микаелян, На Крымской земле. с. 58, 122).

20 Տրվում է կնտադրական ուղղումներով:

21 Հ.Ռ. Հուշներյան. նշվ. աշխ., էջ 139-141: Համմտ. Մ. Բժշկյան, էջ 344. Г.М.Григорян, Новые данные об армянских эпиграфнческих надписях Крыма и Северного Кавказа. «Պատմա-բանասիրական հանդես». 1970. N.3, էջ 297-301.

Թեոդոսիայի փոքրածավալ կոթողներից շատերն իրենց տեղում չեն: Դրանց մի մասը ղրիմահայերը վերագաղթելու ընթացքում րերել են Նոր Նախիջևան, ապա նաև Երևան (գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում), մի քանիսը տարվել են Սանկտ-Պետերբուրգ՝ պետական էրմիտաժ[22], իսկ երեքը՝ Թեոդոսիայի նախկին գլխավոր ճարտարապետ Յու. Ֆ. Կոլոմիչևակու վկայությամբ՝ Հայրենական պատերազմի ժամանակ ուղարկվել են Գերմանիա[23]:

Այժմ ավելի քան հարյուր խաչքար գտնվում է քաղաքի երկրագիտական թանգարանում և Ս. Սարգիս, Ս.Հրեշտակապետաց եկեղեցիների պատերին: Կորածների թիվը մեզ անհայտ է: Մ. Բժշկյանի օրոք հնագիտական արժեք ներկայացնող նմուշներ, ընդ որում մարմարակերտ խաչքարեր, կուտակված են եղել Թաթարական մի մզկիթում[24]: Արդյո՞ք գրանք հետագայում տարվել են երկրագիտական թանգարան,- մեզ տուժդ հայտնի չէ: Բացի շինարարական լուծանդակությունից մի շարք վիմագրված կոթողներից, որոնցում նշվում է հուշարձանի անունը, մնացածների տեղը այժմ պարզել հնարավոր չէ, ուստի գրանք պրակում արվում են 1968 թվականի տեղադրության համաձայն, քանզի վերծանվել են այդ ժամանակ, այսինքն՝ մինչև Թեոդոսիայի քարեղարանի հիմնադրումը:

ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Թանգարանի բակում.

1. Խաչքար, սպիտակավուն կրաքարից. ստորին խաչթեւի տակ՝ 4 տող.

ԿԱՆԿՆԵՑԱԻ ՄԲ ՆՇԱՆՍ/ Ի ԲԱՐԵԽԱԻՍՈԻԹԻ[ԻՆ] ԽԱՉ/ԵՐԵՍԻՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴՈՑՆ/ ՅԱԿՈԲՇ[ԱՀ]ԻՆ ԵՒ ԱԲՐԱՀԱՄԻՆ]...

Ծանոթ. Վերջին տողի շարունակությունը եղծված է: Կոթողն այժմ գտնվում է քարեգարանում:

2. Հուշակոթող, դեղնավուն կրաքարից: Քուչուկ-Հովհաննիսյանի ուսումնասիրության ժամանակ աղուցված է եղել Ս. Սարգիս եկեղեցու արեմտյան պատի աջակողմյան խորշում, թերևս, այժմ գոյություն ունեցող ջենովական ղինանշանի մոտերքում: Վրան քանդակված են ջենովական հավասարաչափ չորս ղինանշանները (Մարինիին պատկանող), որոնք կերտված են վահանաձև, եվրոպական հորինվածքով: Մեջտեղի ղինանշաններից մեկին փորագրված է ուղղաթև խաչ, մյուսին՝ դրոշակակիր գառ: Ծայրերի ղինաշաններն ունեն թռչնակերպ քանդակներ (թերևս՝ ճայեր): Ստորև ուռուցիկ տառերով փորագրված է կցագրային 5 տող.

---

22 А.Л.Якобсон, Армянская средневековая архитектура в Крыму. ,,Византийский Временник,, 1956 N.8 с. 180.

23 А.Н. Гаврилова. Феодосийские хачкары. Тезисы V республиканской научной конференции по проблемам культуры и искусства Армении, Ереван, 1982, с. 280. Далее-Тезисы докладов.

24 Մ. Բժշկյան. Էջ 334, 348: Տե՛ս նաև՝ Ս.Թանդյան. Ը՞ր քաւի խոսք Թեոդոսիայի հայկական հնությունների մասին, «Հանդէս գրականական և պատմական». հ.Ե, 1894:

ՍՈՒԼՈՒԽՍ, ՈՐ Է ՋՐՈ ԱՄԱՆ
ԿԱՆԿՆ /ԵԱԼ ՋՍԱԼ ՀՈՓՈ (՞) ՀՆԾԱՆ:
ՊԼԱ[Ր/ՈՆ ԵՄԻՆ/ ԲԱՐԻՒՔ ԼՐՄԱՆ,
ՎԱՍՆ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈ ՅԻՇՄԱՆ
ՆԱԵԻ ԱԻՈՒՐՑ ԻՒՐՈ ԼՐՄԱՆ/.ԹՎ. ՊԻԱ (1372):

Ծանոթ.1. Քուչուկ-Հովհաննիսյանը գրում է. այս կոթողը կերտված է մարմարից: Սուլուխ թաթարական բառը նա թարգմանել է ջրհոր: «Պր Եմին_ը կարդացել է «պր. Եսաին» հնծան-ր՝ հնձան (ձ-ով):

2. Խնդրո առարկա արձանագրությունը 1928 թ. հրատարակել է Սկրժինսկայան (տե՛ս Jnscriptions Latines des colonies Genoises en Grimee „ Atti della Societa Ligure di Storia Patria, vol.. LVI, Genova, 1928.)

3. Լուսանկարը մեզ է տրամադրել Թեոդոսիայի երկրագիտական թանգարանի գիտաշխատակից Ալ. Ն. Դուրովը:

Հրատ. Кучук-Иоаннесов, 36, Древности Восточные, II, вып. III, М., էջ 68:

3. Հուշակոթող կրաքարից (0,64 0,68) րուսական և երկրաչափական զարդաքանդակներով. արձանագրության վերին ալ կողմում՝ ջենովական վահանաձև դերբը, որի վրա քանդակված է հավասարաթև խաչ: Բնաղիրը քայքայված և եղծված է: Այժմ գտնվում է երկրագիտական թանգարանի՝ դեպի րակ տանող մուտքի մոտ: Ունի 5 տող, որից գժվարությամբ վերականգնվում է.



Ա.ՂԲՈՒՐՍ, ՈՐ Է ՋՐՈՑ.../
ՍԼՐ[ԲՈՑՆ ՄԱՍՆ. ՍԱՑ ՑԻՇԱՏԼԱԿ[.../
[Ծ]ՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ ՑԻՇՄԱՆ.../
ՈՂՈՐՄԻ ՏԱ.ՑԷ ՔԱՍՊԷԿԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆ[ՈՂԱՑ]../
/ՈՂՈՐՄԻՍ Ա.Ս[Ա.]ՄԷՋԻԿ ՔՄ. ՌՂԲ (1643):

Ծանոթ. Կասկածելի է վերջին տողի ասա մէղիկ կապակցության իսկությունը: Արձանագ-

րության մեջ հիշված Խասպէկը, հավանարար, ղրիմահայոց նշանավոր բանաստեղծ Խասպեկ Եղրեցն է որը 1642 թ. հիշատակագրություն է թողել Ս.Խաչ վանքում (տե՛ս արձ. 213): Խնդրո առարկա քնատուի բովանդակությունը պարզ է. Խասպեկը կաֆայում աղբյուր է կառուցել իր ծնողների հիշատակին: Կոթողի նախկին տեղը մեզ անհայտ է: Հետագայում այն դանվել է Թեոդոսիայի Ջենովական ամրոցի Կոնսանտինի աշտարակ կոչվող կառույցի պատերի մեջ[25]*:*

3ա. Թեոդոսիա. Երկրագիտական թանգարանի նոր ցուցասրահ: Ափսե, պղնձյա, եղրին՝ շրջանաձև երկու աոդ.

ՍԱՐԳԻՍ/ՈՐԴԻ ՄԱՐԿՈՍԻ. ԹՎԻՆ ՌՄԾ (1761):

4. Խաչքար, սպիտակավուն կրաքարից, կոտրված, եղրերին՝ երկրաչափական զարդեր: Պահպանվել է աստրին մասը՝ 5 աոդ արձանագրությամբ.



ՄՔ ՅԱԿՈՔ ԽԱՋՍ ԲԱՐԵ/ԽԱԻՍ Է ՊՐ ԵՄՄԻՆԻՆ ԵՒ/ ԿՈՂԱԿՑԻՆ՝ ՆԱԶՄԷԼԻՔ/ԻՆ ԵՒ ԻՒՐ ԾՆՈՂԱՑՆ ՏՈ/ՎԼԱԹԻՆ ԵՒ ԱԼԱՄԷԼԻՔԻՆ:

Ծանոթ. Հուշուկ-Հովհաննիսյանը Տովլաթը վերածել է Տովեր: Այժմ տեղափոխված է քարեդարան:

Հրատ. Кучук-Иоаннесов, 39.

5. Խաչքարի բեկոր, սպիտակ մարմարից, աստրև՝ ծաղկեփնջով ծաղկաման: Արձանագրությունը՝ կիսատ, 3 աոդ.

...ՈՐՔ ՀԱՆԴԻՊԻՔ ՏՈՒՔ ՋՈՂՈՐ[ՄԻ]. ԹՎ. ՌՐՃԸ (1759) ԻՆ. ՕԳՈՍՏՈՍԻ ԺԵ (15) ԻՆ:

Ծանոթ. այժմ դանվում է քարեդարանում:

6. Հուշասալ, սպիտակ կրաքարից, եղրերին՝ րուսական զարդերով շրջանակ: 6 աոդանոց արձանագրության մի քանի աստեր եղծված են.

---

25 Е.А. Айбабина, Оборонительные сооружения Каффы. Архитектурно-археологические исследования в Крыму, Киев, Науково думка, 1988, с. 78. Հեղինակը մեջբերել է արձանագրության գրչագիրը:



ՀՐԱՄԱՆԱՒ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԵՒ ՎԵՐԱՑ/ԿԱՑՈՒԹԼԵԱՄԲՔ ՄԼԱ.Ի ՀԼՏԵՍ.Ի ՄԵՐԿԷԱՆ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԼԱՆ.Ի ՏԷՐ ՍԻՄԷՈՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՒ ՓՈՔՐԻԿ ՄԱ/ՏՈՒՌԸՍ ՅԻՇԱՏԱԿ ՀԱՄԱՑՆ ԺՈՂՈՎՐԴՈՑ/ ՁԵՌԱՄՐՆ ՄԼԱ.Ի/ՀԼՏԵՍ.Ի ՄՐԿՐԻՆ ԵՒ ՄԱՀԼՏԵՍ.Ի ԹՈՐՈՍԻՆ/ ՁԱՐՏԱՐԱՊԵՏԱՑ ՍԱՐԳՍԻՆ, ՄԻՆԱՍԻՆ. ԹՎԻ.Ի ՌՄԻ (1771):

Մանոթ. Տեղափոխված է քարեդարան:

Հրատ. Բժշկյան, 352, պակասավոր:

Լուսանկ. 1

7. Տապանաքար, *սպիտակ մարմարից, վերնամասում՝ շրջտնաճև երկու փոսիկներ: 6 տողանոց արձանագրութ.յան տակ երեք արմավենիկներ՝ կտրված պատուղներով.*

8. Տապանաքար, *սպիտակ մարմարից, գլխամասում շրջանաճև ղույզ. փոսիկներ, ո-*



ԱՅՍ ԷՆ ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏ/ԵԱՆ ՄԱՀՏԵՍԻ ՍԻՆԱՆԻ/ ՈՐԴՈՒ ՇԷՄԻՆԻՆ, ՈՐ ՓՈԽ/ԵՑԱՒ ԱՌ ՔՄ ԹՎԻ.Ի ՌՃԿԲ (1713)ԻՆ ՈՒԼԻՍԻ ԻԶ (26) ԻՆ ՕՐՆ ՇԱԲԱԹ./ ՀԱՑԲ ՄԵՐ:

Մանոթ. Աջ եզրին փորագրված են փոքրիկ խաչ և ԱԲԳ տառերը:

րոնց կենտրոնում՝ ելուստներ: 8 տողանոց արձանագրություն վեր՝ համաչափ գծաղարդեր.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆԸՍ ՀԱՆ/ԳԸՍ-
ՏԻ,
ՀՈԳԻ ՍՈՐԻՆ/ ՏԼԷՐՆ Ո-
ՂՈՐՄԻ.
ՈՐ Է ՄԼԱՀԼԼՏԵՍԻ/ ԱՍՎԱ-
ՏՈՒՐԻ
ԴՈՒՍՏՐԸ/ ՀԸՌՒԲՍԻՄԷ ԿՈ-
ՋԻ/.
ԹՎԻՆԱՐԱՄԵԱՆ ՏՈՀՄԻ/
ՌՄԺԷ (1768)ԻՆ,
ՅԱՄՍԱՆ/ՆԸՆ ՅՈՒՆԻՍԻ Է
(7)ԻՆ:

9. Տապանաքար, սպիտակ մարմարից, եզրերին՝ եռանկյունաձև զարդեր, վրան՝ վերջում եղծված 8 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ՀԱՆԳՍՏԵ/ԱՆ ՄԱՐՏԻՐՈ/ՍԻ ՈՐԴԻ ՄԻՆԱՍԻ/Ն ԴԸՍՏԵՐՆ/ ՊԱՅԱՐ ԽԱԹՈ/ԻՆԻ, ՈՐ ՓՈԽԵ֊ՑԱՒ Ի ՔՍ...

Հրատ. Кучук Иоаннесов, 39

Լուսանկ. 2

10. Սալատախտակ, սպիտակ մարմարից, կիսաշրջանաձև, ծաղկազարդ տառերով, բարձր վարպետությամբ փորագրված է 7 տող ուռանավոր.

ՍԱՅ Է ՏԱՃ/ԱՐ ԱԼՍՏՈՒԱԾԱՅԻՆ
ՇԻՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ/ ՋՕՐԱՑ ՎԵՐԻՆ՝
ԳԱԲՐԻԷԼԻՆ ԵՒ ՄԻՔԱԷԼԻՆ/
ՍՊԱՍՕՐԴ ԱԼՍՏՈՒԱԾ ԲԱՆԻՆ
ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՄԲՔ/ ԱԼՍՏՈՒԱԾԱՏՐԻՆ
ԿԵՆԱԿՑԻՆ ԱՂՈՒԹ ԽԱ֊ԹՆԻՆ
ԵՒ ԾՆՈՂԱՑ/ ՍԱՏԱԹԻՆ ՄԱՐԵՄ ԽԱ֊ԹՆԻՆ
ԵՒ ՋՕԱԿԱՑՆ ԽԱՉԱՏՐԻՆ, ՍԻՄԷՈՆԻՆ,
ՅՈՀԱՆՆԻՍԻՆ, ՄԱՐԻ ՄԵԼԻՔԻՆ, ԹՎ. ՊՄԷ (1408):

Մանոթ. կաֆայում 1420 թ. ընդօրինակած ավետարանի հիշատակարանում Քրիստոստուր գրիչը, բացի այս վիմագրում հիշատակված անձանցից, նշում է նաև Աստվածատուրի պապ Գրիգորին և մամին՝ Աննային[26]:

3. Վկայված «Տէր Նիկոլայոսը» լեհահայոց նշանավոր արքեպիսկոպոս Տեր-Նիկոլն է (1605-1681), որի գահակալության վերջին տարիներին Լվովի հայությունը դանդվածարար ընդունեց կաթոլիկություն:

494. Լվովի պատմության թանգարանի ֆեոդալիզմի դարաշրջանի բաժնում՝ սենյակի քանդակաղարդ սյան վրա.

D-160. D-: 1669 ԴՎ. ՌՃԺԸ (1669):

495. Դերաններից մեկի վրա՝

STANİSLAVS.

496. Մյուսին՝

AIO 1659

497. Մեկ այլին՝

1690 DOMİNİ DİELİVNİ

498. Մետաղյա կախովի խաչի հորիզոնական խաչթևերի վրա. մի կողմին՝

ՅՄ ·ՔՍ

Մյուսին՝

ԲԱՐԴՈՂԻՄԷՈՍ

Մանոթ. Լուսանկարը մեզ արամադրել է Ն.Կ.Կրիվոնոսը:

Նույն թանգարանի մետաղի բաժնում պահպանվում են հայոց եկեղեցիներից բերված մի շարք խաչեր և մասունքներ, որոնցից հետևյալներն ունեն արձանագրություններ (արվում են ըստ թանգարանի ֆոնդահամարների).

499. MT-176. Խաչ արծաթյա, ոսկեզօծված, ստորին խաչթևի պատվանդանին՝ շրջանաձև.

143 Մ. Բժշկյան, էջ 102-103



ՅԼԻՇԼԱՏԼԱԿ Է ՄԲ ԽԱՋՍ ԹՕԽԱԹՑԻ ԽԼՈՃԼԱՑ ՄԻՆԱՍԻՆ, ԿԵՆԱԿՑՈՑՆ ԲԱՆԻ ՓԻՐՈՒՋԱՑԻՆ. Ի ՍԲ ՀԱՃԿԱՏԼԱՐ ԵԿԵՂԵՑԻ, Ի ՔԼԱՂԼԱՔՆ ԽՕԹԻՆ. ԹՎԻՆ ՌՂԱ (1642), ՄԱՑԻՍ ԺԲ (12):

500. MT- 179. *Խաչ արծաթյա, ոսկեզօծված, խաչթևերին՝ սպիտակավուն թանկարժեք քարեր. պատվանդանին՝ շրջանակի ճուլածո տառերով.*

ՑԼԻՇԼԱՏԼԱԿ Է ՍԲ ԽԱՋՍ ՄԱՀՏԼԵՍԻ ԱՇԱՏՐԻՆ ՄՍՐՆՑ. Ի ԴՈՒՌՆ ՄԲ Հ[ԱՃԿ]ԱՏԼԱՐ ՄԲ ԱՇԱՇՆԻՆ. ԹՎԻՆ ՌՀԱ (1621) ԱՄԻՆ ՄԱՑԻՍ ԱՄՍՈՒՆ, ՇԼԵՀԼԱՄԲՆ ՏՐ ՑԼ.ԿԼՈՒԲԻ ԳՐ[ԵՑԱԻ] ԵԿԼԵՂԼԵՑԻՆ ՎԼԱ.ՀՍԼՆ] ԻՒՐ ՀՈԳՈՑՆ ԵՒ ԱՄ[ԵՆԱՑՆ] ՋԱՐՄԻ ԿԵՆԴԱՆԵԱՑ ԵՒ ՆՆՋԵՑԵԼՈՑ:

Ծանոթ. ՄՍՐՆՑ սղումը, ամենայն հավանականությամբ, կարելի է վերականգնել Մասրվանից կամ Մասրեվանից: Այս գյուղը գտնվում է պատմական Դոգթան գավառում: Այժմ կոչվում է Նասրվագ և մտնում է Նախիջևանի Իշ Օրգուրադի շրջանի վարչատարածքային կազմում:

501. Լվովի պատմության թանգարանի *մասնաշենքի (Շուկայի հրապարակ, N.4) միջանցքում պահպանվող քառակող այան վրա՝ մի կողմին.*



ԹԷՆԿՐԻԳՕԳՆՈՒ /ՈՒՆ/ Դ ՈՒ ՋԿԱՆԻ /ԻՆ/ ԹՕԽ Դ Ա Դ Ք Ա Ն /ՆԱ/ Ց Ա Ւ Ի Ն /ՆԻ/ Գ Օ Ջ Ա Դ Ք Ա Ն Ի /ԻՆ/ Ա Ր /ՐԱ/Ն Տ Ա Ն Ս Ա Լ Խ Լ Ա Կ Ա Ն Գ Օ Ջ Ա Թ Ո Ւ Ջ Ի Ն Կ Ն Ի /ԻՆ/ Ա Ւ Ն Ի Ն Կ Ե Ռ Խ Ո Ւ Ե Ն Մ Ա Ս Ջ Է Թ Ա Պ Ա Խ /ԽԱ/ Ո Ւ Ջ Ի Ն Կ Ա Ւ Ի Ն Խ /ԽՆ/ ՆԿ Ջ Ի Ո Մ Ա Է Դ Մ Ա Ս ...

Մյուս կողմին՝



ԿՈԻՆԱՇՆԻՆԿԻՍԻՍԻԿՈՒՆՏՈՒՋԸՋՏԸՐՄԱՍՏԱՐՆԷՔԷՋԱՍԻՑՆԻՆՍՕՎՈՒԽՈՒՕԴՄՄԱՍԵԱՍԱԼՏՐՇԱՂԱՎԱԴՆՏԱՆՊԻՑԹԷՆԿՐԻՆԻՆԿ / 1609 ԹՎ. ՌՄԸ (1609):

Ծանոթ. Կաղանի Գ. Իրրահիմովի անվան լեղվի, գրականության և պատմության ինստիտուտի աշխատակից Ի. Արղուլինը մեզ հետաքրքրող հայատառ. ղփչաղերեն ընագիրը թարգմանել է հեռևյալ կերպ (թարգմանում ենք ռուսերենից).

«Կատարեցաւ (կառուցվեց) ողորմությամբ Տեր Աստուծո, քանի գեռ ցերեկը արևը չէր այրում և, նշանակում է չէին անցել ցրաերը... Աստված սահեղծեց երկինքը, արարեց երկիրը, հետևում էր քեզ, պահպանում չարից, քո հովանավորին... քանդի քո հովանավորը չի դործի չարիք դերության արժանացյալներին. ի թվին Հայոց 1058 (1609)[144]: Հայատառ ղփչաղերենով վարորերյալ արձանադրությունը թարգմանարար պեահեղված է Ն.Կ. Կրիվոնոսի «Լվովի հայկական գաղթօջախը» դիսերտացիայի մեջ (էջ 223, ձեռագիր), որտեղ ըստացիորեն ասվում է.

ա) «Ես ենթարկվում եմ քեզ, իմ տուրը Աստված, ես ծառայում եմ քեզ. եղրայրություն. 1609 թ.»

բ) «Քրիստոնյա միապետներ, ես աղոթում եմ, որպեսզի դուք ապրեք հավիտյան, Ձեր գահին ցանկանում եմ երկարակեցություն»:

Ի. Արդուլինի կարծիքով, արձանագրության մեջ կիրառված մի շարք բառեր կարելի է բացատրել ժամանակակից թաթարերենով, ըստ որում բացառություն են կազմում թուրքերեն (günäs.- արև, պարսկերեն zera- քանդի, և այլն:

Լուսանկ. *138 ա, բ, գ*

ԼՎՈՎԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

502. Լվովի պատմության թանգարանի պատկերասրահում և Ուկրաինայի ԳԱ կիրառական արվեստի ինստիտուտում պահպանվել են լեհահայ գաղութի մի շարք ականավոր գործիչների յուղաներկ դիմանկարները: Այսօր էլ պատկերասրահի ցուցասրահում այցելուի ուշադրությունն է գրավում լեհական կաղմիր թագավորի խորհրդական և քարտուղար, Ռուսիայի մաքսատան կառավարիչ Քրիստափոր (Խաչկո) Ավեգիկ Բեռնատովիչի դիմանկարը որի, ձախ կողմին մակագրված է 16 տող[145].

---

144 И.Абдуплин, Армяно-кипчакская эпиграфика. ,,Тезисы докладов итоговой научной сессии за 1972 г., Казань, 1973, с. 48-52. См. также: Х.И.Кучук-Иоаннесов, Старинные армянские надписи и старинные рукописи. ,,Древности восточные,, т.2, вып. 3, М., 1903.

145 Ք.ր. Բեռնատովիչի մասին տե՛ս Я.Дашкевич, Армянское самоуправленне во Львове в 60-80-х гг. XVII столетия, ,,Вестнк Матвнадарана,, N.9 1969, с. 218. Я. Дашкевич, Э.Трыярский, Армяно-кипчакские предбрачные договоры со Львова (1598-1638гг.) ,,Rocznik orientalisyczny,, t.33, Warszawa, 1970, zezs. 2, str. 79-84, 86: Sadok Barącz, Ziwoty..., str. 71-72, 74.



CHRISTOPHORUS AUEDIKUS/ BERNATOWICZ SERENISS/ MI IOANNIS CASIMIRI RE/IS POLONIE SECRETA/RIUS THELONEORUM/ CRAE REGIAE MAIESTA/ TIS ET REIPUBLICA/ IN RUSSIA ADMINIS/TRATOR INCLITA NATIONIS AR/MENAE LEO/POLIÉ ... NSIS DIRE/CTOR NATUS/ ANNO 1599/. VIXITAE[TATIS] 1672./ ANNO

Թարգմ.

Քրիսաւիոր Աւեդիկ Բեռնաւովիչ. Լեհաստանի Հովհան-Կազիմիր պայծառաւիայլ թագավորի քարտուղար, արքայական մեծության և Ռուսիայում Ռեչ-Պոսպոլիտայի մաքսատան կառավարիչ, Լվովի հայ ժողովրդի պանծալի ավագ: Ծնվել է 1599 թ., ապրել է 72 տարի, վախճանվել է 1671թ.:

Ծանոթ. 1. Քրիստափորը Ավեգիկ Բեռնատովիչի որդին էր:

2. Հիշատակված Հովհան-Կազիմիրը լեհական թագավոր Ցան Բ Կազիմեժն է (1648-1668):

3. Ռուսիայի վոյեվոդության մայրաքաղաքը Լվովն էր:

Հրատ. Sadok Baracz, 71-74

503. Լվովի Ռուսկայա փողոցի N.4 բնակարանի լուսամուտների քիվերին՝ մեկական տող.



ա) ՇԻՆԵՑԱԻ ԱՆՈՒՆ ՓՐԿՉԻՆ Ի ՎԱՑԵԼՈՒԼՄԽ ՎՄԱՐԴԱՆԻՆ:



բ) ԱՇ ԱԼԻՐՀՆԷ ԸՉՏՈՒՆՍ ՉԱՑՍ. ԹՎ. ՌՀԷ (1628):



գ) ԱՉՈՎԸՆ ՍԲ ԱՇԱՑԻՆ. ՑՈՒԼԻՍԻ ԺԸ (18):

Լուսանկ. 139 ա, բ, գ

504. Լուսավորչի խորանում եղած տապանաքարերից մեկի վրա Մ. Բժշկյանն ընթերցել է հետևյալ արձանագրությունը.

Այս է տապան պր Օվանեսին՝ որդոյ սօլվադաւոր խօջա Նաւասարդին, ի Ատապատա քաղաքէ: Հանդեաւ ի Տէր թվ. ՌՃԼԵ (1686) և փեսորվար ամսի Հինգերորդի:

Հրատ. Բժշկյան, 103:

ԼԻՉԱԿՈՎՅԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Լվովի Լիչակովյան գերեզմանոցը մեծ ու փոքր կոթողների ճարտարապետական հորինվածքների աքանչելի թանգարան է բաց երկնքի տակ: Այստեղ են թաղված բազում հայորդիներ, որոնց մահարձաններին փորագրված են լեհերեն և մասամբ լատիներեն արձանագրություններ: Ահա դրանք.

505. Կոթող, գորշ ավազաքարից, վրան ադուցված սալաքարին՝ 3 տող.

DOM

TU SPOCZIWAJA/ DE ABGARO ABGAROVICŹ/ UR. 1786, ZM. 20.11.1851.

Թարգմ.

Աստ հանգչէր դէ Աբգար Աբգարովիչը. ծնվ. 1786 թ., մահ. 1851 թ. նոյեմբերի 20-ին:

506. Կոթող, գրանիտից. վրան ադուցված սալատախտակին՝ 6 տող.



+S.P./ JÓZEF ŻULIŃSKI+1908./ TADEUSZ ŻULIŃSKI/ 1889+1915./ TERESA CZARNIK+1944/ CZEŚĆ ICH PAMIECÍ

Թարգմ.

Հովսեփ Ժուլինսկի, մահ. 1908 թ. /Թադեոս Ժուլինսկի.1889+1915./ Թերեզա Չարնիկ +1944/: Ի պատիվ նրանց Հիշատակի:

Լուսանկ. *140*

Լիչակովյան գերեմանոցի N.4 դաշտ

507. Դամբարանատուն, ևս մարմարից, գանվում է N.4 գաշտի արահետի եզրին: Հիշատակագրված են թվով 6 հանգուցյալներ Աքսենտովիչ գերդաստանից. ունի 28 տող.



GROBOWIEC/ PERSIANÓW/ AXENTOWICZÓW



GRZEGORZ PERSIAN/
AXENTOWICZ/
WŁAŚĆ/ ICIEL DÓBR/
1814÷1885
ROZALIA Z
KRZYSZTOFO-
WICZÓW/
AXENTOWICZOWA
22 IX 1830-19. XI 1908
JÓZEF PERSIAN/
AXENTOWICZ/
WŁAŚĆ/ICIEL DÓBR/
1855-16. V .1914



KS. JAKOB PERSIAN/
AXENTOWICZ
SZAMB. J.S. PAPIEŻA/
KANON. GREM. KAPIT.
ORM.
1798-1878

Z PERSIAN
AXENTOWICZOW/
ROMANA WACLAWOWA
WNUCZKOWA/
TOBACZEWSKA/ 24. IX. 1887
W HORODENCE + 11.III.1912
we LWÓWIE/
WAŃDZIA/ AXENTOWICŹ/ 6.
IV. 1905÷ 16.V.1924.

Թարգմ.

Դամբարանատուն պարսկահայ Աքսենտովիչների
Գրիգոր Աքսենտովիչ
պարսկահայ կալվածատեր
1814-1885

Ռոզալիա Աքսենտովիչովա
(ծնյալ) Քրիշտոֆովիչովա
22.9. 1830-19.11.1908
Հովսեփ Աքսենտովիչ
պարսկահայ կալվածատեր
1855-16.5.1914
Քայոնպ (քահանա) Հակոբ
Աքսենտովիչ, պարսկահայ.
նորին արբուբյուն Պապի
(սենեկապետ) հայոց կաթողիկեի
կանոնիկոս.1798-1878:
Պարսկահայ Աքսենտովիչների
գերդաստանից.
Ռոմանա Վացլավով Վնիչկովա-Տորաշևսկա
24.9.1887 Հորոդեննկա- 11.3. 1912-
Լվով:
Վանդա Աքսենտովիչ- 6.4. 1905- 16.5.1924:

Մանոթ. Ն.կ. Կրիվոնոսի. - Լվովում պերսիանին էին կոչում այն հայերին, ովքեր տեղափոխվել էին ըուն Հայաստանից և ոչ թե Ղրիմից, Մոլդավիայից, Ռումինիայից կամ որևէ այլ գաղթօջախից:

Լուսանկ. *141 ա, բ, գ*

508. Մահարաճան-կոթող սև մարմարից, վրան՝ 8 տող.

KS./ KAJETAN MARMOROSS/ INFULAT SZAMBELAN JEGO/ SWIĘTOBLIWOŚĆI/ PROBOSZ KAPITULU LWOW. ORM./ 1790+6 MAIA 1875/ PROSI O POZDROWIENIE/ ANIELSKIE.

Թարգմ.

Քայոնզ (կաթոլիկ քահանա) Կայետան Մարմորոշ. նոր(ն) սրբութ(յան) (Պապի) առաջնորդ /ինֆուլատ/ սենեկապետ, Լվովի հայոց կաթողիկեի քարոզիչ. (ծն.) 1790 + 6 -ը մայիսի 1875: Խնդրում է հրեշտակաց ողջույնը:

Լուսանկ. *142*

509. Կոթող, *կապտավուն գրանիտից, արևելյան կողմին՝ 7 տող.*

TU SPOCZYWA/ KS. KANONIK/ PROBOSZ KAP/ITULY/ ORM/IANSKIEJ/ DOMINIK/ BARĄCZ/ 1808-1879/.P.Í D.

Թարգմ.

Ասա նո(ր) քայոնլ կանոնիկոս, Հայոց կաթոլիկեի քարոզիչ Դոմինիկ Բարոնչը.1808-1879. Հանգիստ նրա հոգուն:

510. Դամբարան-կոթող, գորշ ավազաքարից, մասրան ձևով: Արևելյան կողմին քանդակված է եպիսկոպոսական խույր, որի աջ կողմում՝ հովվական գավազան, ձախում՝ խաչ. խույրի վրա թևատարած արծիվ, ստորև՝ խույրի միջից գուրս եկող ղույգ ժապավեններ: Վրան ագուցված մարմարե սալաքարին՝ 7 տող.



ISAK MIKOŁAJ
ISAKOWICZ
ARCYBISKUP
METROPOLITA LWOWSKI
ORMIANSKI
URODZONY W R 1824
MIANOWANY ARCYBISKUPEM
R 1882
ZMARŁ DNIA 29 KWIETNIA 1901

ISAK MIKOŁAJ/ ISAKOWICZ/ ARCYBISKUP/ METROPOLITA LWOWSKI/ ORMIANSKI/ URODZONY W R. 1824/ MIANOWANY ARCYBISKUPEM/ R. 1882/ ZMARŁ DNIA 29 KWIETNIA 1901.

Թարգմ.

Իսահակ Նիկողայոս Իսակովիչ. Լվովի Հայոց արքեպիսկոպոս- մետրոպոլիա: Ծն. 1824 թ., օծվեց արքեպիսկոպոս 1882 թ.: Վախճանվեց 1901 թ. ապրիլի 29 -ին:

Լուսանկ. *143*

511. Լիչակովյան գերեզմանոցում գտվող՝ հայ բենեդիկտուհիների մատուռի

վրա՝ Քրիստոսի պատկերաքանդակի տակ կիսաշրջանաձև կտրված թիթեղին՝ ուղղագիր տառերով 2 տող.



CROBOWIEC/ PP. BEN. ORMIANSKICH

Թարգմ.

Հայ բենեդիկտուհիների դամբարանատուն:

Լուսանկ. *144*

Նույն գերեզմանոցի 2-րդ դաշտում:

512. Մահարձան-կոթող. նստած է հայ գյուղացու տարազով ծերունին՝ գրկին երկու զանգրահեր մանուկներ, որոնք նայում են նրան: Պատվանդանի վրա ապուցված սալաքարին փորագրված է 5 տող.

JOZEF TOROSIEWICZ/ DR. MED., FUNDATOR ZAKŁADU/ NAUK./ ORMIANSKIEGO 1784-1869/.

KS. KAJETAN KAJETANOWICZ/ INFUŁ KAP. ORM. WSPOLZALOŻYCIEL/ I KIEROWNIK ZAKŁADU ORMIANSKIEGO 1817+1900.

Թարգմ.

Հովսեփ Թորոսովիչ. բժշկապետության դոկտոր, հայոց ուսումնագիտական հաստատության հիմնադիր. 1784-1869:

Քայոնզ (կաթոլիկ քահանա) Կայետան Կայետանովիչ. Հայոց ուսումնական հաստատության ինֆուլ և ղեկավար. 1817-1900:

Մահարձանի պատվանդանի աջ կողմին՝

E. JASKOLSKI -1871 r.

Նուսանկ. *145*

513. Մահարձան-կոթող գորշավուն ավազաքարից. եպիսկոպոսական աքեմով և խույրը գլխին պատկած է ողջ հասակով լվովահայոց արքեպիսկոպոս- մետրոպոլիտ Սամուել Ստեֆանովիչը գորշ մարմարե դիաթախտին, որի ստորև՝ ելնդավոր տառերով 4 տող.



SAMUEL CYRYL STEFANOWICZ/ ARCYBISKUP-METROPOLITA LWOWSKI ORMIAŃSKI,/ URODZONY W ŁYŚCU 1755./ MIANOWANY ARCYBISKUPEM 1831. UMARŁ 8Ω GRUDNIA 1858.

Թարգմ.

Սամուել Կիրիլ (Կիւրեղ) Ստեֆանովիչ. Լվովի Հայոց արքեպիսկոպոս- մեարոպոլիտ. ծն. 1755 թ. Լիսեցում, օծված է արքեպիսկոպոս 1831 թ., վախճ. 1858 թ. դեկաեմբեր սմ- սի 8-ին:

Լուսանկ. *146*

514. Ս ահարձան-կոթող. քանդակված է թիկնաթոռին բազմած արքեպիսկո- պոս Գրիգոր Սիմոնովիչը՝ եկեղեցական աքեմով, ղլխին եպիսկոպոսական խուլր, ձեռք- րը՝ ադդրերին: Պատվանդանին վորադրված է.

GRZEGORZ MICHAL SZYMONOWICZ
Arcybiskup Metropolita Lwowski obrzadku ormianskiego
* dnia 10 Marca 1800
dnia 14 Czernca 1875
Prosi o pozdrowienie Anielskie

GRZEGORZ MICH/AL SZYMONOWICZ/ ARCYBISKUP METROPOLITA LWOWSKI OBRŹADKU ORMIAŃSKIEGO/ -DNIA 10 MARCA 1800- DNIA 14 CZERNCA 1875/. PROSI O POZDROWIENIE ANIELSKIE.

Թարգմ.

Գրիգոր Սիմոնովիչ. Լվովի մեարոպոլիտ- արքեպիսկոպոս Հայոց. 10 մարտի 1800 -14 Հունվարի 1875 : Խնդրում է հրեշտակների ողջույնը:

Լուսանկ. *147*

515. Կոթող, նախորդի աջ կողմում. վրան՝ թևավոր խաչ, որի կենտրոնում՝

+
IHS

Պատվանդանի վրա.

GRZEGORZ JOZEF/ ROMASZKAN/ ARCYBISKUP METROPOLITA/ LWOWSKI OBRZACDKU/ ORMIAŃSKIEGÓ/ 12 LUTEGO 1809/ + GRUDNIA 1881/ PROSI O POZDROWIENIÉ ANIELSKIE.

Թարգմ.

Գրիգոր Հովսեփ Ռոմաշքան՝ Լվովի Հայոց արքեպիսկոպոս- մեարոպոլիտ. ծնվ. 1809 թ. փետրվարի 12-ին, մահ. 1881 թ. դեկտեմբերի 11-ին: Խնդրում է հրեշտակաց ողջույնը:

Մանոթ. Արձանագրության տակ քանդակված է եպիսկոպոսական խուլր և խաչաձևված գավազաններ: Աջ անկյունում՝ քանդակագործի ստորագրությունն է՝

J. CORGOLEWSKI

516. Դմբարանատան կենտրոնական մասում ագուցված սևաթուխը մարմարասալին՝ 2 տող.

GROBOWIEC HASSO/ AGOPSOWICZOW.

Թարգմ.

Ադոպսովիչների դամբարանատունն է:

Լուսանկ. *148*

517.

Դամբարանի ճակատին՝

GROBOWIEC
FRANCISZKOW TOROSIEWICZOW
i ich rodziny.

GROBOWIEC/ FRANCISZKOW TOROSIEWICZOW/ I ICH RODZINY.

Թարգմ.

Դամբարան Ֆրանչիշկա Թորոսիեվիչի և նրա գերդաստանի:

Լուսանկ. *149*

518. Կոթող ժայռաբեկորի տեսքով. վրան՝ ագուցված մարմարե սալաքարին՝ 4 տող.

JULIAN
ZACHARIEWICZ
ARCHITEKT
1833 – 1898

JULIAN/ ZACHARIEWICZ/
ARCHITEKT/ 1833-1898.

Թարգմ.

Ցուլիան Զախարիևիչ. ճարտարապետ 1833-1898.

Մանոթ. Լվովահայ ականավոր ճարտարապետ Ցու. Զախարիևիչի դամբարանաքարն է: Նրա նախագծով կառուցվել են Լվովի պոլիտեխնիկական ինստիտուտի հին մասնաշենքը և այլն: Եղել է այս ինստիտուտի ճարտարապետության բաժնի հիմնադիրն ու առաջին դասախոսներից մեկը:

Լուսանկ. *150*

519. Մահարձան-կոթող, գրանիտից: Հնգաստիճան պատվանդանի վերջին սալաքարին՝ ռելիեֆ առուերով.

Grobowiec rodziny A.Amirowiczów.

GROBOWIEC RODZINY A. AMIROWICZOW

Թարգմ.

Ամիրովիչների տոհմական դամբարանատուն:

Լուսանկ. *151*

520. Կոթող սպիտակավուն կրաքարից, այժմ՝ կիսակործան, պատվանդանի մեկ կողմին՝ 3 տող.

JÓZEF ABGAROWICZ

prz. żył lat 70
zmarł rok 1884

JOZEF ABGAROWICZ/ PRZOŻYL LAT 70/
ZMARL ROK. 1884.

Թարգմ.

Հովսեփ Աբգարովիչ, ապրեց, 70 տարի. վախճանվեց 1884 թ.

Լուսանկ. *152*

521. Կոթող, գորշավուն գրանիտից, կենարոնում՝ շրջանաձև մեկ տող.

GROBOWIEC BOGDANOWICZOW

Թարգմ.

Բոգդանովիչների դամբարան

Լիչակովյան գերեզմանոցի 14-րդ շարքում

522. Կոթող՝ հուշասյուն, գորշավուն գրանիտից. վրան՝ 10 տող.

PAEMIĘCI JAKOBA BARĄNCZA./ UROD 17 GRUD. 1800.
ZM. 11 GRUD. 1879/ WDZIĘCZKA RODZINA.

Թարգմ.

Ի հիշատակ Յակոբ Բարոնչի. ծն.1800 թ. դեկտեմբերի 17-ին,
վախճ. 1879 թ. դեկտեմբերի 11-ին:

WLODZIMIERZ BARAĆZA/ URODZONY DNIA 13 MAJA 1807./ UMARL DNIA 13 CZERWCA 1893 R.

Թարգմ.

(Ի հիշատակ) Վլադիմիր Բարոնչի. ծն. 1807 թ. մայիսի 13-ին.
Վախճ. 1893 թ. հունիսի 13-ին:

TEREZA Z TRUCIILIŃSKICH/ BARAĆZOWA/ URODZONA W R. 1824.
ZMARLA 9 CZERWCA 1897.

Թարգմ.

Թերեզա Բարոնչովա՝ Տրուցիլինսկիների (գերդաստանից). ծն. 1824 թ., վախճ. 1897 թ. հունիսի 9-ին:

Հուշակոթողի ստորին աջ անկյունում՝

Ł SCHIMCER

ՎԵՐԽՆԱՑԱ ԲԱԼԿԱ ԳՑՈՒՂ
/ԼՎՈՎԻ ՄԱՐՋ, ՊՈՒՏՈՄԻՏՈՎՍԿՈՒ ՇՐՋԱՆ/

523. Տապանաքար, *սպիտակ մարմարից, եզրերին՝ րուսական զարգեր, կենարոնում՝ դափնեպսակի մեջ վերցված տոհմանշան, որի փակագիրը կարելի է վերծանել ԱԻԱԳ: Երկլեզվյան (հայերեն և լեհերեն) արձանագրությունները վորագրված են տոհմանշանի վերին և ստորին մասերում՝ 7-ական տող.*



Ի ՆԵՐՔՈՑ ԱՑՍՄ/ ՎԻՄԱՒ ԹԱՂԵՑԱՒ/ ՄԱՍՐՎԱ-
ՆԵՑԻ ԱՒԱ/ԳԻ ՈՐԴԻ ԽԱԶՈ/ՄԸՆ, ՈՐ ԱՌ ԱՇ/ ՓՈ-
ԽԵՑԱՒ ԹՎ. Ռ/ՃՄԴ (1705), ՑՈՒԼԻՍԻ Դ (4).

524. Ապա՝ լեհերեն.

TY POGZEBIO/ MALY (?) KRZYSZTOF/ AWAKOWICZ/ ORMIANIN/ Z PERSEYI/. ZMARL R. 1705 D. 4 Ł

Ծանոթ. 1. Լեհերեն տապանագրի վերջին L տառը հավանարար Lipen-ի (հուլիսի) սկզբնատառն է:

2. Լուսանկարը մեզ արամագրել է Ն. Կ. Կրիվոնոսը:

Լուսանկ. 153

Արձանագրություններ, որոնք տեղում չեն կամ չենք նկատել

525. Հուշասյան վրա.՝

D.O.M.

Ecclesiam hans majorem ejusdem gloriae Dei sanctissimaeque Deiparae honori restauravit, residentiam commoditati cleri innovavit, columnam tutelari suo funditus erexit nobilis et magnificus Christophorus Augustynowicz, director et judex nat. arm. leopoli anno aere Christianae MDCXXVI (1726).

Հրատ. X.D.Kajetanowicz, 22.

Թարգմ.

Ա[ստծուն] ա[մենաբարձրյալին] ա[մենահզորին]

Եկեղեցիս այս մեծ և սքանչելի ի փառս Աստուծո և. ի պատիվ ամենասուրբ Աստվածամոր (Կույս Մարիամի) վերականգնեց, կղերի համար հարմարավետ գահանիստը նորոգեց, իր իսկ մահհղացմամբ կերաված սյունաշարը կանգնեցրեց բարեծնունդ և. սքանչելի Քրիստափոր Ավգուստինովիչը՝ Լվովի հայոց առաջնորդն ու գատավորը -Քրիստոսի ծննդյան 1726 թվականին:

526. Հուշասալին՝

Piae memoriae /Samuelis Cyrilli Stefanowicz/ Archiepiscopi Metrop. Leopoliesis Armenorum. /N. 1755, M. 1858 A. D. 1889./ Posuit parochuc loci.

Հրատ. X.D.Kajetanowicz, 18.

Թարգմ.

Սամուել Կիրիլ Ստեֆանովիչի՝ Լվովի հայոց արքեպիսկոպոս մետրոպոլիտի երանելի հիշատակին: Ծնվ. 1755-ին, մահ. 1858-ին: Տիրոջ 1889թ. կատուցեց տեղիս առաջնորդը:

527. Հիշատակապրություն, նախկին տեղն անհայտ: Քաղում ենք Կայտանովիչի՝ Լվովի հայոց եկեղեցու արձանագրություններին նվիրված գրքից.

D. O. M.

Et iterum sur /recturus sum/ et in carne mea/ videbo Deum/ Salvatorem/ meum/ Joannes Man/ czukiewicz/ in Domino/ A. D. 1710/ aetis suae 28, 26 Mai.

Հրատ. X.D.Kajetanowicz, 17.

Թարգմ.

Ա[ստծուն] ա[մենաբարձրյալին] ա[մենահզորին]

Եվ նորից ես կբարձրանամ և իմ մեջ կտեսնեմ Աստծուն՝ իմ Փրկչին:

Հովհան Մանուկեւիչը ի տեր հանգեց 1710 թվականին մայիսի 26-ին 28 տարեկան (հասակում):

528. Արձանագրություն, նախկին տեղն անհայտ: Տրվում է կայտանովիչի վերծանությամբ. 8 տող.

Boleslaus Eques/ de Odroważ Augustynowicz/ in gratam memoriam/ avi sui nomine suo et / S. M. Leonis/ Augustynowicz/ figuram hanc renovavit/ A. D. 1877.

Հրատ. X.D.Kajetanowicz, 22.

Թարգմ.

Հեծյալ (թերևս անձնանո՞ւնն է - Eques) Բոլեսլավ Օդրովիչ Ավգուստինովիչը ի հիշատակ երախտագիտության իր պապի՝ իր անունից Լվովի Ավգուստինուլիչների այս արձանը վերականգնեց Տիրոջ 1887 թվականին:

Վիմագրեր, որոնք մեջբերված են ականավոր պատմաբան Սադոկ (Հարություն) Բարոնչի "Żywoty stawnich Ormian w Polsce" գրքում[146]:

529. Լեհական Ավգուստ Բ թագավորի քարտուղար Նիկողայոս Մինասովիչի դստեր՝ Աննայի տապանաքարին, 24 տող՝

Tu w tym grobie spoczywa Anna z Mikolajem,
Ktorzy starym na świecie żyli obyczajem
Przez dwadziescia lat czery, w milości i zgodzie,
Zgola tym trybem jaki już przestal bić w modzie.
Ac ich w leciech nierownych sprzagl Hymen ogniwem,
Gdy ż ojciec piaty kryżyk wlosem znaczyl siwym,
Matka zaś rok liczyla wieku dziewietnasty,
Gdy z grona panienskiego szla miedzy niewiasty
W drodzc bożych przykazan' chodzili oboje.
A wydawszy siedm sinow na świat, co'rek dwoje,
Do tegoż wiek ich mlody sposobili toru,
Wieccj tu lożac trudów, niż okolo zbioru.
Ktorego byl Mikolaj szezodry dośc' Szafarzem
Dobrym, gdy sic nim dzielil nie z jednym Lazarzem,
Czyniae przed ludzkiem okiem te uczynnośe' skrycie
Gzym tusze, że zakupil wieczne sobie życie.
Anna zas' rzad prowadzac w swym oszczednym domu,
Pobożnościa wyprzedzic' nie bardzo sie komu
Dala, z ktora i w stanie wdowim żyla sobie,
Przez dwadzies'cia lat i dwa, nim spoczela w grobie

146 Sadok Barącz. Zywoty slawnich Ormian w Polzce, Lwow, 1856, էջ 205-206:

O zacne dusze i niech tam cial innych popioly,
Pokrywaja kosztowne z marmuru mauzoly
Niech imion ich ozdoby, ryje napis zloty
Waszym beda nagrobkiem, droższe zlota cnoty.

Թարգմ.

Ասա, գերեզմանումս հանդչում է Աննան Միկոլայի հետ: Որոնք ապրեցին աշխարհում հին սովորույթներով՝
Քսանչորս տարի սիրով և համերաշխությամբ,
Բոլորովին այն կերպ, սրպիսին դադարել է այժմ մոդայիկ լինելուց.
Թեև Հիմենեյը միացրեց նրանց անհտնդիստ տարիներին,
Քանի որ հայրս նշել էր հինգերորդ տասնամյակը
ճերմակած մալերով,
Իսկ մայրս հաշվել էր իր կյանքի տասնիններորդ տարին,
Երբ կուսանաց խմբից անցել էր կանանց մեջ.
Երկուսն էլ ապրեցին Աստծու պատվիրաններով,
Լույս աշխարհ բերելով յոթ ուստրեր և երկու դուստրեր,
(Բացի այդ), օգնում էին նրանց ջահելության ճանապարհին,
Այդ գործում ներդնելով ավելի աշխատանք, քան (հարստություն) կուտակելու մեջ:
Միկոլայը բավականին առատաձեռն մարդանապետ էր, լավն էր,
Քանզի կիսում էր (ունեցվածքը) ոչ միայն մեկ Ղազարի հետ:
Իր կատարած (բարեգործությունը) նա թաքցնում էր մարդկանց աչքերից.
Հուսով եմ, որ դրանով նա իր համար ճեռք բերեց հավերժ կյանք,
Իսկ Աննան կառավարում էր տունը խնայողաբար,
Թույլ չէր տալիս սրևէ մեկին գերադանցել իրեն՝ բարեպաշտությամբ,
Որով և ապրեց նա որբերայրի կյանքով
Քսաներկու տարի, մինչև որ իջավ գերեզման:
Օ,՛ ազնիվ հոգիներ, թող այնտեղ այդ մարմինների ճյուղները
Ծածկվեն մարմարակերտ թանկարժեք դամբարաններով,
Թող նրանց ճյուղներին փորագրվեն ոսկե արձանագրությամբ,
Ձեր ապաստանքարը, բարեգործնե՛ր, կլինի ոսկուց ավելի թանկ:

Ծանոթ. Հիմենեյը ամուսնության հին հունական աստվածն է:

Հիշատակված Ղազարը Աստվածաշնչի (Նոր կտակարանի) «Ազգատ Ղազարոսն» է. որ խորհրդանշում է աղքատությունը:

530. Ականավոր գործիչ Սիմոն Սիմոնովիչի տապանաքարին՝ 18 տող.

Simon Simonides, situs ect hie, cui bene credas

Gongrssise Charin omnia mella sua
Versibus hic rigidas ducebat montibus ornos,
Et dulcis svadae fluxerat ore melos.
Non illum latuit, quod pagina sacra docebat,
Quaeque canit Divae pagina justitiae.
Noverat et culti nutantia sydera mundi,
Noverat excellens, quod docet Hippocrates.
Principibus placuitque Viris, sat cultus ab illis
Illos consilio, mente bonaque juvans.
Jane Zamojski! Tuus fuit hic lectissimus olim
Gineas, rerum et flos, dulcis amorque tuus.
Illius ingenio posuisti maxima rerum,
Ille Thomamque tuum surgere dat studiis
Illustres Animae! vos hic locus unus habebat,
Et nunc una domus post pia fata tenet.
Nil magnum spirate, o nil mortabia corda!
Gloria nil vestra est, nil quoque divitiae.

Հրատ. Sadok Bara,zcs, 314.

Թարգմ.

Ասա Հանձչի Սիմոն Սիմոնիդին, որին բոլորը վառուհում էին.
(Քանզի) բոլորին նա ժողովեց (Charin՞) մեղրաջրով,
Բերեց այս վայրը՝ շրջապատված մռայլ լեռներով:
Եվ քարյայր երգեր էին բխում նրա շուրթերից.
Չէր թաքցնում այն, ինչին սովորեցնում է սուրբ մատյանը
Եվ այն, ինչ ուսուցանում է աստվածային ճշմարտության գիրքը:
Ճանաչեց և աստղերի առկայծումն (այս) հոյակապ աշխարհում,
Գերազանց ըմբռնեց և այն, ինչին սովորեցնում է Հիպոկրատը:
Եվ ամենից առաջ հաճելի էր այն մարդկանց համար,
որոնցից սովորել էր.
(Հետևել) նրանց խորհրդին, խելքին՝ հետևողական բարությամբ:
Յան Զամոյսկի, դու երբեմնի ամենաերջանիկ երկրամասն էիր.
Այստեղ էին քո (gineas՞) գործերն ու ծաղիկները
և քո քարյայր ոերը:
Նրա հանճարով դու ստեղծեցիր մեծափառ գործեր,
Նա և Թոմման (Ա.քվինացի՞ն) աճեցին քո վսեմ

ուսմունքով:

Լուսավոր այրե՛ր, միևնույն տեղում կիք դուք ապրում,

Եվ արդ միակ տունը ձեզ համար դարճավ այս հողը՝

բարեպաշտ կյանքից հետո:

Դուք այլևս ոչինչ չեք շնչում, Օ՛, ոչինչ, կշտամբված սրտեր.

Ջունեք դուք այլևս փառք և չունեք այլևս կարողություն:

Մանոթ. Սիմոն Սիմոնովիչը ծնվել է 1557 թ. Լվովում, աշխատել է Ջամոստիեում, որտեղ և մահացել է 1629 թ. մայիսի 5-ին: Դամբարանը կառուցել և դամբանականը դրել է բժշկագիտության դոկտոր- պրոֆեսոր Գասպար Շուլցը:

531. Գարրիել Գասպարովիչի տապանաքարին.

DOM

Cerne viator in hac Gasparidis ossa...

Մանոթ. Տապանաքարին տղուցված մարմարակերտ աստաքարը գանվելիս է եղել Լվովի ս. Ստավածածին եկեղեցու պատաշարի մեջ:

Հրատ. Sadok Baracs, 163-164.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԻ ՎՐԱ

532. Կլոր կնիք (տրամ. 30մմ), կրկնակի շրջանակի մեջ պատկերված է գառ, իսկ եզրերին փորագրված է.

ԱՑՍ Է ՄՈՐՀՆ ՄԱՆԳԵՐՄԱՆ ՏԱՆՈՒՏՐԱՑ:

Հրատ. Я. Дашкевич, АОП, 240, АЧП. 175.

533.Կլոր կնիք (տրամ. 31մմ), վրան գառան պատկեր. կրկնակի շրջանակի եզրերին -1 տոզ.

ԱՑՍ Է ՄՈՀՐՆ ԻԼՈՎԻ ՏԱՆՈՒՏԵՐԱՑ:

Մանոթ. Գործածվել է XVI- XVII դարերում:

Հրատ. Я.Дашкевич, АОП, 242, АЧП, 170, 175.

534. Կլոր կնիք՝ կամեոեցից. վրան՝ գառան պատկեր, կրկնակի շրջանակի մեջ՝ եզրերին.

ՍԱ Է ՄԼՈ⸗ՀՐ ՀԱՑԼՈ⸗Ց ԴԼԱ⸗ՏԼԱ⸗ՍՏԼԱՆ⸗Ի. Ի ԹԼՈՒԻՆ⸗ ՀԼԱՑՈՑ⸗ ՋՂԹ(1550):

Մանոթ. Ժամանակագիր Ստեփանոս Ռոշքան (1670-1739) թվագրել է ՋՂԹ (1350)-ով[147], որը շտկում է Ցա. Դաշկևիչը[148]: Գործածվել է կամենեցում և այլուր՝ որոշ ընդմիջումներով (թուրքերի տիրապետության ժամանակ՝ 1672-1701 թթ.) մինչև 1787թ.:

Հրատ. Ա. Дашкевич, АОП, 243, АЧП, 169, 175.

535. Կլոր կնիք՝ Հովհաննես- Մկրտչի պատկերով. վրան՝ գտո., գլուխը աջ շրջած, ձախ կոգմում՝ չեհ մագնատներ Զամոյսկիների օվալաձև զինանշանը:

Շրջանակի մեջ՝

ԱՅՍ Է Մ[Ո]ՀՐ ՋԱՄՈՍՑԱԻՆ ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԻ:

Հրատ. Ա. Дашкевич, АОП, 243, АЧП, 169.

536. Կլոր կնիք, դրոշակակիր գտոտան պատկերով (տրամ. 23մմ), եզրերին շրջանաձև փորագրված է.

(Siail+ivris+ARMENORUM+LEOP⌈OLIE NSIUM⌉.)

Թարգմ.

«Լվովի Հայոց իրավունքի կնիք»:

Մանոթ. Կնիքի արտատիպը պահպանվել է Կրակովի Ցագելոնյան գրադարանում: Առաջին անգամ նկարագրված է Օ. Բալցերի կողմից[149]: Գործածվել է բացառիկ հանդիսավոր իրադարձությունների ժամանակ իբրեւ «հատուկ կնիք»:

Հրատ. Ա. Дашкевич, АЧП, 171-172.

537. Մոմանավոր կնիք՝ Սահմանիալավից, դրոշակակիր գտոտան պատկերով (տրամ. 32x37մմ): Վահանակի շուրջ.

ՄՈՀՈՒՐԻՍ ՍՏԱՆԻՍԼԱՎՈՎԱ ՔԱՂԱՔԻՆ ՀԱՅՈՑ ԴԱՏԱՍՏԱՆԻ Է:

Մանոթ. Հուստպատկերը ցուցադրվում է Իվանո-Ֆրանկովսկի (նախկին՝ Ստանիսլավ) երկրագիտական թանգարնում: Սրճանագրության հայերեն ընագրի վերծանությունը Լ. Խաչիկյանինն է:

Հրտա. Ա. Дашкевич, АЧП,172-173, 175,

ԵՂԲԱՅՐՈՒԹՑՈՒՆՆԵՐԻ ԿՆԻՔՆԵՐ

538. Լվովի ս. Գրիգոր Լուսավորիչ ազգայրության ձվաձև կնքագրոշմն ունի հետևյալ պատկերը. կանգնած է Լուսավորիչը երկար մորուքով, դավազանը ձախ ձեռքին, գլխին՝ հայրապետական խույր, լուսապսակի մեջ: Կնքադրոշմի տրամագիծը՝ 27x34մմ, վրա շուրջանակի փորագրված է.

ԿՆԻՔՍ ԵՂԲԱՐՑ ՍԼՐ[ՔԼՈՑ]Ի ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ ԼՈՎ Ք[ԱՂ]Ա[Քի]:

---

147 Ստեփանոսի Ռօշքայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք, հրատ. Հ. Ոսկյան. Վիեննա, 1964. էջ 149-150:

148 Les historiens asmeniennes en Ukraine au XVIII-e siécle. «Revue des etudes arméniennes». N s. t. 9, Paris, 1972. էջ 389.

149 Corpusiuris Polonici, sect. I vol. 3 ed. O. Baizer. Cracoviae, 1906. էջ 402.

Մանոթ. Լվովի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եղբայրությունը հիմնադրվել է 1640 թ.: Կնքադրոշմների արտտիպերը պահպանվել են 1731-1751թթ. փաստաթղթերի վրա:

Հրատ. Я. Дашкевич, АОП, 247, АЧП, 175,

539. ՏՈՀՄԱՆՇԱՆՆԵՐ

Ուկրաինայի արևմտյան մարզերում եղած հայկական տապանաքարերի վրա կան զարդանախշերով շրջանակներիի մեջ վերցված խորհրդանշաններ, որոնց առաջինը ուշադրություն է դարձրել լեհ ականավոր պատմարան Վլադիսլավ Լոզինսկին[150]: Նա ղուդահեռներ է անցկացնում դերմանական դմերկների (Gemerk) հետ, որոնք դրոշմվում էին արտադրանքների, բնակարանների, այլև տապանաքարերի վրա: Հրատարակել է 110 խորհրդանշատն պատկեր, որոնցից շուրջ 40-ը վերաբերում են հայ դերդաստաններին: Տեղում կատարած մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք տոհմանշաններ են և վերաբերում են լեհահայ դաղութի ականավոր հայ ընտանիքներին: Այդ նույն պատկերները տեսնում ենք նրանց կնքադրոշմների վրա: Հետաքրքիր նմուշներ են Խաչքո Ավետիքենցի, Կրեսքո Զահնովիչի, Բողդան Իվաշքոյենցի, Քրիստափոր Ավեդիկ Բեռնատովիչի, Ծարուխովիչների, Ավդուստինովիչների, Յակեխիչների ե. այլոց տոհմանշանները, որոնց մի մասն ունի տարբերակներ: Որոշ տապանադրեր մեղ են հասել խիստ եղծված վիճակում, ուստի դրանց տոհմանշանները տրվում են հարցականներով:

Ներկայացնում ենք Լվովի հայոց եկեղեցու շուրջ եղած 46 տոհմանշան, որոնց զգալի մասն ընդօրինակել ենք տեղում:



150 Patrycyat i mieszczanstwo lwowskie wXVI i XVII wieku, przcz Wladyslawa Lozinskiego, wydanie wznowione z 107 ryginami w tekscie, we Lwowie, 1902, str. 386-391. Հետագայում լեհահայ գաղթօջախի հնասարակական և մասնավոր կնքադրոշների քննությանն ուշադրադարձավ քաջագիտակ մասնագետ Ցա. Դաշքսաոյո: «Բանբեր Մատենադարանի» հանդեսում (1980, N13, էջ 139-191) նա հրատարակեց 69 կնքադրոշմների պատկերներ՝ իրենց գրչագրերով և 56 տոհմանշաններ (նույն տեղում, էջ 186-187):



Սահմանիչներ
1538 թ.



Սահման հայ
16-րդ դ.

Ալեմբեկներ



Սահմանիչներ
1541 թ.

Նիկորումիչներ

Գրիգոր Իսրայելյանի
1712 թ.



Ալեքսեյ Կարդանուիչ
1645 թ.

Անհայտ հայ

Բարդուղ. Զհմորուիչ
1671 թ.



Անհայտ հայ



Սահմանիչներ



Պետրոս Զոհնովիչ
18-րդ դ.

Ցասկանիչներ
1704 թ.



Հոյակ պր.
Լազար
1602 թ.



Պետրոսյանք
1664 թ.



1.Նիկորովիչներ
2.Թիրումովիչներ
18-րդ դ.

Թեոդոս
Տատուրովիչ
18-րդ դ.

Սահականոս
Սահչկանիչ
1730 թ.

1483 թ.

Քրիստոֆոր
Ամատանովիչ
1728 թ.

Քրիստոֆոր
Ավետիք Բերնատովիչ
17-րդ դ.

Ցակոբ-Աստվածատուր
Բերնատովիչ
1770 թ.

ՏԵՌՆՈՊՈԼԻ ՄԱՐԶ

ՅԱԶԼՈՎԵՑ
(1947 թվականից՝ ՅԱԲԼՈՒՆՈՎԿԱ)

Յազլովեցը (լեհերեն՝ Զկնորսարան, Զկնորսաձեղ) Արեւելյան Գալիցիայի ընակավայրերից է: Այն գտնվում է Ուկրաինայի Տեռնոպոլի մարզի Բուչաչ շրջկենտրոնից շուրջ 140կմ հեռավորությամբ գեպի հյուսիս-արեւելք, Վիլխովեց գետի հովտում, Սարուզկա գետակի ձախ ափին: Հայերն այստեղ ընակություն են հաստատել գեռես XIV դարում[151]. կառուցել են գպրոց, եկեղեցիներ և մենաստան՝ Գրիգոր Լուսավորչի անվամբ[152], ունեցել են նեքին ինքնավարության իրավունք[153]:

Յազլովեցի հայ գաղութը համալրվեց 1475 թվականից հետո, երբ թուրքերը գրավեցին ղրիմահայության կենարոն կաֆա քաղաքը և հալածանք սկսեցին քրիստոնյաների նկատմամբ: Յազլովեց եկած հայ ազդարնակչության զգալի մասը խոսում էր թաթարերեն: 1615 թ. գեկտեմբերի 10-ին Ցա. Եժի Ռաձվիլի հրովարտակով յազլովիցահայությանը շնորհվեց արտոնագիր[154]:

Յազլովեցի հայ գաղթօջախի վիճակն անհամեմատ վատթարացավ 1676 թվականից հետո, երբ թուրքերը գրավեցին նաև այս քաղաքը. փակվեց մայրենի լեզվով գործող հայոց գպրոցը, իսկ նրա հռչակավոր անօրեն և ուսուցիչ Ասավածատուր Ներսեսովիչը (1645-1709) սաիպված էր հեռանալ քաղաքից:

1898թ.տվյալներով՝ գաղութն աճել է հայերի քանակը կազմել է 1200մարդ[155]:

1972թ. վիմագրական արշավախումբը եղավ Յարլուկովկա-Յազլովեցում: Այստեղ այսօր ոչ մի հայ չի ապրում. պահպանվել են հայոց անցյալի լուռ վկաները՝ հոգևոր-կրթական և քաղաքացիական բազմաթիվ կառույցներ:

Քաղաքի երբեմնի Հայկական կոչվող փողոցի վրա, րարձրահայաց ըլրին, վեր է խոյանում հայոց ս. Աստվածածին եկեղեցին՝ կառուցված միանավ, եռահարկ բարձր դանգակատնով: Ընդունված է կարծել, որ այս տաճարը հիմնադրվել է 1551 թվականին[156], թեև ճակատամասի շինարարական արձանագրությունը թվագրված է «Ռ թվին եւ Հ ընդ նմին» այսինքն՝ հայոց 1070 (1621) թվականին:

Յազլովեցի հայկական հուշարձաններից նշելի են Աղբյուր-ջրհորը՝ խորքում եղած գեղաքանդակ խաչքարով, և գյուղավանի ծայրում գտնվող կիսակործան հայկական գերեզմանոցի տապանաքարերը:

Անցյալ գարի վերջերին լինելով Յազլովեցում, Ցա. Բոլոդ-Անտոնևիչը ընգծրինակել է հաճկատար ս. Աստվածածնի մի շարք վիմագրություններ, որոնք տրամագրել է ավստրիացի հայա-

---

151 Սաճակ Թաղդյանի կարծիքով «1256 թուականների մօտ հայերն այստեղ ունէին մի եկեղեցի» (տե՛ս «Արարատ» , 1902, մարտ-ապրիլ, էջ 183):

152 Історія міст і сіл УкрРСР. Тернопільска область, Київ,1973, с. 192.

153 Ղ. Ալիշան. Կամենից, էջ 191., Մ. Բժշկյան. էջ 129,130: Տե՛ս նաև Н.П.Гайда, Памятники армянской культуры Язловца, проблемы их реставрации и адаптации на современном этапе. Тезисы докладов, с. 280-282.

154 В. Р. Григорян, История армянских колоний Украины и Польши (Армяне в Подолии), Ереван, 1980, с. 100-103. Далее–История.

155 «Բազմավէպ», 1898, սեպտեմբեր, էջ 421:

156 В.Р.Григорян, История, 100, 104; Н,П.Гайда, նշվ. աշխ., էջ 280-281:

դետ Ֆրիդրիխ Մյուլլերին՝ տպագրելու նպատակով: 1898 թ. Ֆ. Մյուլլերը վիեննայում հրատարակեց հիշյալ եկեղեցու բալավորի շինարարական արձանագրությունը[157]: Մինչ այդ Ցագլովեցի երկու արձանագրությունները լույս էր ընծայել Գ. Գալեմքեարյանը «Հանդէս ամսօրեայի» էջերում[158]:

ՀԱՅԿԱՏԱՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ

540. Մուսաքի բաբավորից վեր աղուցված ալաքարին՝ բանաստեղծական հանգավորմամբ 11 տող.

ՅԵԿԵՂԵՑԻՍ ԱՅՍ ԵՐԿՆԱԻՆ
ԱՆՈՒՆ ՍՐԲՈՑ ՄԾԱԾՆԻՆ
ԿԱ/ՏԱՐԵՑԱՒ Ռ (1000)ԹՎԻՆ
Հ(70) ԸՆԴ ՆՄ [ԻՆ] (1621)
ՈՂՈՐՄՈՒԹ[ԵԱՄ]Ք ՇՆՈՐՀՕՔ [ՓՐԿ]ՉԻՆ:
ԲՈՒՐՄՈՒՆՔ ԽՆԿՈՑ,[ԲՈՒՐ]ՄՈՒՆՔ ՉԱՀԻՑ
ԵԿԵՂԵՑՈՑՍ ԱՆՀԱՏ ԼԻՑԻՆ.
ՐԱՄԵԱԼ ՀԱՒՍԱՐ ԺՈ[ՂՈ]ՎՐԴԻՆ,
ԵԿԱՑ ԲՆԱԿԵԱԼ Ի ՄԻԱՍԻՆ/
ՑՆԾԱԼ, ԲԵՐԿՐԻԼ ՅԱԴԷՆ ԴՐԱԽՏԻՆ.
ՅԱԲԷԼ ԷՐԷՑ ԳԾՈՂ ՍՈՐԻՆ...ՉՏՐ ՈՂՈՐՄԻ:

Մանոթ. Փորագրված է աքրոստիքոսի ձևով: Զախակողմյան ծայրատառերից ընթերցվում է Յակոբ երեց:

Հրատ. «Հանդէս ամսօրեայ»,1897, յունուար, էջ 19-21:

541. Հարավային արահից դեպի եկեղեցի տանող մուսաքի ճակատակալ քարին՝ եղծված արձանագրություն, որից կարելի է ընթերցել 2 տող.

ՅԼԻ[ՇԼԱ]ՏԼԱ[Կ] Է ԴՈՒՌՍ ԲՈԼՈՐ...ՏՈՒԱՔ ՔԱՐ ՈՒ ԱՒԱՋ ԿՐԵՑԻՆ./ՔՄԱՂՑԻ ՇԱՀՄԻ ՅՈՒՍԻՆ... ՈՐԴՈՒՆ՝ ԲԱՆ ՄԻՔԱՑԻԼԻՆ ՄԾ ՈՂՈՐՄԻ:

Մանոթ. Քմաղցի Շահնը յուսին կապակցությունը, թերևս, նշանակում է Կամախցի Շահում հյուսնի, որի որդին եղել է բան (պարոն) Միքայելը: Արձանագրությունը եղծված է եղել դեռևս XIX դարի վերջերին՝ Գ. Գալեմքեարյանի ընդօրինակման ժամանակ: Լուսանկարը, ցավոք, չի ստացվել:

Հրատ. «Հանդէս ամսօրեայ», 1897, յունուար, էջ 19-21:

542. Խաչքար, կարմրաթույր կրաքարից. աղուցված է տղրյուր-ջրհորի արեւելյան

---

157 F. Müller, Zwei armenische inschriften aus Galizien und die Gründungs-Urkunde der armenischen Kirche in Kamenec Podolsk, "Sitzungsberichte der philosophisch-historischen Classe der Akademie der Wissenschaften", CXXXV, Bd. II Abh., Wien, 1896, p. 1-8.

158 Գ. Գ(ալեմքեարեան), Լեհահայոց քանի մը հայ արձանագրութիւնները, «Հանդէս ամսօրեայ», 1897, հունվար, էջ 19-21:

պատին՝ պատվանդանով կխոով չափ ջրի մեջ: Արձանագրության վերին մասը (լատիներեն) և վերջին ձախ կողմը քայքայված են: Լատիներենն ունի 4 տող.

1787/A. D. 1611/JACOBEUS ARM/ENUS/. BONO PYBLICO ⌈F⌉ECIT.

Եվ ապա՝ հայերեն.

ԽԱՉՍ ԵՒ ՇԻՆՈՂԱՑ ԱՅՍ ԱՂԲԻՒՐԻՆ Է ՅԼԻ֊ՇԼԱ֊ՏԼԱ֊Կ ԽԼՈ֊ՁԼԱ֊Ր ՄԱԿԱՐԻՆ ԵՒ ԵՂԲԱՐՑ ԻՒՐԼՈՑ֊ ԲԱՆ ՍՏԵՓԱՆՈՍԻՆ, ԱԼՍՏՈՒԱ֊ԾԱՏՐԻՆ. ԿԱՏԱՐԵՑԱՒ Ռ (1000)ԹՎԻՆ ԵՒ Ի Կ (60) ՅԱՒՈՒՐ...

Մանոթ. Շարունակությունը քայքայված է: «Բազմավեպում» լատիներեն արձանագրությունը թարգմանված է. Հակոբ Հայկազն հասարակաց բարւոյն համար շինեց: Կարծում ենք, կարելի է նույնացնել այս և Վարշավայի Ֆրենաու Դոմինիկյան վոդոցի վրա գանվող Սվենաի Յակակի եկեղեցու գավթում թաղված Հակորին: Հակորի անունը հիշատակվում է «արուչրի (լատունի) սախատակի վրա» եղած հետևյալ երկու արձանագրություններում.

543.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՈՂՕՐՄԱԾ ՀՕԳԻ ՄԵԾ ԽԱԹՈՒՆԻՆ՝ ԿՈՂԱԿՑՈՒՆ ՊԱՐՈՆ ՅԱԿՈՎԲԻՆ, ՄԱՅՏԵՍԻ ՄԻՆԱՍԻՆ ՈՐԴՈՒՆ՝ ԵԱՉԼՈՎԻՑԱ ՔԱՂԱՔԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԻՆ. ՅԱՆԳԵԱՒ Ի ՔՍ ԹՎԻՆ֊ՌՃԻԶ (1677) ԱՄՍՕ ԱՊՐԻԼԻ Զ (6) ՕՐՆ ՈՒՐԲԱԴ:

Եվ ապա՝

544.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՊԱՐՈՆ ՅԱԿՈՎԲԻՆ՝ ՄԱՅՏԵՍԻ ՄԻՆԱՍԻ ՈՐԴՈՒՆ, ԵԱՉԼՈՎԵՑԱ ԵՐԵՍՓՈԽԱՆԻՆ. ՅԱՆԳԵԱՒ Ի ՔՍ ԹՎԻՆ֊ՌՃԼԲ(1683) ՈՒՆԻՍ Ի...

Հրատ. «Բազմավէպ», 1898, IX, 421, նույն տեղում, հ. ԺԶ, ղեկտեմբեր, էջ 562, «Արարատ», 1902, հունվար, էջ 50:

545.Լեհական եկեղեցու մոտ, մենավոր տապանաքարին՝ 6 տող.

ՍԱՅ Է ՏԱՊ/ԱՆ ՄԱՐՏԻՐ/ՈՍԻՆ, ՈՐ ԷՐ ՈՐԴԻ ԽՈՃԱ ՄՈՒՐԱՏԻՆ. ՀԱ/ՆԳԵԱՒ Ի ՔՍ/ԹՎ. ՌՃ ԻՆ(1651):

546. Տապանաքար, սպիտակ մարմարից. այժմ քայքաքված և եղծված վիճակում գանվում է Տեոնոպոլի մարզային երկրագիտական թանգարանում: Լուսանկարը մեզ արամադրել է հիշյալ թանգարանի գիտաշխատող Ի. Պ. Գերեաան, որն արաանկարել է ավել Ալ. Զոլովսկու և Բ. Յանուշի՝ 1926 թ. հրաատարակած «Տեոնոպոլի վոյեվոդության անցյալը և հուշարձանները» գրքից (լուսատախտակ LIX)[159]: Տապանաքարը գանվելիս է եղել այս մարզի Պլոսիզա գյուղում: Կոթողը եզերված է րուսական զարդաքանդակներով: Արձանագրության սկզբնամասում՝ արևի խորհրդանշանն է, սաորև՝ գույզ ծաղկեփնջեր, ապա եզերող զարդահյուսն է: Ունի 9 տող.

---

159 Aleksander Czolowski, Bohdan Ianusz, Przesztoic i zalytni wojewodztwa Turnopolskiego, Turnopol, 1926.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ՀԱՆԳՔՍՏԵԱՆ/ ԱՄԱ-ՍԵԱՑՑԻ/ ՍԱԹԷԹ ՈՂԼՈՒ/ ՄՆԱՅ/ ՏԼԵՍԻ ՆԱՀԱ/ ՊԵՏԻ ՈՐԴԻ ԳՐԻ/ԳՈ-ՐԻՆ, ՈՐ ՓՈԽ/ԵՑԱԻ Ի ԿԵԱՆՔՍ/ ԹՎ.ՌՄՀԱ (1762)ԻՆ:

Լուսանկ.*155*

ՀԻՆ ԳԱԼԻՋ

Հին Գալիչում այժմ հայկական հուշարձանները չեն պահպանվել: Միակ արձանագրությունը, որ հրատարակել է ճարտարապետության գոկտոր Հովհ. Խալփախչյանը[160]*, գտնվելիս է եղել ս. Պանտելեյմոն եկեղեցու պատին: Այն ունի հետեյալ բովանդակությունը.*

547.

ԵՍ ԱՅՎԱՏՈՒՐՍ ԹՈՒԼԱՑԻՒ ՈՐԴԻՆ ԳԻՐԵՑ ԳԻՐՍ: ԹՎ. ՊՂԳ (1444):

Մանոթ. Լ. Ա. Խաչիկյանի կարծիքով հավանական է ԹՈՒԼԱՑԼԻՆ ընթերցումը[161]*:*

Մեր այցի ժամանակ եկեղեցին նորոգված էր, արձանագրությունը թերես մնացել է ավազի տակ:

---

160 О. Халпахчьян, Культурные связи Владнмиро-Суздальской Руси и Армении.

161 Լ. Ս. Խաչիկյան, Հայերը հին Մոսկվայում... էջ 50:

ՏՐՈՒՍԿԱՎԵՑ

Առողջարանային այս փոքրիկ քաղաքում հայկական պատմական հուշարձաններ գոյություն չունեն: Միակ հիշատակագրությունը, որ առնչվում է հայերին, դանվում է հանքաջրերի ըմպելասրահի պատին: Այն վերաբերում է Տրուսկավեցի հանքաջրերն հայտնաբերող հայազդի քիմիկոս-դեղագործ Թեոդորոս Թորոսևիչին (ծնվ. 1789 թ. Առանիսլավում, մահ. 1876 թ. Լվովում): «Տրուսկավեցյան հանքային ջրերը» դրքում[162] արժեքավորված է այս մեծ գիտնականի աեղն ու դերը Ուկրաինայի արևմտյան մարզերի, Գալիցիայի և Բուկովինայի հանքաջրերն ուսումնասիրելու գործում: Թ. Թորոսևիչն ավարտել էր Վիեննայի համալսարանի դեղագործական ֆակուլտետը (1812 թ.) գիտական հայտնագործությունների համար արժանացել ոսկեմեդալների: Մահացել է 86 աարեկանում Լվովում: 1989 թ. հանդիսավորապես նշվեց նրա ծննդյան 200-ամյակը: Լվովում առ այսօր գործում է Թ. Թորոսևիչի հիմնադրած դեղատուն- թանգարանը:

548. Հուշատախտակ՝ Թ. Թորոսևիչի դիմաքանդակով. սարև՝ 6 աող.

«ПЕРВОИССЛЕДОВАТЕЛЮ/ ЛЕЧЕБНЫХ МИНЕРАЛЬНЫХ/ ВОД КУРОРТА ТРУСКАВЕЦ/ ТЕОДОРУ ТОРОСЕВИЧУ/ К 150-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ КУРОРТА/. 1827-1977»[163].

Լուսանկ. 156

ԲՈՒԿՈՎԻՆԱ

XVIII-XIX դարերում ընդարձակվեց նաև Բուկովինայի հայկական դաղութը, որաեղի աղդարնակչությունը խաացել էր դեռևս XV դարում, երբ Մոլդավիայի իշխան Ալեքսանդր Բարին՝ առևաուրը զարդացնելու նպաաակով, այսաեղ էր հրավիրել հայ վաճառականներին՝ աալով նրանց ղգալի արաոնություններ: Աասիճանաբար ընդարձակ աիրույթներ ձեռք բերեցին կալվածաաերեր ասպետ Ծոն Խրիսաոֆ Արրահամովիչը, Աաեփան Վարդերեսովիչը և այլք: Մեծ համբուում ուներ Բուկովինայի հայ մաավորականությունը, որի ներկայացուցիչներից էին ժողովրդանվեր ուսուցիչներ Աասվածաաուր Ռամշքանը, կարապետ Կըինան (Գըինա), Գրիդոր Ութուճյանը և ուրիշներ[164]:

Ռումինիայի հայերեն վիմադրությունները հրաաարակել է Միքիսեդեկ Շաեֆըննեսկուն (1822-1907)[165]: 1882 թ. նա հրաաարակեց նաև «Մոլդավիայի հայկական եկեղեցիների արձանագրությունները»[166]:

ՉԵՌՆՈՎՑԻ

Չեռնովցիի մարզային կենարոնն է Պրուա դեաի ափին: Ուսումնասիրողների կարծիքով այս քաղաքի «բնակչության կեսը նախկինում եղել են հայեր»[167]: Մ. Բժշկյանի այցի ժամանակ Չեռ-

---

162 Н. Маринов, И. Пасека, Трускавецкие минеральные воды, М.,1978.

163 С Варданян, Кто он, Теодор Торосевич, газ. "Коммунист", 1982, 28 февраля, N 48 (14527).

164 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1983, էջ 684:

165 Նույն տեղում, էջ 682:

166 Episcopul Melchisedec, Inscriptiunile Bisericelor armenesci din Moldova, Bucuresti, 1882.

167 Ա. Խ. Թորամանյան, Մոլդավիայի հայկական պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1986, էջ 52: Այսուհետև՝ Ա. Թորամանյան:

նովցիում ապրել է ընդամենը 30 հայ ընտանիք՝ տեղափոխված Լեհաստանից: XIX դարի վերջերին և XX դարի առաջին տասնամյակներին հայ ազգաբնակչության քանակը անհամեմատ ավելանում է: 1909 թ. վիճակագրական տվյալների համաձայն միայն Զեռնովցիում ապրում էին 950 հայեր, որոնք զբաղվում էին առևտրով, արհեստագործությամբ, դյուզատնտեսական ապրանքների արդյունահանությամբ և վաճառքով:

Մ. Բժշկյանի վկայությամբ, մինչև 1740 թվականի հրդեհը քաղաքում գործել են երկու հայկական եկեղեցիներ, որոնք ոչնչացել են: Այժմյան կանգուն եկեղեցին՝ Գրիգոր Լուսավորիչը կառուցվել է Հովսեփ Գլավքայի ջանքերով[168]: Ճարտարապետը կիրառել է ուշ հայկական և ռոմանա-գոթական ճարտարապետության առանձնահատկությունները[169]: Կառուցված է կարմրավուն թրծած աղյուսով, 1870-1875թթ. ընթացքում, նախկին հայկական, այժմ՝ Պուշկինի փողոցի վրա: Գրիգոր Լուսավորիչ տաճարի հիմնադրման գործում մեծ ճիգեր է գործադրել հայոց հոգևոր առաջնորդ Ծլորիան Միսուլսկին: 1880 թ. սեպտեմբերի 16-ին տեղի ունեցած հայերեն ժամերգությանը մասնակցել է Ավստրիայի կայսր Ֆրանց Իոսիֆը[170]:

1879թ. Զեռնովցիում հիմնադրվեց հայկական դպրոց՝ առավելապես որբ երեխաների համար, որտեղ ուսանելու էին գալիս Գալիցիայից, Բեսարարիայից, ինչպես նաև Բուկովինայի տարբեր շրջաններից[171]:

Վիմագրական արշավախումբը մանրամասն զննեց Գրիգոր Լուսավորչի արտաքին և ներքին պատերը և ոչ մի արձանագրություն չհայտնարերեց: Արևմտյան մուտքի ճակատին առ. այսօր պահպանվել է շինարարական ընույթի լատիներեն և հայերեն արձանագրություն: Մեկ այլ արձանագրություն, որը լուսանկարել չկարողացանք լույսի պակասի պատճառով, գանվում է եկեղեցու հյուսիսային ավանդատան ներսում և փորագրած է լեհերեն:

549. Արևմտյանն մուտքի ճակատին, բավականին բարձր ազուցված մարմարե սալաքարին, 5-տական տող հայերեն և լատիներեն.

ԱՄԼԵՆԱՅԱՐՈՂԻՆ ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԼԵԱՄԲ
ԹԱԳԱՒՈՐԻՆ ԲԱՐԵԳԹԼՈՒԹԵԱՄԲ
ՀԱՅՈՑ ՕԳՆՈՒԹԼԵԱՄԲ
ԲԱՐԵՐԱԼՐԱՅՑ ՈՂՈՐՄՈՒԹԼԵԱՄԲ
ՅԱՐՈՒՑԵԱԼ Է ԱՅՍ ԵԿԵՂԵՑԻՆ:

550. Ապա՝ անմիջապես շարունակվում է լատիներենը.

168 Լ. Բաբայան, Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911, էջ 149:
169 Նույն աեղում, էջ 194-195:
170 Նույն աեղում, էջ 195-196. Ա. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 54:
171 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 684:



OMNIPOTENTIS PROVIDENTIA
AUGUSTISIMI CLEMENTIA
APMENORUM AUXILIO
BENEFACTORUM MISERICORDIA
RESUREXERE NAEC ECCLESIA
ANNO 1875.

Հրատ. Թորամանյան, 33-34,
Из истории, 116

551. Եկեղեցու ճախակողմյան խորանում, տապանաքարի վրա, 5 տող.

POMNIK/ GPZEGORZA/ JAKUBOWICZA/ PRZENIOSL SIE, DO WIECZNOSTI/ DNIA 17 MAJA, ROKU 1855.

ՉԵՌՆՈՎՑԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆ

552. Հուշասյուն, քառակող. գանվում է կենտրոնական մուտքի՝ հայրենական պատերազմում զոհված զինվորների տանթեռնում: Արևելյան կողմին՝ 10 տող.

Герой/Советского/Союза гв. Капитан-танкист/Оганьянц Грант/ Аракелович/, погибший в боях за /социалистическую/ Родину 26. 8. 1944./ Рождения 1918г./ уроженец г. Ташкент.

553. Կոթող, սև գրանիտից, քառակող. արևելյան կողմին՝ 6 տող.

Полковник/Оганесян/ Сергей Аркадевич/ 17.10.1905-13.11.1954./ Незаменимый мой друг,/ ты вечно будешь жить/ в наших сердцах./ Жена, дети.

ԻՎԱՆՈ-ՖՐԱՆԿՈՎՍԿ
(ՄԻՆՉև 1962Թ.՝ ՍՏԱՆԻՍԼԱՎ)

Ուկրաինայի Իվանո-Ֆրանկովսկ մարզային կենտրոնում և նրա վարչաապարածքային կազմում եղած մի շարք քաղաքներում ու գյուղերում առ այսօր պահպանվել են հայկական ղաամաճարաարապետական հուշարձանները: Այդպիսիք կան Մնյաաինում, Տիամենիցայում և այլուր:

Իվանո-Ֆրանկովսկ քաղաքի կենտրոնում՝ հրապարակի վրա, վեր է խոյանում հայոց ս. Աստվածածին եկեղմրեթ տաճարը, որի ճարտարապետը, հավանաբար, Բեռնարդ Մերեահինն է: Այն կառուցված է ուշ իտալական բարոկկոյի հորինվածքով, թեև շենքի ճակատը և կողքերին եղած դուրդ սրածայր վեղարներով աշտարակները, եռանկյունաձև ճակատամուտքը և րարավորը հատկանշում են ռոկոկոյի աղդեցությունը: Ա Աստվածածինը եռանավ շինություն է, արևելքից ունի խորաններ(գանձատեներ): Առաստաղը նկարազարդվել է XVIII դարի 60-ական թթ., լեհ հայանի նկարիչ Ատեցկու կողմից: Կատարողական վարպետությամբ առավել աչքի են ընկնում ավետարանիչների, առաքյալների ու մարգարեների պատկերները: Եկեղեցու բեմամերձ հատվա-

ծում կա 12 փայտաշեն քանդակ և 18 արձանիկ: Երկու մեծ բարձրություն ունեցող պատվանդաններ ունեն ս. Գևորգը, Մովսեսը, Պետրոս Առաքյալը և այլք: Ուսումնասիրողների կարծիքով, սրանց հեղինակը Պինզելն է (ըստ ոմանց՝ Մ. Պոլեևսկին)[172]: Բեմը ունի դորիական խոյակներ՝ օժտված առատ ձագարձական դեկորներով: Արանց կենտրոնում Մարիամ Աստվածածնի արձագատկերն է:

Մ. Բժշկյանի վկայությամբ, Իվանո-Ֆրանկովսկի հայոց այս եկեղեցին կառուցվել է 1741 թվականին, օծվել՝ 1750-ին[173]:

Կենտրոնական շքամուտքի աջ և ձախ կողմերին, ներքուստ, հատակից շուրջ 8 մ բարձրությամբ պատին ագուցված են սև մարմարե երկու հուշասալեր, որոնց վրա փորագրված են լատիներեն հետևյալ արձանագրությունները (մեջբերում ենք Մ.Բժշկյանի վերծանությամբ):

554. Ալեկոզմյանին՝ 12 տող.

Ա. Ս. Ի.

Templum hoc sub titulio immaculatae Concepcionis
Deiparae Virginis Mariae Sola providentia divina
erectum Rectoratu jacobi Manugiewicz Praepositi ejusdem
Templi, Protonotarii Apostolici et officialis Armenorum
S.Theol. Licent Illūsmae et Excellentissimae Dñae
Catharinae de Auro Polor Kossahowska Casstellanae
Kaminska ope et impensis consecravit.

D. T. O. M.

Templum hoc sub titulo immaculatae Conceptionis

Deiparae Virginis Mariae.Sola providentia Divina

erectum. Rectoratu Jacobi Manugievicz Praepositi ejusdem

Templi Protonotarii Apostolici et Officialis Armenorum

S.Thcol. Licent. Illus.mae e Excellentissimae D.nae

Catharinae Deauro Polok. Kossakowska Castellanae.

Kaminskae. Ope et inpensis consecravit.

Թարգմ.

Տաճարս Հանուն անարատ Հղության Կույս Մարիամի կառուցվեց միակ աստվածային սեփականության համար. հիմնարկվեց Հակոբ Մանուգևիչի տնօրինության ժամանակ: Օծվեց Հայոց առաքելական ս. եկեղեցու գործող հնավանդ ծեսով: Կառուցվեց Դեսուրո Պոլոկ ամրոցի տիրուհի լուսապայծառ. և բարձրապատիվ տիկին Կասաերինե Կոսակովսկայա Կամենիցացու միջոցներով:

---

172 Տե՛ս В. Грабовецкий, Армянская колония в Станиславе в XVII-XVIII вв. «Տեղեկագիր ԳԱ հասարակական գիտությունների», 1958, N 6, տե՛ս նաև Ցաւ. Դաշկևիչի «Ստանիսլավ» բառաճոդվածը «Հայկական Խորհրդային հանրագիտարանում», հ. 4, Երևան, 1978, էջ 428, ապա նաև՝ » Тезисы докладов V республиканской научной конференции по проблемам культуры и искусства Армении, 1982, с 259.

173 Մ. Բժշկյան, էջ 122:

555. Ձախակողմյանին՝ 10 տող.

Ill̃mus Excellentissimus D̃nus Jacobus Augustinowicz
Dei et Ap̃olicae Sedis gratia Archieppus
Leopoliensis Armenorum cum uno altari majori
cui imposuit reliquiae S.S. Anno Dni MDCCLXXII
22^da mensis Augusti.
Anniversarium quod diem dominicam ante
22^dam ejusdem cum solitis indulgentiis designavit.
Stante rectoratu ut supra.

Ill. mus Excel.mus et Rev. mus D.nus Jacobus Augustinovicz.
Dei et Ap.licae sedis Gratia Archip.pus
Leopoliensis Armenorum Cum uno altari majori
Cui imposuit Reliquias S. Martiris felicissim. Anno D.ni MDCCXXIII
Die 22 Mensis Augusti
Anniversarium quoque Diem Dominicam Ante
22 dum ejusdem, totis Indulgentiis desiguavit
stante etc. etc.

Թարգմ.

Պայծառափայլ և բարձրապատիվ պարոն Հակոբ Ավգուստինովիչը՝ Աստծու և առաքելական գահի ողորմությամբ Լվովի հայոց արքեպիսկոպոսը, Մեծ խորանում, ուր պահպանվում են երանելի նահատակների մասունքները Քրիստոսի ծննդյան 1723թ. օգոստոս ամսի 22-ից, տարեդարձը նշում էր քնքշագին սիրով յուրաքանչյուր կիրակի օր՝ 22 թվից առաջ:

Հրատ. Բժշկյան, 122-123:

Մանոթ. Ստանիսլավի առավել աչքի ընկած ժողովրդապետներից էին Պարսամովիչը, Զահնովիչը և այլք: Ս.Աստվածածին եկեղեցու ներսում թաղված է «ստանիսլավցի սրբակրոն քահանա Հակոբ Վարդերեսովիչը», վախճանված 1751 թ.[174]:

ԿՈՒՏԻ

Կուտի բանավանը գտնվում է Ուկրաինայի Իվանո-Ֆրանկովսկ մարզի Կոսովի շրջկենտրոնից մոտավորապես 6 կմ հեռավորությամբ: Լեհական արքունիքի 1715 թ. հուլիսի 15-ի հրամանագրով հայերին թույլատրվեց հիմնադրել իրենց բնակավայրը Գուցուլիայի տարածքում: Համայնքի հիմնադիրը եղավ Մոլդովայից այստեղ գաղթած մեծահարուստ վաճառական Շաոպե-

174 Մ.Բժշկյան, էջ 121:

յը[175], որը կտրել տվեց հարթավայրի անառատը՝ բնակարաններ կառուցելու և մշակելի հողեր յուրացնելու նպատակով: Մինչև օրս պահպանված կուտեցի հայերի բնակարանները կրում են մեր ազգային ճարտարապետության ինքնատիպ դծերը[176]: Մ.Բժշկյանի այցելության ժամանակ Կուտիում ապրող 300 վերդասականից 175-ը հայեր էին, ունեին իրենց դպրոցը՝ հայերեն ուսուցմամբ, որը գոյատևեց ընդհուպ մինչև XIX դարի 60-ական թվականները: Համայնքի հոգևոր առաջնորդը ենթարկվում էր լեհահայոց արքեպիսկոպոսին:

1973թ., մեր այցի ժամանակ, Կուտիում ապրում էր ընդամենը 12 հայ ընտանիք՝ կենցաղով փոքր-ինչ նման այժմյան դուցուլցիներին: Ինչպես Ուկրաինայի արևմտյան մարզերի շատ բնակավայրերում, այստեղի հայերը նույնպես վաղուց մոռացել են մայրենին. ազգանուններն անխտիր ունեն լեհական կամ ուկրաինական վերջավորություններ: Այդուհանդերձ, նրանք այժմ էլ չեն մոռացել, որ իրենց նախնիները եղել են բուն Հայաստանիցիներ (նրանց կարծիքով՝ անեցիներ): Տարեց կանայք երդում են հայերեն, հաճախ չհասկանալով երդի բառերի իմաստը[177]:

Կուտեցի հայերը կաթոլիկներ են. մինչև դարիս 30-ական թվականները ունեին իրենց քսյոնդը (քահանան), որը ժամերգությունը կատարում էր տեղի՝ Ա.Աստվածածնի անարատ հղության այժմ կանդուն եկեղեցում[178]: Վերջինս ուշադրանկյուն հատակագծով գմբեթակիր շինություն է՝ արևելյան զույգ խորաններով: Առաստաղն ամրողջապես պատված է որմնանկարներով, որոնք ցարդ չեն կորցրել իրենց թարմությունն ու հրապույրը: Առանձնապես աչքի են ընկնում Տրդատ Թագավորի հավաքի դալու, խորհրդավոր ընթրիքի և այլ տեսարաններ: Եկեղեցու մուտքի բարավորի արձանագրությունից տեղեկանում ենք, որ նրա վերջին նորոգումը տեղի է ունեցել 1900 թվականին: Տաճարի բեմահարթակի տակ է թաղված նպաստավորող մեծահարուստ Պետրոս Կիրկորովիչը, որի տապանաքարի տալաքարին լեհերեն փորագրված է 5 տող.

556.

D O M.

TU LEZY/ PIOTR KIRKOROWICZ ROMASZKAN FUNDATOR./ UMARL DNIA 25./5.1785.

Թարգմ.

Աստ ննջի Պիոտր (Պետրոս) Կիրկորովիչ Ռոմաշքանը (տաճարի) հիմնադիրը. վախճանվեց 1785 թ. մայիսի 25-ին:

ԿՈՒՏԻԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Կուտեցի հայուհի Մարիա Արկադևնա Դավիդովիչի ուղեկցությամբ մենք եղանք հայկական գերեզմանոցում, որը դանվում է Լենինի փողոցում՝ ճամփեզրին: Եղած տապանագրերն անխտիր լեհերեն կամ լատիներեն են: Այստեղ է թաղված Կուտիի վերջին հայ քահանան (քսյոնդը)՝ Սամուել Մանուդևիչը, որը վախճանվել է 1956 թվականին (տե՛ս արձ. N.558): Նկատի ունենալով, որ քաղաքատիպ ավանի ընդարձակման պատճառով հայկական գերեզմանոցը կարող է ոչնչանալ, նպատակահարմար գտանք ընդօրինակելու հետևյալ տապանագրերը.

---

175 Մ.Բժշկյան, էջ 127:

176 Н.В.Канос, П.И.Арсеннч, Армянские памятники архитектуры и искусства XVII в. в Ивано-Франковскои области УССР, табл. IV. Тезисы докладов, с. 258-260.

177 Կուտեցի հայերի երգերի որոշ ձուլշներ գրանցել է Ա.Մ. Նազինյանը:

178 Մ.Բժշկյան, էջ 129:

557.Կոթող, երկասաիճան պաավանդանով: Գերեզմանաքարի հարթ մակերեսին՝ 9 տող.

S. P.

GRZEGORZ JAKOB
JAKUBOWICZ
Burmistr i honorowj objwatel
miasta Kut
B czlonek wjdzialu radj pow.
Prezes Rady Szkolnej miejskiej
wlasciciel dobr
18.7. 1873 † 31.12. 1928.

Prosi o Pozdrowienie Anielskie.

Ś.P./ GRZEGORZ JAKÓB JAKUBOWICZ/ BURMISTR I HONOROWY OBYWATEL/ MIASTA KUT/ W GZLONEK WYDZIALU RADY POW./

PREZES RADY SZKOLNEY MIEJSKIEY/ WLASCICIEL DOBR./ 18.7.1873+31.12. 1928./ PROSI O POZDROWIENIE ANIELSKIE.

Թարգմ.

Սուրբ Ասավածծ. Գրիգոր Հակոբ Յակուբովիչ՝ Կուտիի քաղաքագլուխ և պատվավոր քաղաքացի, մարզային խորհրդարանի անդամ, արական դպրոցի խորհրդի նախագահ, կալվածատեր.18.7.1873+31.12. 1928: Խնդրում է հրեշտակների ողջույնը:

558. Մահարձան-կոթող.արևելյան կողմի հարթեցրած մակերեսին՝ 6 տող.

Ś. P./ TU SPOCZYWA KS. SAMUEL MANUGEWICZ/ PROBOSZCZ KANONIK PAR.ORM. W KUTACH/, BYLY SENATOR/ 1871+1956/. WIECZNY ODNOCZYNEK RACZ MU DAĆ. PANIE.

Թարգմ.

Սուրբ Ասավածծ: Աստ ննջի Կուտիի Հայոց քայոնղ, քարոզիչ-կանոնիկոս Սամուել Մանուգևիչը՝ նախկին սենատորը (1871-1956). Պարոնայք, հավիտենական խաղաղություն մաղթեցեք նրան:

559. Մահարձան-կոթող. արևմտյան կողմին ադուցված սալքարին՝ 6 տող.

D O M/

KŚ. JAN ŚMAGOWICZ/ PROBOSZCZ OB. ŁAC. I KANONIK W KUTACH/ PRZEŻYWSZY 72 LAT./ UMARL 25 SIERPNIA 1912 R./ WIECZNY ODPOCZYNEK RACZ MU DAĆ PANIE.

Թարգմ.

Քսյոնզ (քահանա) Յան (Հովհաննես) Շմագովիչ... Կուաիի քարոզիչ-կանոնիկոս. ապրեց 72 տարի. վախճանվեց 1912 թ. օգոստոսի 25-ին: Պարոնայք, հավերժական խաղաղություն մաղթեցեք նրան:

Լուսանկ. *157*

560. Հուշաւյուն, քառակող, արեւելյան կողմին՝ 9 տող.

ISAK/ MANYGIEWICZ./ OBYW. M. KUT/ 1828+1910./ RYPSYNA/ Z DAWIDOWICZOW/ MANUGIEWICZOWA. 5.3.1840+23.1.1924./ DR GRZEGORZ JAN/ MANUGIEWICZ/ 20.1.1874+15.5. 1924.

Թարգմ.

Իսահակ Մանուգևիչ, Կուաի քաղ(աքի) բնակ(իչ) 1828+1910. Հռիփսիմե Մանուգևիչովա՝ Դավիդովիչներից, 5.3.1840+23.1. 1924: Դոկտոր Գրիգոր Յան Մանուգևիչ, 20.1. 1874 +15.5.1924:

Լուսանկ. *158*

561. Տապանաքար. վրան՝ աղուցված մարմարե սալաքարին 7 տող.

TU ODPOCZYWY SZLACMET.../ ZRODZONAZ MANUGIEWICZOW WIEL/ SZOWA, KTORA WIEKU SWIEGO 19/... TY ZASNELA W BOGU DNIA 4 CODECZE/ R.P. 1807. PROSI OWESTONNIE/ DO BOGA.

Թարգմ.

Աստ հանգչի աղնվա(զարմ)...Մանուգևիչներից ծնված Վելշը. ննջեց առ Աստված իր կյանքի 19-րդ (տարում), հունիսի 4-ի օրը Տիրոջ 1807 թ(վականին): Ինգրում է դիմել առ Աստված:

562. Հուշաւյուն, քառակող. վերեւում՝ Քրիստոսի դիմաքանդակը դափնեպսակի մեջ: Շրջանակի տակ աղուցված մարմարակերա խաչանշանի տակ՝ 7 տող.

TU SPOCZYWA S.P./ ANNA/ LUKASIEWICZOWA/ Z KASPOWICZOW/ PRZEZYWŚZY 58 LAT ŻYCIA ZMARLA W DNIU 17 STYCZNIAR 1904/ OD WDZENCZNEGO SYNA.

Թարգմ.

Աստ հանգչի ա(ուրը) Հ(իշատակի արժանի) Աննա Լուկասևիչը՝ Կասպարովիչներից, ապրելով 58 տարվա կյանք. մահացավ 1904 (թվականի) հունվարի 17-ին: Երախտապարտ որդուց:

563. Հուշակոթող, որի խաչանշանի տակ՝ 7 տող.

TU SPOCZYWAJA ZWLOKI/ CRZEGORŻA/ JAKUBOWICZA/ SYNA WARTANA/ URODZONY 7 LISTOPADA 1907./ PROSI O POZDROWIENIE ANIELSKIE.

Թարգմ.

Այստեղ է հանգչում աճյունը Գժեգոժ Յակուբովիչի՝ Վարդանի որդու, ծնված 1907 թ. նոյեմբերի 7-ին: Ինգրում է Հրեշտակային շնորհավորանքը:

Լուսանկ. *159*

564. Հուշաքար, դոր? դրանիտից, վրան՝ թևավոր խաչ: կենարոնական պատվանդանին՝ 5 տող.

MARIA/ DAWIDOWICZ/ Z ISSAKIEWICZOW./ ZMARLA 17 KWIETNIA/ 1891.

Թարգմ.

Մարիա Դավիդովիչ՝ Իսակևիչներից: Վախճանվեց 1891 թ. ապրիլի 17-ին:

565. Կոթող, գորշ գրանիտից. վերնամասի գծազարդերի տակ՝ 5 տոգ.



MARIA/ ABGAROWICZOW/ JAEGERMANN/ 1881+1894./ PROSI...

Թարգմ.

Մարիա Աբգարովիչով Յաեգերման 1881+1894, խնդրում է...

566. Հուշաքար կրաքարից: Կենտրոնական մասում տզուցված մարմարե սալաքարին՝ 6 տոգ.



TU SPOCZYWA/ EMINAZ SIMONOWICŻ/ LUKASIEWICZA/ WL. DOBR./ YRODZONA 1828 R./ ZMARLA 1905 R./ CZESC JEJ PAMIECI.

Թարգմ.

Ասա հանգչի Եմինազ՝ Սիմոնովիչ-ներից, Լուկասևիչո. կալվածատիրուհի: Ծնվել է 1828 թ., մահացել է 1905 թ.: Գովք նրա հիշատակին:

Մանոթ.

«Եմինազ» անձնանունը վերա-կանգնում ենք հավանական ենթագրութ-յամբ: Ցավոք, լուսանեարն անհաջող է:

*567.*Կոթող, սև գրանիտից: Միջին պատվանդանին ագուցված սալաքարին՝ *9* տող.



TU/ SPOCZYWA/ CRZEGORZ/ JANOWICZ 25-10.1835+28.8.1904/ PROSI/ O POZDROWIENIE/ ANIELSKIE.

Թարգմ.

Ասա հանգչի Գրեգոժ (Գրիգոր) Ցանո-վիչը. 25.X.1855-28.VIII. 1904: Խնդրում է հրեշտակների շնորհավորանքը:

568. Հուշակոթող, վրան աղուցված մարմարե սալաքարի խաչի տակ՝ 6 տող. շարունակությունը եղծված է:

TU SPOCZYWA/ S.P./ ZACHARIASZ/ GREGOROWICZ./ PRZEŻYWCZY 72 LAT.

Թարգմ.

Աստ հանգչի ս(ուրբ) հ(իշատակով) Զախարիաշ Գրեգորովիչը, ապրելով 72 տարի:

569. Կոթող, դորշ ղրանիթից. արևելյան կողմին, պաաավանդանի վրա (երկրորդի), 7 տող.



TU SPOCZYWA/ S.P. DOMINIK/ NORSESOWICZ./ UR. 6.1.1822/ UMARL 30.1.1906./ PROSI O POZDROWIENIE/ ANIELSKIE.

Թարգմ.

Աստ հանգչի ս(ուրբ) հ(իշատակով) Դոմինիկ Նորսեսովիչը, ծնված 6. I. 1822, մահացավ 30.I. 1906: Խնդրում է հրեշտակների շնորհավորանքը:

Լուսանկ. *160:*

570. Դամբարան, դորշավուն կրաքարից. վրան՝ ամրացված մարմարե սալաքարին՝ 9 տող.



TU SPOCZYWAJA/ S.P./ PIOTR MOJZESOWICZ/+10.3.1908. PRZEZ. 74 LAT /S.P./ ANTONINA Z NIKOSIEWICZOW/ MOJZESOWICZOWA/ +15.11. 1911. PRZEZ. 71 LAT/. PROSZA O POZDROWIENIE ANIELSKIE.

Թարգմ.

Աստ հանգչի ս(ուրբ) հ(իշատակով) Պիոտր Մոյզեսովիչը +10.III.1908, ապրելով 74 տարի: Ս(ուրբ) հ(իշատակով) Անտոնինա Մոյզեսովիչը՝ Նիկոսևիչների (գերդաստանից), +15.II 1911 ապրե(լով) 71 տարի: Խնդրում են հրեշտակների շնորհավորանքը:

571. Կոթող, գորշ գրանիտից. միջին պատվանդանին՝ 4 տող.

MICHAL
WARTERESIEWICZ
ZMARL 17. SIERPNIA 1893.
W 53. ROKU ŻYCIA.

MICHAL/ WARTERESIEWICZ./ ZMARL 17 SIERPNIA 1893/ W 53 ROKU ŻYCIA.

Թարգմ.

Միքայել Վարդերեսովիչ. մահացավ 1893-ի օդոստոսի 17-ին, կյանքի 53-րդ տարում:

572. Կոթող, գորշ գրանիտից: Վերուստ ագուցված երկաթե խաչին ճուլածո եղանակով պատկերված է Քրիստոսի խաչելության տեսարանը, որի տակ՝ Մարիամ Աստվածածինը՝ ձեռքերը խաչած: Ունի 9 տող եղծված գիր.

I N K I/ TU SPOCZYWA S.P./ KS. IGNACY JAKUBOWICZ...

Թարգմ:

Յ(իսուս) Ն(ազովրեցի) Թ(ագավոր) Հ(րէից)

Աստ հանգչի ս(ուրբ) հ(իշատակով) քահ(անա) Իգնատիոս Յակուբովիչը:

Կուտիի գերեզմանոցում են թաղված նաև Աննա Նիկոսևիչը (1849-1908), Թեոդոր Անտոնիևիչը (1838-1902), Հռիփսիմե Յողեֆովիչը (1858-1923), Յակոր (1810-1882) և Գրիգոր (1809-1888) Յակուբովիչները, Ագոպսովիչները, Գրիգորովիչները, Յանովիչները, Լուկասևիչները և բազմաթիվ այլ հայեր, որոնք, ցավոք, պեռևս իրենց կենդանության օրոք արգելն կորցրած են եղել մայրենի լեզուն:

ԱՆՅԱՏԻՆ

Անյատին քաղաքը գտնվում է Իվանո-Ֆրանկովսկի մարզում: XIX դարի առաջին տասնամյակներին այստեղ ապրում էր 70 հայ ընտանիք[179], որոնք ունեին իրենց կրթամշակութային և հոգևոր օջախները: Հայկական պատմաճարտարապետական հուշարձաններից Անյատինում պահպանվել են կաթոլիկականին հատուկ ոճավորմամբ կառուցված Ս. Աստվածածին եկեղեցին և տակավ քանակությամբ հուշակոթողներ: Եկեղեցու ներսի պատերը ծածկված են եղել որմնանկարներով, որոնցից միայն հետքեր են մնացել հետագա նորոգումների պատճառով: Համեմատաբար լավ են պահպանվել առաստաղի նկարազարդումները: Այժմ եկեղեցու շենքը արամադրված է սպորտային կազմակերպություններին՝ ծառայելով իրրև մարզադահլիճ: Պատերի վրա ոչ մի արձանագրություն չի պահպանվել, թեև Մ.Բժշկյանը նշում է. որ այստեղ կան «դամբարանս հայ գրով»[180]: Քաղաքային գերեզմանոցում հայատառ արձանագրություններով տապանաքարեր չնկատեցինք. շրջագայելիս մեր ուշադրությունը գրավեց 8 տողանոց հետևյալ տապանաքարը:

---

179 Մ.Բժշկյան, էջ 125

180 Նույն տեղում:

573.



KSIĄDZ/ MICHAL/ ROMASZKAN/ PROBOSZCZ I KANONIK OBRZ. ORM. KAT./ W SNIATINE./ URODZONY 3º WRZESNIA 1823,/ ZMARL 24º LUTEGO 1906./ PROSI POZDROWIENIE ANIELSKIE.

Թարգմ.

Քայոնզ (քահանա) Միքայել Ռոմաշքան՝ Սնյատինի հայոց կաթոզիկե եկեղեցու քարոզիչ-կանոնիկոս: Ծն. 1823 թ. սեպտեմբերի 3-ին., վախճ. 1906 թ.փետրվարի 24-ին: Խնդրում է հրեշտակների ողջույնը:

ՏԻՄԵՆԻՑԱ

Տիմենիցա գյուղաքաղաքը գտնվում է Իվանո-Ֆրանկովսկ մարզային կենտրոնից շուրջ 10 կմ հեռավորության վրա: Այստեղ հայերն ապրել են գեռևս XVI դարի 40-ական թվականներից, սակայն թուրք-թաթարտկան արշավանքների պատճառով հեռացել են այլ վայրեր: Նրանք Տիմենիցայում կրկին հաստատվել են 1679 թ (գաղթել են Կամենեց-Պոդոլսկից): Սկզբում ունեցել են փայտաշեն եկեղեցի՝ հիմնադրված XVII դարի 80-ական թթ., իսկ 1750 թ. կառուցել են Ս.Աստվածածին և Ս.Կայեթան եկեղեցիները: Ս.Աստվածածինը նույնպես այժմ գոյություն չունի. այն քանդվել է դարիս 50-ական թվականներին:

Մ.Բժշկյանի այցելության ժամանակ այս քաղաքում ապրել է 50 հայ ընտանիք[181] Քաղաքային գերեզմանատան կենտրոնական մուտքի աջ կողմում հայ ազգաբնակչությունը 1828 թ. կառուցել է մի փոքրիկ մատուռ, որը քայքայված վիճակում գոյություն ունի առ. այսօր: Այս մասին նշված է Դոմինիկ Հիրովսկու աշխատություններից մեկում[182]: Ցավոք, նրա պատերին ոչ մի արձանագրություն չի պահպանվել: Կարևոր համարեցինք ընդօրինակել հետևյալ վիմագրությունը, որ լեհերեն գրված է տապանաքարերից մեկի արևմտյան կողին.

574. DOM
TU SPOCZYWA/ KS. JAN MARDYROSIEWICZ/ KANONIK I PROBOSZCZ OBR. ORM./ PRZEŻYWSZY LAT 70 SPOCZAB W PANU/ DNIA 20.12. 1926 R. CZESĆ.

---

181 Մ.Բժշկյան, էջ 124-126:

182 Dominik Chirowski, Dzieje miasta Tysmienicy (25 ilustrecyi), Wydanie I, Lwow, 1938.

JEGO NOPIOLOM./ 1927.

Թարգմ.

Աստ հանգչի քյոնդ (քահանա) Յան (Հովհաննէս) Մարգիրոսովիչը հայոց կանոնիկոսն ու քարոզիչը. ապրեց 70 տարի: Վախճանվեց ի տեր 20.12.1926 թ.: Հարգանք նրա աճյունին: 1927:

Մ.Բժշկյանի օրոք բազմաթիվ հայ ընտանիքներ են տեղափոխվել Գորոդենկայում (Սնյատինից 3 կմ հեռ.), Բերեժանիում, Լիսեցում («Լըշեց») և այլուր[183]: Հիշյալ վայրերում եղած հայոց կրոնական օջախները սպասարկում էին, իբրև կանոն, Լվովից հրավիրված քահանաները:

ԿԱՄԵՆԵՑ-ՊՈԴՈԼՍԿ

Ուկրաինայի այս հինավուրց քաղաքում XIV-XIX դարերի ընթացքում գոյատևած հայ գաղութը կարևոր դեր է խաղացել լեհահայոց հոգևոր-մշակութային կյանքում՝ պահպանելով իր նիստուկացը, ազգային հիմնարկությունները, ընկերությունները:

Հայագետներից առաջինը Ղ.Ալիշանն էր, որ հատուկ ուսումնասիրության առարկա դարձրեց Լեհաստանի և Ռումինիայի հայկական գաղթավայրերի կյանքը, հասարակական հարաբերությունների պատմությունը հնադույն ժամանակներից մինչև XIX դարի վերջին տասնամյակները[184]: Անշուշտ, մինչև Ղ.Ալիշանի «Կամենից» աշխատությունը, հրապարակում կար Մ.Բժշկյանի «Ճանապարհորդություն», ուր վկայված էին բազմաթիվ սկզբնաղբյուրներ լեհահայոց գաղթօջախների մասին[185]:

Վերջին տասնամյակներին հայագիտությունը հարստացավ Վ.Ռ. Գրիգորյանի եռանրակիռ աշխատություններով, որոնցում բազմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա ղատորոշված է հատկապես Կամենիցի հայոց գաղթօջախի կատարած մեծ դերը ողջ Պոդոլյեի գարգացած ավատատիրության գարաշրջանի պատմության մեջ[186]:

Ուսումնասիրողների կարծիքով՝ Կամենիցում հայերն սկսել են տեղեւս XII դարի վերջերին. մինչ տյդ նրանք բնակվում էին իրենց իսկ հիմնադրած Վելիկիե և Մալիե Արմյանե գյուղերում, որոնք գանվում են քաղաքից 22 կմ հեռավորությամբ (այժմ կոչվում են Վելիկոգալեսյե և Մալոգալեսյե):

Լեհական թագավոր Կազիմիր Մեծի (1310-1370) հրովարտակով Կամենիցի հայ ազգաբնակչությունը ձեռք էր բերել ինքնավարություն[187], որին վերջ արվեց 1790 թ. փետրվարի 3-ին[188]:

1475 թ., երբ թուրքերը գրավեցին Ղրիմի թերակղզին, բազմաթիվ հայեր տեղափոխվեցին

---

183 Նույն տեղում:

184 Ղ.Ալիշան. Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ հատուածով, Վենետիկ, Ս.Ղազար, 1896: Այսուհետև՝ Կամենից:

185 Մ.Բժշկյան. Ճանապարհորդություն ի Լեհաստան . Վենետիկ, 1830:

186 Վ.Ռ. Գրիգորյան. Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (16-րդ դ.). Երևան. 1963 նույնի՝ История армянских колоний Украины и Польши /Армяне в Подолии/, Ереван, 1980. Հեղինակի բազմաթիվ ուսումնասիրությունների մոտավոր ցանկը տե՛ս որևէ նրա աշխատության 258-259 էջերում:

187 Վ.Ռ.Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ..., էջ 32:

188 Նույն տեղում, էջ 42:

Պոդոլյե: Այսաեղ եկան նաե. Հայաստանից, Փոքր Ասիայի հայաշատ վայրերից, ինչպես նաե Մոլդովայից արատաշխած հոծ ղանգվածներ: XVI դարի 60-ական թվականների ավյալներով հայ ընտանիքների քանակը Կամենիցում հասնում էր 900-ի (այլ ավյալներով՝ 1200-ի)[189]:

1575 թ. այսաեղ ապրում էին 300 ընտանիք[190]: Հինգ տարի հետո, այսինքն՝ 1580 թվականին, Կամենիցում հաշվվում էր 400 ընտանիք[191]:

1672-1699 թթ. Կամենիցն ընկավ թուրքերի տիրապետության տակ[192]: Մեծապես տուժեցին քաղաքի անխախիտ դոլորը, ընդ որում նաե հայերն ու նրանց կրթամշակութային օջախները:

Մ.Բժշկյանի այցելության ժամանակ՝ 1820 թ., Կամենիցում ապրում էր ընդամենը 70 հայ ընտանիք[193], որոնք ունեին իրենց գպրության և մշակույթի օջախները[194], մեկ տաճկական հասնող վանքերն ու եկեղեցիները[195]: Թերես այդ էր պատճառը, որ Կամենիցը ձեռնադիր մատյաններում երբեմն կոչվում էր «Լեհական Էջմիածին»[196]: Այսաեղ են ապրել ու գործել ականավոր մատենագիրները՝ ժամանակագիրներ Հովհաննեսը, Օգսենտը, Հակորը, բանասաեղծ Հովհաննես Կամենիցացին՝«Պատմություն տաճերազմին Խոթինու» երկի հեղինակը, փիլիսոփա և ժամանակագիր Սաեփանոս Ռոշքան (1670-1739) և շատ ուրիշներ[197]:

Կամենիցը հայանի է իր պաշտպանական համակարգով՝ հզոր ամրոցով, որի կառուցման գործում եռանդուն մասնակցություն է ունեցել տեղի հայ համայնքը: Երկար տարիներ շարունակ (1768-1785 թթ.) ամրոցի պարեսը հայազգի գեներալ-լեյտենանտ Յան Դավիդն էր[198], որն իր ռազմավարական տաղանդի ու խիզախության շնորհիվ լեհական բանակի շարքային զինվորից հասել էր զինվորական այդ բարձր ասպիճանին: Ամրոցի պարեսի պաշտոնը այնուհետե ղբաղեցրեց նրա որդին՝ գեներալ-մայոր Յուզեֆ (Հովսեփ) Վիտաեն (1786-1789)[199]:

Հայերի նվիրվածությունն ու անվեհերությունը բարձր գնահատանքի արժանացնելով՝ Լե-

---

189 Նույն տեղում, էջ 19: Տե՛ս նաև՝ Մ.Բժշկյան, նշվ.աշխ., էջ 147, 159-160:

190 Վ.Ռ.Գրիգորյան, Համքարական կազմակերպությունները Պոդոլյեի հայկական գաղութներում, «Լրարեր հասարակական գիտությունների», 1981, N.5, էջ 80-88: Տե՛ս նաև՝ История армянских поселений Подолии. Автореф. Докт. Дисс., Ереван, 1975, с. 32.

191 Տե՛ս Փիրզադա Ղափանեցու ճանապարհորդությունը, «Բազմավեպ», 1882, հ.4, էջ 318

192 В.Р. Григорян, История ..., с. 78.

193 Մ.Բժշկյան, էջ 134-136

194 Տե՛ս Edvard Tryjarski, Ze studio.w nad rekopisami i dialektem kipczackim ormian polskich. „Rocznik orientalistyczny„. XIII, Warszawa, 1960, էջ 34

195 Վ.Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ..., էջ 26:

196 Նույն տեղում, էջ 28: Հմմտ. Е. Сецинский, Исторические ссвдения... 75.

197 Տե՛ս Sadok Baraqz, Նշվ. աշխ., էջ 94:

198 Գեներալ-լեյտենանտ Յան (Հովհաննես) Դավիդը եղել է ընչազուրկ հայի զավակ:Դոկտոր Ց.Անտոնին, հիմք ունենալով Նիմցովիչի վկայությունը, ներքոհիշյալ աշխատությանմեջ գրումէ. „Jan Witte...syn ubogicgo ormianina...„, Dr j. Antoni, Zameczki Podolskie na kresach Multanskich. T.II. Kamieniec nad Smotryczem, Warzawa, 1880,t. 2, str. 68-72 98 106. Յան Դավիդը եղել է նաև ճարտարապետ: Նրա նախագծով և մասնատրումով կառուցվել է Լվովի դոմինիկյան փառահեղ տաճարներից մեկը, որ կանգուն է առ այսօր քաղաքի կենտրոնում՝ Հայկական փողոցից ոչ հեռու: Յան Դավիդի ժառանգները հետագայում գրվեցին Վիտ, Վիտտե, դե Վիտտե:

199 Բազմաթիվ ավանդություններ են պահպանվել Յուզեֆ Վիտտեի և գաղեցկուհի Սոֆյայի (հետագայում՝ իշխանուհի Սոֆիա Պոտոցկայա) երիտասարդ տարիների միրային արկածների մասին: Պատմում են, թե ինչպես Յան Դավիդի տանը սղախնություն անող Սոֆյային պատանի Յուզեֆը փոխանակում է խոտինի ամրոցի թուրք փաշայի ձիու հետ:

Հստանի Յան Սոբեսկի թագավորը 1685 թ. հունիսի 6-ին արձակած հրովարտակում նշում էր. «...Պետք է, որ մենք հիշենք հայ ազգին պահպանող մարդկանց կտրիճությունն ու քաջագործությունը, որ նրանք ցույց են ավել այնքան դարեր տևող մեր համակեցության ընթացքում Կամենիցի, Ցողլովեցի և Լվովի, ինչպես նաև մյուս սահմանային բերդերի պաշտպանության գործում»[200]:

Մասնավոր վկայություններ են պահպանվել Կամենիցի հոդևոր օջախների և հասարակական ներքոհիշյալ կառույցների մասին[201]: Նախապես նշենք, որ Սադոկ Բարոնչը[202] և ուրիշներ (Դ.Սյարչինսկի, Տ.Գրոմնիցկի, Ա.Յու.Ռոլլե և այլք), հենվելով բանավոր ղրույցների վրա, գտնում են, որ Կամենիցի հայությունը եկեղեցի է ունեցել դեռևս 1250 թվականին[203]: Սակայն առավել հայտնիները եղել են հետևյալները.

1.Ս.Նիկողոյոս եկեղեցի: Կառուցվել է 1398 թ., Սինան Խութլուբեյի միջոցներով[204]: Նպաստավորողների ցանկում տարրեր տարիներին հիշատակվում են Էմին պեյը, պարոն Միտկոյի որդի Եոլ պեյը (1522 թ.) և ուրիշներ[205]: 1577 թ. նորոգման աշխատանքներին նյութական միջոցներով մասնակցել է Լվովի Ս.Ասավածածին եկեղեցու զանգակատունը կառուցող մեծահարուստ Անդրեաս Կոֆայեցին[206]: Ս. Նիկողայոսը քանիցս վերանորոգվել է[207] 1601-1602 թթ. Գրիդոր վարդապետի օժանդակությամբ վերանորոգումը կատարում է Կամենիցի դատավորներից Միխնոն, որ ծախսերը հոգալու համար դիմել էր Խոջա Անդրեասին[208]: Ժամանակին Ս. Նիկողայոսի պատերին ագուցված են եղել մարմարակերտ սալաքարեր[209]: Ղ.Ալիշանը նշում է. որ այս եկեղեցում է պահվել Սինան Խութլուբեյի դիմանկարը «Սինան՝ որդի Խութլուբեյի. Պեէ (1398)» մակագրությամբ[210]:

2. Գրիգոր Լուսավորիչ. դտնվելիս է եղել Հայկական շուկայի հարավային կողմում, հրկիզվել և ոչնչացել է[211]:

3. Ս.Աստվածածնի վերափոխման եկեղեցի. քանդվել է 1672 թ. թուրքերի ռմբակոծության ժամանակ[212]:

4. Ս.Սարգիսյանոս Նախասկիզբ. կործանվել է վերոհիշյալ թվականին, նույն պատճառով:

5. Ս.Խաչ. Կառուցված է եղել քաղաքից դուրս հայապատկան կալվածում[213]: Օգսենա Կա-

---

200 Վ.Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ..., էջ 36 История..., с. 60

201 Մանրամասն տե՛ս С.Шкурко, Армянские архитектурные памятники в городе Каменец-Подольске, ИФЖ,1968, N.2 с. 233-243.

202 Sadok Baracz, Rys Dziejów ormiańskich, str. 92.

203 В.Р.Григорян, История..., с. 55.

204 Մ.բժշկյան, էջ 141:

205 Նույն տեղում:

206 Նույն տեղում, էջ144:

207 Sadok Baracz, Cudowńe obrazy Matki Najswiętszej w Polsce, Lwow, 1891, str. 103. Е. Сецинский, Исторические сведения о приходах и церквах Подольской епархии. 1. Каменецкин уезд. ,, Труды подольского епархиального историко-статистического комитета,, вып. 7 , Каменец -Подольский, 1895, с. 79.

208 В.Р.Григорян, История..., с. 78.

209 Նույն տեղում:

210 Ղ.Ալիշան, Կամենից, էջ 132-133:

211 Վ.Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ ..., էջ 28:

212 Նույն տեղում:

213 Ղ. Ալիշան, Կամենից, էջ 72:

մենիցացու վկայությամբ այրվել է թաթարների կողմից, 1613 թ.[214]:

6. Ս.Աստվածածնի ավետման եկեղեցին այժմ կանղուն է. այն դանվում է Ս.Նիկողայոսից շուրջ 30 մ հեռավորությամբ դեպի հարավ-արեելք: Կառուցվել է 1522թ.: Մատենադրական աղբյուրների համաձայն այստեղ է թաղված դեպի Հռոմ 1626 թ. ճամփորդելու մեկնած Մելիքսեդեկ կաթողիկոսը[215]: Այս դողարիկ կառույցի ներսում է ղեռեղված այժմյան քաղաքային արխիվը:

7.Կուսանոց. դանվելիս է եղել վերոհիշյալ եկեղեցու րակում: Կառուցվել է 1600 թ. Գրիդոր եպիսկոպոս Վարադեցու ջանքերով[216]:

8. Եպիսկոպոսարան. Դանվելիս է եղել Ս.Նիկողայոսի րակում[217]:

9. Դպրոցոցն. այրվել է 1602 թ., վերանորոդումն ավարտվել է 1604 թ. Նոյեմբերի 8-ին, պարոն Տոնուշի որդի Միխնո երեցփոխանի վերակացությամբ[218]:

Սարև անուն առ. անուն կթվարկենք այն պատմական հուշարձանները, որոնք հասել են մինչև մեր օրերը: Ս.մխոփելով նշենք, որ կամենիցի հայ համայնքը երկարաև, համառ. պայքար մղեց իր աղդային դիմադիծը պահպանելու համար, սակայն ժամանակի անրարենպաստ իրադրությունը և հատկապես Հռոմի պապի դործակալների և ունիթոռների խժդժությունները պատճառ. հանդիսացան, որ ասաիճանարար մարեր շատերի մոտ աղդային ինքնադիտակցության ղդացումը: Յակուբի որդի Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսը 1652 թ. ընդունեց կաթոլիկությունն. 1666 թ. հոկտեմբերի 1-ին ժամերդությունը կատարվեց լատինական-կաթոլիկական ծեսով, թեև մինչև 1689 թ. դոյություն ուներ այստեղ հայ-լուսավորչադավան եպիսկոպոսը[219]: Մայրենի դպրոցները փակվեցին և ապա լուծարման ենթարկվեց հայոց ավանդույթներով ապրող երրեմնի ծաղկուն այս դաղթօջախը:

Հայկական պատմական հուշարձաններից այժմ Կամենեց-Պոդոլսկում պահպանվել են.

1. Հայկական ջրհորը- 1638 թ.(կենարոնական հրապարակում, նախկին քաղաքապետարանի մոտ).

2. Սեֆեր Հովհաննեսովիչի տունը -1735 թ. (կենարոնական հրապարակ, 5).

3. Հայադդին Ն.Զայկովսկու տունը- XVIII դար. (կենարոնական հրապարակ, 10).

4. Քաղաքադլուխ Բալասանովիչի տունը- XVIIIդ. (Ա.Բեբելի փ.5).

5. Հայկական տուն- XVIII դ. (Ա.Բեբելի փ. N.2)

6. Յակուբ Լեոնովիչի տունը-1646 թ. (Խորհրդային հրապարակ, N.7).

7. Զինվորական նահանդապետ դեներալ Յան Դավիդի տունը-XVIII դ. (Խորհրդային հրապարակ, N.10, այժմյան Հրշեջ խմբի շենքը).

8. Հայոց Խորհրդարանի նկուդահարկերը XVII դ. (Յան դը Վիտաեի տան և դպրոցի արանքում).

---

214 Նույն տեղում:

215 Նույն տեղում:

216 Վ.Ռ.Գրիգորյան Կամենեց-Պոդոլսկ.... էջ 28:

217 Մ.Բժշկյան էջ 140:

218 Նույն տեղում:

219 Նույն տեղում էջ 40: Կամենեցի պատմական հուշարձանների մասին տե՛ս И.С. Винокур, Г.Н.Хотюн, Каменец-Подольский гос.историко-архитектурный заповедник, Львов, 1981. Каменец-Подольский историко-архитвктурный заповвдник. сост. А,И.Качуровскии, О.Н. Винюков, В.И.Донец и др. Кивв, 1984 (на укр. яз.).

9. Ս.Մարիամ եկեղեցու հիմնապատերը- XVII դ., այրվել է 1604 թ.(Գոդոլի փ., 2).

10. Հայկական երկհարկանի տուն XVII դ. (Գոսպիտալնայա 1).

11. Հայկական հիվանդանոց- XV-XVII դդ.(մինչև 1614 թ. փայտաշեն, Գոսպիտալնայա N.3).

12. Հայապգի Հովհաննեսի տունը-1620 թ. (Գոսպիտալնայա 4).

13. Հայկական տուն՝ որմնանկարներով-XVII դ. (Գոսպիտալնայա N.6)

14: Հայկական տան հիմնապատեր- XVII դ. (փլուղվել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ).

15. Հայկական շուկա XV դ. (այժմյան Խորհրդային հրապարակը).

16. Հայկական աշտարակ -XVI դ. (շրջդործկոմի բակում).

17.Հայկական առևտրական րորսան -XV-XVII դդ. (այժմ վերանորոգված).

18. Ս.Նիկողայոս եկեղեցու պորտալը- (եկեղեցին քանդվել է 1936 թ.)

19. Ս.Նիկողայոս եկեղեցու զանգակատունը[220] XVI դ. (այժմ՝ վերանորոգված, ինտերյերի պատերին հայտնաբերվել են որմնանկարներ)

20. Հայ միանձնուհիների մատուռ -XVII դ. (շուրջը՝ գերեզմանոց).

21. Հայ հոգևորականության ընակելի շենքը-XVIIIդ.

22. Հայկական փողոցը (այժմ՝ Յա. Սվերդլովի փող.).

23. Ս.Գևորդ վանքը - 1706 թ. (Ռ.Լյուքսեմբուրգի փող. 25).

24. Ս.Ստեփանոս մատուռ - XVI դ. (այժմ՝ կործանված) և այլն[221]:

Համեմատ-Պոդոլսկից պրակում գետեղված 21 արձանագրություններր հայերեն են, մասամբ լատիներեն և լեհերեն, որոնցից մի քանիսր 1830թ. հրատարակել է Մ.Բժշկյանը: Ահա դրանք.

575. Տապանաքար, սղիտակ մարմարից, քանդակազարդ. վերին աջ և ձախ կողմերը քայքայված: Այժմ գտնվում է քաղաքի երկրագիտական թանգարանի ցուցասրահում: Մի կողմին՝ 3 տող.

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՀՌԹԵՆԻ ՈՐԴԻ ՍՕՂՕՄՕՆԻ ԿՕՂԱԿԻՑ ԳՈՒԼԻԳԻՆ, ՈՐ ՓՈԽԵՑԱԱՒ Ի ԿԵԱՆՆ ԹՎԻՆ ՌՄԺԲ (1763)-ԻՆ:

Մանոթ. Հռթենը Հարությունի բարբառային ձևն է:

Հրատ. Кучук-Иоаннесов, Древности Вост. т. II с. 48.

576. Տապանաքար, սպիտակ մարմարից, գեղաքանդակ րուսական ղարգերով: Նախապես ղանվելիս է եղել Ս.Նիկողայոս եկեղեցու մուտքի մոտ[222]: Արձանագրության տակ պատկերված է ծաղկաման, որի կողքերից վեր են խոյանում նոճու ղույգ ծառեր: Վիմագրված է 14 տող ռիթմիկ ոտանավոր.

---

220 Զանգակատունը վերջերս նորոգվեց ճարտարապետ Ա.Դ. Տյուպիչի նախագծով. դա քառազմբեթ բազմահարկ կառույց է՝ հայկականին ոչ հարազատ:

221 Հուշարձանների մոտավոր ցուցակը կազմելիս մեզ աջակցել է հնագետ-պատմաբան Ս.Կ.Ծկուռկոն:

222 В.Р.Григорян, История..., с.78



ՇԻՐԻՄՍ ԱՅՍ ԷՐ ՊԱՀԱՐԱՆ
ՄԱՐՄՆՈՑ ՍՈՐԻՆ ԺԱՄՈՒ/ՄԱՀ-
ՎԱՆ,
ՋԻ ՍԱ ԷՐ ՄԵՇ ՎԱՃԱՌԱԿ/ԱՆ.
ՈՎԱՆԷՍ ԱՅՍ ԱՋՆՈՒԱԿ/ԱՆ:
ՍԱ ԷՐ ԵՐԿՐԷՆ ՓԱՐՍԻԱԿԱՆ՝
ԵՐԵԻԱՆՈՒ ՄԵՐՋ ԳԻՒՂԱԿԱՆ,
ՔԱՆԱՔԵՌՈՒ ԱՆՈՒԱՆԱԿԱՆ
ՏԱՆԷ ՈՐԴԻ ԲԱՐԱՂԱՄԵԱՆ.
ՍԱ ԷՐ ԵՂԵԱԼ ԵՐԵՍԱՄԵԱՆ,
ՅՈՐԺԱՄ ԷՀԱՍ ԿԵՆԻՆ ՎԱԽ-
ՃԱՆ.
ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ԷՐ ԹՎ.ՌՃ/
ԿԶ (1717)-ԻՆ.
ԱՐԴ ՈՐՔ ԴԻՊԻՔ ԸՍՊՕ/ՍԱԿԱՆ
ԵԻ ԸՆԹԵՌՆՈՒԻՔ ՍԻՐ/ՈՎ ԱՅՍ-
ՔԱՆ
ՄԻ ԽՆԱՅԷՔ ԶՀԱՅՐ ՄԵՂԱՑՆ
ՀՈԳՈՒՆ[223]

Հրատ. Բժշկյան, 138:

Լուսանկ. 161:

577. Խաչքար, փոքր չափսերի, ագուցված է Աստվածածնի վերափոխման (այժմ սխալմամբ կոչում են Ս. Նիկողայոս - Գ. Գ.) եկեղեցու հարավային պատին, արտաքուստ՝ 2 տող.

Թվ.ՌԳ (1554). ՍՔ ԽԱՉՍ... ՅԻՇԱՏԱԿ Է...ՍԻԱՅԻ...

ԿԱՄԵՆԵՑ-ՊՈԴՈԼՍԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Այստեղ են պահպանվում Կամենիցի XVIII դարի հայ դաստավորներից մեկի՝ իրավարան Նիկոլայ Զայկովսկու և նրա տիկնոջ՝ Սոֆիայի արծաթե շրջանակների մեջ վերցրած դիմակարները, որոնք այստեղ են բերված այժմ գոյություն չունեցող հայկական գերեզմանոցից: Նկարների հետևներում կան սև մելանով լատիներեն կատարված հետևյալ դրություններ.

578. Ն. Զայկովսկու դիմանկարի շրջանակին՝

---

223 Ի՛.Բժշկյան, 138, կրճատումներով: Х.Кучук-Иоаннесов, Сведения и заметки о старинных армянских рукописях и армянских надписях, входящихся в пределах России /(II. Армянская надпись в Каменце-Подольском). „Древности Восточные„ т.IV, М., 1913, с. 10):

Եւևի կողմին. AD 1762:

D. T. O. M.
PORTRETUM NOBlis Spblis NICOlAI CZAY
KOWSKI, advocati Cudicis Armen,
Civitatis Camenecensis Podoliae Ecclesiae
S. Nicolai PontiF & Conf.
Pro Perennie Memoria Aplicatum is, idem, vixit
Annorum 63. obiit
anno Salutis 1762, die 14 sbiis...

D.T.O.M.
/PORTRETUM/ NOBILIS SPBLIS NICOLAI CZAY/KOWSKI, ADVOCATI CUDICIS ARMEN,/ CIVITATIS CAMENECENSIS PODOLIAE ECCLESIAE/ S. NICOLAI PONTI EU CONF/ PRO PERENNIE MEMORIA APLICATUM IS, IDEM, VIXIT/ ANNORUM ... OBIIT/ ANNO SALUTIS
1762. DIE 14 SBIIS...

Թարգմ.

Քեզ՝ Աստուն, բոլորից ամենահզորին.

Կամենեց-Պոդոլսկի Ս. Նիկողայոս առաջնորդանիստ եկեղեցու ազնվատոհմ և. ականավոր հայ քաղաքացի փաստաբան, իրավարան (գաստավոր) Նիկողայոս Զայկովսկու դիմանկարը՝ երիզված հավերժ հիշատակի համար: Նա ապրեց... տարի, վախճանվեց Տիրոջ 1762թ. սեպտեմբերի 14-ին:

579. Նկարի եռևում նույնպես սև մելանով գրված է.

Սոֆիա Զայկովսկայայի (նախաամուսնական ազգանունը՝ Քրիստոֆովիչովա) գիմանկարի արծաթե շրջանակը նույնպես հարուստ է բուսական զարդանախշերով, թեև համեմատաբար ավելի պարզ է, քան Ն.Զայկովսկունը:

Շրջանակի երեսին՝ վերուստ փորագրված է A D (յամի տեառն), ստորև 1768:

D. T. O. M.
PoRTRETUM
Nobilis ac sibbis Zophia de krzyszatofowicze, pie
defuncti Nicolai Czaykowski Advocati Cudicis
Armecivitatis Came Pod, Consortis Vidua Ecclesia·S·
Nicolai Pontificis &c. conf: properenni Memoria
Aplica tum: Vixit Annorum 60 obiit Anno
Salutis, 1768 die 4ta Aprilis.

D.T.O.M./

PORTRETUM/

NOBILIS AC SIBLIS ZOPHIA DE KRZYSZTOFOWICZE,/ PIE DEFUNCTI NICOLAI CZAYKOWSKI ADVOCATI LUDICIS/ ARME CIVITATIS CAME/ POD, CONSORTIS VIDUA ECCLESIA.S./ NICOLAI PONTIFICIS 8C. CONF:/ PROPERENNI MEMORIA/ APLICATUM: VIXIT ANNORIZM 60 OBIIT ANNO/ SALUTIS, 1768 DIE 4 TA APRILIS.

Թարգմ.

Քեզ՝ Ատծուն բոլորից ամենահզորին.

Կամենեց-Պոդոլսկի վախճանված փաստարան, իրավարան (դատավոր) Նիկողայոս Զայկովսկու այրի, Ս. Նիկողայոս առաջնորդանիստ եկեղեցու հայ հավատացյալ Սոֆիա Քրիստոֆովիչի դիմանկարը՝ երիզված հավերժ հիշատակի համար: Ապրեց 60 տարի. վախճանվեց Տիրոջ 1768 թ. ապրիլի 4-ին[224]:

580. Տապանաքար, կրաքարից, գլխավերևում՝ թևավոր խաչ: Երբորդ տողի շարունակությունը եղծված է: Հայանարերվել է Ա. Նիկողայոս եկեղեցու աարածքի պեղումներից: 12 տողից վերծանվում է.

Ա.ՅՍ Է ՏԱ.ՊԱՆ ՀԱՆԳՍՏԵՆԻ/ Ի ՅԵՐԿՐԷՆ Ա.ՐԵԻԵԼՅԻ,/ Ի ԳԱ.ԻԱ.ՐԷՆ ՆԱ.ԽՋՎԱ.ՆՅԻ/ ԵՒ Ի ԳԵՂՋԷՆ ՄԱ.ԱԸՐՎԱ.ՆՅԻ...ԸՆԹԱ.ՅՔ..., ՈՐ ՓՈԽԵՅԱ.Ի ԿԵՆԱ.ՅՍ Ա.ՍՏԻ ԹՎԻՆ ՌՔՃԻԳ (1774)... Ա.ՊՐԻԼԻ ԻԱ (21):

Ծանոթ. Մասրվան (Մասրեվան) դյուղը դտնվում է պատմական Գողթն գավառում. այժմյան Օրդուբադի շրջանի Նասրվաղ դյուղն է:

581. Արճանագրության բեկոր. վրան՝ 3 տող.

...ՌԱԻՆ.../⌈Դ⌉ՈՒՍՏՐ ԲԷԹՐԻ/ՍՆ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ...

Լուսանկար, *162*

582. Խաչքարի բեկոր, կրաքարից, րուսական և երկրաչափական զարգերով: Արճանագրությունը ճախից կոտրված մասում է: Ընթերցվում է.

...ԽԱ.Զ...Ա.ԻԳՆ⌈ԵԱ.Ց⌉. ԹՎԻՆ ՋՂԷ(1548):

Ծանոթ. Լուսանկարը մեզ տրամադրել է ճարտարապետ Ե. Մ. Պլամենիցկայան:

583. Տապանաքար, կրաքարից, շրջված վիճակում գրված է ս. Նիկողայոս եկեղեցու նկուղահարկի սենյակներից մեկի ծածկի մեջ: 12 տողից հնարավոր է ընգօրինակել 8-ը.

C. L. NIOWROWM /ZOROWZ KTORY CHMIC/...RZEZYWSZYTAT/...

KOKITIZ 40 DG MPZGLUAPRZENIOS.../ SLEDCNIESMIEB TRINESCI MARI.../ NAZASSKE NG WSZY LAT 40 D 2/ MARCA ROKI 1777...

Թարգմ. ...որն ապրեց 40...գնաց դեպի անմահություն...ապրելով 40 տարի. (մահացավ) 1777 թ. մարտի 2-ին:

---

224 Բնագրից թարգմանեց Մխիթար Հերացու անվ. Բժշկական համալսարանի դոցենտ Հ. Թ. Առաքելյանը:

584.Տապանաքար, կրաքարից. նույն տեղում աղուցված է ծածկի շարվածքի մեջ: Սկիզբը և շարունակությունը եղծված են: Կարդացվում է 6 տող.



...ZWlO... GABRYELA I /ANNY BOGDA/NOWICZOW MALZAKOW/ RADCOW MIASTA / KAMIEN/CA PODOL...

Թարգմ. ...աճյունները Գաբրիել և Աննա Բոդդանովիչ ամուսինների. Կամենեց-Պոդոլսկի քաղաքային խորհրդարանի անդամների...

Մանոթ. Նկատի է առնված այն պարագան, որ Գաբրիել Բոդդանովիչը կամենիցահայության ինքնավարության վերացումից հետո(1787թ.) ընարած է եղել քաղաքային խորհրդարանի անդամ:

585. Տապանաքարի բեկոր, կրաքարից: Վերին մասը չարդոտված է. ընթերցվում է կիսեղծ 5 տող.



...ATC.../WOYTA NACYI ORMIEN/SKIE YCLATO/ IKOSCI ZILO/ ...NE R. 1732.

Թարգմ.

...(Ասա հանդչին) ոսկորները հայոց ազգի վոյթ (դասավոր)...(մահ.) 1732 թ.

Մանոթ. Լուսանկարը մեզ տրամադրել են Ե. Պլամենիցկայան և Ա. Տյուպիչը, որոնք հայանարերել են պեղումների ժամանակ:

Լուսանկ.*163*

1984թ. վերջերին Կամենեց-Պոդոլսկի ս. Նիկողայոս եկեղեցու զանգակատան հատակից գանձախույզները հայտնաբերել են մեծարժեք գանձ. եկեղեցական սրբազան մասունքներ (խաչեր, սկիհներ, մանրապահարաններ, սափորներ, խունկրեր), ճարմանդներ, շղթաներ և այլն, որոնք պատրաստված են ասրերը ժամանակներում՝ հիմնականում ոսկուց և ընդելուզված են թանկարժեք քարերով(ավելի քան 400 նմուշ): Դրանց մեջ կան նաև այնպիսի իրեր, որոնք ունեն հայերեն և լեհերեն արձանագրություններ:

Կամենեց-Պոդոլսկի քաղխորհուրդը և միլիցիայի ղեկանմունքը թույլ ավեցին պրոֆեսորներ Վինոկուրի, Բաժենովի և երկրագիտական թանգարանի աշխատակիցների ներկայությամբ ծանոթանալ գանված իրերին: Մեզ համար կարևոր արժեք էին ներկայացնում հեաևյալ արձանագրությունները.

586. Սպիտակ արծաթյա. ոսկեջրած, պատվանդանի ստորև՝ շրջանաձև.

ՅԼԻՀՇԼԱՏԼԱԿ Է ՍԿԻՀՍ ՊՐ ՄԻԽՆՈ ԵՐԵՍՓՈԽԼԱԽԻՆ. ՇԻՆԵՑԱԻ ԹՎ. ՌԼ (1581):

Ծանոթ. Միխնո երեցփոխանը պարոն Տոնուշի որդին էր, որ 1604թ.նորոգել տվեց Կամենիցի հայոց գպրատունը: Արձանագրության սկզբում արված է նվիրատուի առհմանշանը, որի վրա ընթերցվում են լատիներեն M(Միխնո) T(Տոնուշ) տառերը: Միխնո երեցփոխանը հիշված է իրրև գատավոր և պատասխանատու 1574 թ. փետրվարի 16-ին Կամենիցում տեղի ունեցած հայկական գատարանի նիստերից մեկի ժամանակ[225]: Նա բազմաթիվ նվիրատվություններ է կատարել էջմիածնին, Կամենիցի, Լվովի, Զամոսայեի, Կիևի, Լուցկի հայոց եկեղեցիներին և հայ հոգևորականության առանձին ներկայացուցիչներին[226]:

587. Ոսկեճուլլ սիրա, որի կենտրոնական մասում փորագրված է 5 տող.

DO KOŚCIOLA ORMIAŃSKIEGO DO MATKI BOSKIEJ/ FUNDACYI EMILY DE/ YLICAL Z POZA/TOWSKICH DNIA 30 SIERPNIA/ 1855 ROKU/ WAZY 81 3/4 ZOLOTNIKÓW.

Թարգմ.

Հայոց Աստվածամայր եկեղեցուն՝ Պոզատովսկիներից (Պոժատովսկիներից) Էմիլիայի նվիրատվությունը. 1855 թվականի օգոստոսի 30-ի օրը: Կշռում է 81 3/4զոլոտնիկ:

Ծանոթ. Մեկ զոլոտնիկը հավասար է 0,4265 գրամի, ուստի այս մասունքը կշռում է 34,87 գրամ ոսկի:

588. Հայկական ջրհորի մուտքի պատին ագուցված ցուցանակին՝ ուկրաիներեն 3 տող.

ВІРМЕНЬСКИЙ/ КОЛОДЯЗЬ./ 1638.

Թարգմ. *Հայկական ջրհոր 1638:*

Արձանագրություններ, որոնք այժմ տեղում չկան

589. Ս. Նիկողայոս եկեղեցու մերձակայքում կառուցված շենքի ծածկագերաններից մեկի վրա.

---

225 Վ.Ռ.Գրիգորյան, Կամենեց- Պոդոլսկ..., էջ 214-215

226 Տե՛ս Н. Ш. Рашба, Общественно-политическая жизнь армянскои колонии в Каменце-Подольском /XVI-XVII вв/ ИФЖ. 1976, N 4 с. 110.

Աւգնականութ֊եամ֊բ Հօր ամենակալի եւ թելադրութ֊եամ֊բ Որդւոյն Միածնին ստացաւ զաւուրս դպրոց սրբ. Ծառուկն որդի Խաչերեսին ի վայելումն անձին իւրոյ եւ զաւակաց իւրոց. Ա֊Ծ բարով վայելել սացէ. ամէն: Թվ. Հայոց ՌՀԴ (1625), մարտի ամսո ԺԵ (15):

Հրատ. *Բժշկյան, 154-155:*

590. Նուէն սան *առաջին աենյակի առաստաղի գերանին.*

Երանեւոլ է այր, որ երկնչի ի Տ֊եառնէ֊եւ դնայ ի ճանապարհս նորա. ղվաստակս ձեռաց քոց կերիցես: Երանի է քեզ եւ բարի եղիցի ա֊յր֊ս քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քո որդիք քո:

Անուն Ա֊յ շինեցաւ տունս ի վայելումն սրբ. Կիւրեղին. որպէս նորաւունկ ձիթենւոյ շուրջ ղսեղանով ջով. այնպէս աւրհնեսցի ամենայն մարդ, որ երկնչի ի Տ֊եառն֊է տեսցէս դու զորդիս որդւոց քոց խաղաղութիւն ի վերայ ելի:

Հրատ. *Բժշկյան, 154-155:*

*591.*Հայոց Արևւտրի *սան դուռն րարավորին.*

Զօրութիւն իմ եւ օդնութիւն իմ Տ֊ր. եւ եզեւ ինձ փրկութ֊իւն... սրբ. Յովաննէս շինել եւոուր, զի կեր...թվ. ՌԿԹ (1620):

Ծանոթ. *Արձանագրության ապակետիպը գտնվում է Լվովի գիտական թանգարանում (տե՛ս ԿՓ. 00796):*

Հրատ. *Բժշկյան, 154, Кучук-Иоаннесов, 49.*

592. Բնակելի մեկ այլ սան ճակատին.

Ա֊ծատուր որդի Տ֊ր Պետրոսի. թվ. ՌԼ (1581):

Հրատ. *Բժշկյան, 154:*

593. Առաստաղի գերաններից մեկի վրա.

Ի թվ. ՌՀԴ (1725):

Հրատ. Բժշկյան, 154:

594. Բնակարաններից մեկի մուտքին.

Անուամբ Ա֊ծայինն ի վայելումն սրբ Մելքոին:

Հրատ. *Բժշկյան, 155:*

Ս. Նիկողայոս եկեղեցու գանգակատուն

Զանգակատան կառուցման աշխատանքներին մասնակցել են Կամենիցի հայ համայնքի բոլոր անդամները: Նպաստավորողները եղել են պան Հրիհորը (Գրիգորը)՝ Զատիկի որդին և նրա կին Ազիզքոն: Զուլածո զանգերը նվիրել են Խաչատուր եպիսկոպոսը և վերոհիշյալ Գրիգորը (մահ. 1565թ.)[227]*:*

595. Զանգակատան պատին ապուցված ևև մարմարե սալաքարերին փորագրած է

227 Բժշկյան, էջ 142:

եղել հետևյալ բանաստեղծությունը, որն իր այցի ժամանակ վերծանել է Մ. Բժշկյանը.

Յ՞ Որգի Հօր միածին,
Որ բարձրացար վերայ խաչին.
Վ՞ Ադամայ նախաստեղծին,
Եւ ամենայն զարմից նորին.
Մարմնովդ եդար դերեզմանին,
Հոգւովդ իջեր դժոխք ներքին,
Զաւարն առեր ըզգերուղին.
Եւ դարձուցեր առ Հայրենին.
Աղաւեցեր ղԱդամըն հին,
Եւ ընդ նմա՛ ըզծնունդ նորին,
Որ էր մեռեալ Համանդամայն,
Զգեցուցեր ղփառս առաջին.
Նոյնպէս շնորհեա և ար սոցին,
Զուռճարս այս շինեալ սուրոզին.
.....իսու փիրղատայո՛ն.
.....
Որ հարազատ զոլ անուանին,
Ողորմեսցի .....րու երկր.
Այլև կանանց հոգւո սորին,
Մարուխնային, Թուրվանտային.
Եւ ամենայն ծննդոց...
Զի ի հալալ արդեանց գանձին,
Ետուն իւրեանց յղճմամբ սրտին.
.....
Այ.....
.....յս աշտարակին.
Ի յօգնութի՛ այս մեծ ծախին,
Ընծայեցն զա՛...իլին.
Վ՞ հոգւոյ իւրոց ծնողին.
Զոր ա՛րն դասէ խորանս վերին.
Ով ոք .....
Ասասցէ զար ողորմին.
Նորա յանցանքն միշտ քաւեսցին,

Ի թվին ՌՀ. Հայոց մեծին.
Զր թիւ աւելին,
Յորժամ զսա կտրց.....
.....
Ղկսուքեն սր Մովսիսին.
Աթառապահ սր Գրիգորին.
Եւ բարևպաշ.....որջորջին.
Յինէն նորոգ բանս այս լիցին,
Պատճառ. ընաւլի.....
.....
...լոկ անուամբ երէց կոչիմ»:

Ծանոթ. Ինչպես տեսնում ենք, պանգակատունը կառուցվել է հայոց ՌՁՐ(1633)թվականին, Մովսես Խոռանանցի կաթողիկոսի մահվանից առաջ: Այժմ վերանորոգված է ուկրաինացի ճարտարապետ Ա. Դ. Տյուպիչի նախագծով:

Հրատ. Բժշկյան, 138-139:

596. Ս. Նիկողայոսի մոտ եղած տապանաքարերից մեկի վրա եղել է հետևյալ արձանագրությունը.

Թվ. ՉՂԲ (1343). վախճանեցաւ եւ թաղեցաւ պան Յակորը՝ Ամիրջանի որդին[228]:

ԺՎԱՆԵՑ

Դնեստր գետի ափին հիմնագրված այս գեղատեսիլ փոքրիկ քաղաքը վարչատարածրային բաժանմամբ այժմ մտնում է Խմելնիցկու մարզի Կամենեց-Պոդոլսկի շրջագծի մեջ, շրջկենտրոնից ընդամենը 24կմ հեռավորությամբ գետի հարավ-արևմուտք: Հայերն այստեղ եկել են Մոլդովայից և Վալաքիայից, XVII գարի 70-ական թվականներին[229]: Դաղութի ծաղկման ժամանակ եղել են 100 տուն հայեր[230]. նախապես ունեցել են փայտաշեն եկեղեցի, որի փոխարեն հոգևոր հովիվ Գրիգոր Գանկևիչի նախաձեռնությամբ կառուցում են ս. Գրիգոր անունով քարաշեն տաճար[231]: Օծումը տեղի է ունեցել 1791 թ. նորոգումից հետո[232]: Ճարտարապետական հորինվածքով ս. Գրիգորը կրել է եվրոպական վերածնության կնիքը: Մ. Բժշկյանի օրոք (1820-ական թթ.) Ժվանեցի հայկական եկեղեցին անցել էր լեհերին, և հայ համայնքն արդեն ենթարկվել էր ուծացման[233]:

Այստեղ են թաղված Ժվանեցի շատ հայորդիներ, ընդ որում նաև Գրիգոր Գանկևիչը[234]:

---

228 Ա. Սուրենյանց, ճանապարհորդութիւն դեպի Խերսոնի նահանգ, Բեսարաբիա և Պոդոլիե. «Մուսեաց աղավնի եւ ծիածան Հայաստանեայց». Թեոդոսիա, 1863, օգոստոս 1, էջ 246:

229 В.Р.Григорян, История...., 138-139.

230 Մ. Բժշկյան, էջ 131-132:

231 В.Р.Григорян, История..., с. 139.

232 Մ. Բժշկյան. էջ 132-133, 134:

233 В.Р.Григорян, История..., с. 114.

234 Там же, с. 139.

Մեղ չհասած տապանագրերում հիշատակվող տեղանուններից կարելի է կռահել, որ ժվանեցի հայության ղգալի մասը ծագումով եղել է բուն Հայաստանից. այստեղ թաղված են էրգրումցիներ, բասեցիներ, Մարբեվանից գաղթածներ, պատմական Հայաստանի այլևայլ գավառներից եկածներ:

Հայկական վիմագրություններ ժվանեցում չեն պահպանվել. ոչնչացել է հայոց եկեղեցու շուրջ եղած գերեզմանոցը: Մեղ է հասել մի բեկոր, որի լուսանկարը սացել ենք կիևցի ճարտարապետ Ե. Մ. Պլամինեցկայայից: Դա խաչքարի վրա եղած պակասավոր գրություն է, ընդամենը 3 տող.

597.

ԱՐԱԾ
ՀԱՅՈ
ՆԿՏԵՄ

...Ա.Ռ Ա.Ծ/...ՀԱ.ՅՈ⌈Յ⌉.../ ԴԵԿՏԵՄ⌈ԲԵՐԻ⌉...

Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

598. Պետրոս Առաքյալի նկարի վրա՝

Սուրբ Պետրոս Առաքյալ. յիշատակ է Արզրումցի Մահտեսի Սարգսի որդի ծառա Սահակին:

Հրատ. Кучук-Иоаннесов, 49.

ՄՈԳԻԼԵՎ-ՊՈԴՈԼՍԿ
(ՆԱԽԿԻՆ՝ ՄՈՅՈՎ, ՄԵՅԼՈՎ)

Գտնվում է Վիննիցայի մարզում՝ Դնեսար գետի ձախ ափին: Հայերն այստեղ մշտական բնակություն են հաստատել XVIII դարի առաջին տասնամյակներից, թեև մինչ այդ էլ նրանք այս քաղաքում հաճախ եղել են առևտրական նպատակներով: Ունեցել են ներքին ինքնավարություն: Գրավոր աղբյուրների վկայությամբ՝ Մոգիլե-Պոդոլսկի 12000 բնակիչների մոտավորապես կեսը եղել են հայեր, որոնք ղրաղեցրել են քաղաքի կենարոնական հատվածը՝ շուկայի մոտ: 1729 թ.[235] (ըստ Սադոկ Բարոնչի՝ 1742-1743 թթ.)[236] կառուցել են Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի նպատակավորողներն ու հովանավորները եղել են Պոտոցկի իշխանները[237]: Շինարարական աշխատանքները ղեկավորել է Շիմոն Քժիշտոֆովիչ եպիսկոպոսը: 1772 թ. մայիսի 21-ին հիմք է գրվում նոր՝ ս. Աստվածածին եկեղեցուն, որի կառուցումն ավարտվում է 1791 թ.[238] Մ. Քժշկյանի

---

235 Տե՛ս Հ. Ջավրյան, Լեհահայոց գաղթը և ներքին կյանքը,...«Հայրենիք», Բոստոն, 1929, մարտ, էջ 83:

236 Sadok Baracz, Rys dziejo.w ormianskick, Tarnopol, 1869, s. 156-157.

237 В. Р.Григорян, История, с.164.

238 Там же. с. 165.)

նկարագրությամբ այս եկեղեցին եղել է ընդարձակ, լուսավոր, հնգախորան կառույց՝ դույզ աշտարակներ ունեցող զանգակատնով[239]: Փոքրիկ մատուռ է կառուցվել հայոց գերեզմանատանը, որի տապանաքարերը արձանագրված են եղել հայերեն և լեհերեն լեզուներով[240]: Եկեղեցու պատերին հայերեն արձանագրություններ է տեսել պատմաբան Կաեերինա Մելնիկը[241]:

Մ.Բժշկյանի շրջագայության ժամանակ Մոգիլև-Պոդոլսկում ապրել են 60 հայ ընտանիքներ[242]: Դոկտոր Վ. Ռ. Գրիգորյանը, 1972 թ. ամռանը լինելով այստեղ, տեղեկացել է, որ Ս. Աստվածածնի անարատ հղության հայոց եկեղեցին քանդվել է դեռևս 1930-ական թվականներին, իսկ մատուռը՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Ուսումնասիրողը լեհական կոչվող գերեզմանատանը նկատել է մոգիլևահայերի մի քանի տապանաքարեր[243]: Մեր հավաքչական աշխատանքների ընթացքում (1973թ.) քաղաքի գլխավոր ճարտարապետը պատմեց, որ հայոց եկեղեցու շինաքարերով պատշգամբել է քաղաքային բաղնիքի շենքը:

599. Գերեզմանոցում շրջելիս մեզ հետաքրքրեց հատակագիծ մի տապանաքար, որի մակերեսին լեհերեն փորագրված էր.

S. P. /KAITAN/WARTANOWICZ,/ ZYL LAT 58. UMARL 3 DNIA LYSTOPADA 1906 R. /POKOI TOBIE DROG...MAZU.

Թարգմ.

Կայետան Վարդանովիչ. ապրեց 58 տարի. վախճանվեց 1906թ. սեպտեմբերի 3-ին. հանգիստ քեզ թանկագին...

Մոգիլեւի առաջին հայ եպիսկոպոս Յու. Քժիշտոֆովիչի գերեզմանը գտնվելիս է եղել հայկական եկեղեցու ներսում: Տապանաքարի լեհերեն արձանագրությունը հրատարակել է Վ. Պորուգ-Գուրսկին[244], որի վեծանությունը ռուսերեն թարգմանությամբ հրապարակել է Վ. Ռ. Գրիգորյանը.

600.

«Здесь покоится первый епископ католиков-армян России,кавалер Ордена Св. Анны первой степени Юзеф Кжиштофович, проживший 54 года, сканчался 28 января 1816г.»[245].

Թարգմ.

«Ահա հանգչի Ռուսիայի հայ կաթոլիկների առաջին եպիսկոպոս, Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանի ասպետ Յուզեֆ Քժիշտոֆովիչը, որ ապրեց 54 տարի. վախճանվեց 1816 թ. հունվարի 28-ին»:

---

239 Մ. Բժշկյան, էջ 160:

240 Լ. Մազիրյանց, Հայոց մեծ գաղթականությունը ԺԲ դարում և նորա վիճակը Լեհաստանում, «Արաքս», գիրք Ա, հունիս, ՍՊր, 1889, էջ 135: Տե՛ս А.Афанасьев-Чужбинский, Поездка в южную Россию, ч.II, Очерки Днестра, СПб, 1863, с. 236.

241 К(атериина) М(ельник),Путевые очерки. Подолия. Оттиск из "Киевской старины", 1885, декабрь, с. 162.

242 Մ. Բժշկյան, էջ 160:

243 В.Р.Григорян, История, с. 166, 167-183.

244 W. Pobóg Górski, Powiat Mohylowski w gubernii Podolskiej, Krakow, 1902, str. 203.

245 В.Р.Григорян, История с. 171.

ՕԴԵՍԱՅԻ ՄԱՐԶ

Վիմագրական արշավախումբն Օդեսայի մարզում ուսումնասիրել է Օդեսա, Իզմայիլ, Կիլիա և Բելգորոդ-Դնեստրովսկի քաղաքների հայկական պատմական հուշարձաններն ու նրանց արձանագրությունները:

ՕԴԵՍԱ ՔԱՂԱՔ

Օդեսայում հայկական հուշարձաններ, բացի գերեզմանոցից, այժմ չեն պահպանվել: Մ. Բժշկյանի շրջագայության ժամանակ՝ XIX դարի սկզբներին Օդեսայում ապրում էին 30 ընտանիք հայեր, որոնք եկած են եղել Գրիգորիոպոլից և չեն ունեցել եկեղեցի[246]: Նոր եկեղեցին՝ Գրիգոր Լուսավորչի անվամբ, կառուցված է եղել ավելի ուշ շրջանում[247], այժմյան Խորհրդային փողոցի վրա՝ քաղաքի N 18 միջնակարգ դպրոցի տեղում: Հայրենական պատերազմի ժամանակ ռմբակոծվել է և ամբողջովին ոչնչացվել: Կանգուն ժամանակ ունեցել է հետևյալ արձանագրությունները, որոնք այս պրակում ղետեղում ենք Լ. Մելիքսեթ-Բեկի վերծանությամբ[248]:

601. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու արեւմտյան մուտքին՝ ներքուստ.

Օգնականութեամբ Աստուծոյ կառուցաւ զանգակատունս Օտէսայի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյս Հայոց արդեամբք գերազնիւ հայուղն մայեօր Թօմայի Նացուլովեանցի[249], յամին սեառն 1884 եւ յազգական 1333:

Հրատ. Меликсет-Беков, Из материалов, էջ 15-16.

602. Տաղանդաքար, գտնվելիս է եղել եկեղեցու հարավարեւմտյան մուտքի մոտ: Հայտնաբերվել է շինարարական աշխատանքների ժամանակ.

Այս է ուսպան Տարպղոնցի խուղանջի...

Ծանոթ. Տարպղոնցի պետք է կարգալ Տրապիզոնցի:

Հրատ. Меликсет-Беков, Из материалов, 16.

603. Խերսոնի նահանգի Օչակով (նախկին Կարա-Քերման) քաղաքի տարածքից հայտնաբերված արձանագրությունը, որ Մելիքսեթ-Բեկին արամագրել է Օդեսայի հայոց եկեղեցու քահանա Հովհաննես Զուբարյանը 1913թ.:

Որ վասն անչափ սիրոյ քոյին

Բանդիկ (՞) եւ սին աւեր մարմին՝

Աղաչանօք Աստվածածնին.

Թուղ զանցանս մահաւեսի Տէր-Պապայի

---

246 Տե՛ս Մ. Բժշկյան, էջ 218:

247 XIX դարիի երկրորդ կեսին Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուն կից Հովհաննես քահանան բացել է տալիս դպրոց: Տե՛ս «Արարատ», 1868, նոյեմբեր, N 7, էջ100:

248 Л. М. Меликсет-Беков, Из материалов для истории армян на юге России, 2-е изд, Тифлис, 1914, с. 15-16.

249 Թ. Նացվալովյանի մասին տե՛ս «Արձագանք» 1884, N 31, էջ 544: Նույն տեղում Օդեսայի քահանա Խորասանճյանի մասին: 1884 թ. «Ծաղկապարհորդ» ստորագրությամբ հոդվածագիրը նշում է, որ Օդեսայի հնություններ թանգարանում տեսել է հայերեն 4 եղծված արձանագրություն, ուր կարդացել է «Փառասկեցի Ոսկանանց Սահակի» և դուստրերի մասին: Մեկի թվականն է ՌՃՂԲ (1743):

Դասերն՝ Մարիամ Պիքէին,
Որ էր կողակից Յովանիսին,
Որ հանգեաւ թիւ ՌՃԾԵ (1706)-ին:

Հրատ.*Меликсет-Беков,Из материалов,17*

*604.*Օդեսայի պատմութեան եւ հնութիւնների թանգարանում *եղել են*[250] *եղծված երեք արձանագրութիւններ, որոնցից Քուչուկ-Հավհաննիսյանը մեջբերում է միայն հետևյալը.*

Յիշատակ է աղրիւրս Փաւակեցի Ոսկանանց Սահակի որդի պարոն Թեւանի աղային եւ որդոցն՝ Գէորգին եւ դստերացն արեւուն, համայն ընտանեաց կենդանեացն եւ ննջեցելոցն հոգուն շինեցաւ թվ. ՌՃՂԲ (1743)-ին:

Հրատ.*Кучук-Иоаннесов, 31; Ա. Թորամանյան, 25:*

ՕԴԵՍԱՑԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

Գտնվում է քաղաքի հարավարևմտյան կողմում, Լեհական գերեզմանոցի մոտ: Տապանաքարերը նոր են, ամենահինը թվագրված է 1897-ով: Հին գերեզմանոցը, որ, հավանարար, եղել է եկեղեցու շուրջը, այժմ չի պահպանվել: Նպատակահարմար գտանք ընդօրինակել հետևյալ կոթողների վիմագրերը.

605. Տապանաքար, *կրաքարից. վրան փորագրված է 5 տող.*

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԱՐՈՒՐ/ ԳԱՍՊԱՐԻ ԱՂՋԻԿ/ԱՎԵՏԻՍԻ ԸՆՏԱՆԻԿ/ ՊԼՊՈՒԼԻ ՔՈՒՅՐԸ/ 1872-1937:

606. Մահարձան-կոթող՝ *տապանաքարով, որի վրա՝ 3 տող.*

ԳԱԼՈՒՍՏՅԱՆ/ ՄԱՆՈՒԿ/1886-1928:

607. Տապանաքար, *ապիտակավուն կրաքարից: Վրան՝ 8 տող.*

Здесь /покоится прахъ/ Саркиса Дзероповича/ Касапова/род. 1февраля 1846./Умеръ 7 февраля 1894./Миръ праху твоему/ незабвенный мужъ.

608. Մահարձան-կոթող. *վրան աղուցված մարմարակերտ սալին՝ 6 տող.*

Здесь покоится прахъ/ Мардиросъ/ Поповъ./ Ск.1911г./Миръ праху твоему/,дорогой мужъ.

609. Տապանաքար, *ապիտակ մարմարից, նախկին տեղն անհայտ: Խաչանշանի տակ փորագրված է 5 տող.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ/ ՍՏԵՓԱՆՆՈՒ ՍԱՀԱԿԵԱՆ ՓԱՆՈՍԵԱՆՑԻ,/ ՊԱՐՍԿԱՀԱՅ. ԾՆ. 1902թ. ԱՊՐԻԼԻ 2, Ի ԹԻՖԼԻՍ,/ՎԱԽՃ. 1919Թ. ԴԵԿՏ./ 15 Օ'ԻՍՍԱ:

610. Կոթող, *ևս մարմարից, թևավոր խաչը գլխին. միջնամասում գրված է հայերեն 2 և ռուսերեն 5 տող.*

---

250 1967 թ. խմբարշավի ժամանակ հանգամանորեն ստուգեցվեցին Օդեսայի հնագիտական թանգարանի ֆոնդերը, որտեղ հայտնաբերվեց մեզ հետաքրքրող քարտը՝ N 50362 ֆոնդահամարով, որում գրանցված էր.«Фрагмент плиты с армянской надписью с изображением креста, мрамор, 42x32, 1894. Дар Берты Деллегорда». Իսկական խաչքարը մենք չտեսանք:

ԳՐԻԳՈՐ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՑ/ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆՑ

Ապա՝

Протоіереи/Григорій Гаспаровичъ/ Хорасанджіанцъ родился 12 марта 1848 г./ скончался 7 ноября 1910 г.

611. Մահարճան, ապիտակ մարմարից, վրան՝ 5 տող.

ՏԻԳՐԱՆ/ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆ/ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆՑ./ԾՆՎ. 1882/, ՄԱՀ. 1901Թ.:

612.Մահարճան, ևս մարմարից, հարավային կողմին՝ 9 տող.

ԱՒԱՂ ՔԵԶ Ո, ԱՅՐ ԱՐԱՆՑ՝
ԴԱՒԻԹ ՍԱՐԳՍԵԱՆ ԽԱԼԱՃԵԱՆՑ.
Ի ՔՈՑԴ ՕՐՀԱՍ ԿԱՆԽԱՀԱՍ
ՄԻՆ ՅԸՆՏՐԵԱՑՆ ՊԱԿԱՍԵԱՑ.
ՀԱՆԳԻՍՏ ՀՈԳԻՈՑԴ ՅԱՒԻՏԵԱՆ
ՅԱՌԱՔԻՆԵԱՑԴ ՕԹԵԻԱՆ:
ԾՆԱՒ Ի 24 ԴԵԿՏ.1848 ԱՄԻ.
ՎԱՂՃ.Յ9 ՅՈՒՆ. 1897:
ՕՏԵՍՍԱ

613.Հյուսիսային կողմին, դիմաքանդակից վեր՝ ռուսերեն 4 տող.

Давид Сергеевичъ/ Халайджогло,/ родился 1846 года 24 декабря,/ скончался 1897 года января 9.

Դ. Խալաճյանցի կողքին թաղված է պրոֆեսոր Նալբանդովը, վախճանված 1939թ. մայիսի 30-ին: Մահարճանի հարավային կողմին դրված է.

В.М.Налбандова, сконч. 1923г.

ԻՋՄԱՅԻԼ (ԻՄԱՅԻԼ)

Դանուբ գետի ափին գտնվող ոչ մեծ այս բերդաքաղաքը այժմ մտնում է Ուկրաինական Հանրապետության Օդեսայի մարզի վարչատարածքային կազմի մեջ: Կաթոլիկության նախանձախնդիր տարածողներից մեկը՝ ֆրանսիացի Մարիա Լուիջի Պիդուն[251], իր աշխատության մեջ նշում է, որ Իզմայիլում ապրող հայերը 1669 թ. ունեին իրենց եկեղեցին[252]: Ն. Յորգան ուղղակիորեն հավստում է եկեղեցու կառուցման թվականը՝ 1693 [253]:

Եղել է նաև ս. Գեորգ անվամբ փայտաշեն մի տաճար, որը մեզ չի հասել[254]: Իզմայիլցի հայերն ունեին իրենց փողոցը՝ «Վերխնեարմյանսկայա» անունով: Այստեղ գործել է հայաղբի

---

251 Լուի-Մարի Պիդու դը Սեմտ Օլոնա, 1638-1717

252 Ա. Ես. Թորամանյան, նշվ. աշխ. էջ 43-44: Համմ. Siruni H.D, Armenii în Romania cu prileiue unui centanar Bucuresti, 1940, էջ 17

253 Iorga N., Studii asupra si Cetătii-Albe, Bucuresti, 1899, էջ192-194.

254 Ա. Ես. Թորամանյան, էջ 46:

գերաճակ վարպետների համաքարական կազմակերպությունը՝ «Թերզի ախպրտաց»[255]:

1790 թ. Ա. Աուվորովը գրավեց Իզմայիլի բերդը: Ռազմական գործողություններին եռանդուն մասնակցություն ունեցավ մեծ զորավարի մերձավորագույն բարեկամներից մեկը՝ հայազգի գեներալ Հովակիմ Բարսեղի Խաստատյանը, որը Հովհաննես Լազարյանի և բժիշկ Մակար Շահինյանի աջակցությամբ փրկելով իզմայիլցի բազմաթիվ հայերի կյանքը, նրանց տեղափոխեց Գրիգորիոպոլ[256]:

Մ. Բժշկյանի շրջագայության ժամանակ Իզմայիլում ապրելիս են եղել 60 ընտանիք հայեր, եկեղեցին գտնվել է կիսակործան վիճակում[257]: *Այժմ իսպառ. ոչնչացված է: Դեռևս XIX դարի վերջին քառորդին հայոց եկեղեցու արձանագրված քարերը տեղափոխվել են ռուսական ս. Աստվածածնի վերափոխման տաճարի բակը: Որոշ ժամանակ անց, հայր Էլմազյանի կարգադրությամբ բոլոր հայատառ. արձանագրությունները հավաքվում են ս. Աստվածածին եկեղեցու շուրջ: Այստեղ է բերվել նաև 25 շիրմաքար, որոնք մեզ չեն հասել: Մի քանի արձանագրությունների վերծանությունները տրվում են առաջին հրատարակիչ Քուչուկ-Հովհաննիսյանի ընգօրինակմամբ*[258]:

614. Իզմայիլի ս. Աստվածածին եկեղեցու կառուցապատման քարերից մեկի վրա.

Ողորմութեամբ Աւ՝ի հիմանէ նորոգեցաւ Ս. Աստվածածին եկեղեցիս ի հայրապետութեան սբ Էջմիածնի տն Յակոբայ սրբազնագոյն կաթողիկոսին եւ ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ տեառն Յակոբ ա֊ստուա֊ծաբան արքեպիսկոպոսին, վերակացութեամբ եւ յորդորմամբ եւ արդեամբ քահանայի եւ ժողովրդոց քաղաքիս եւ ըստ հրամանաւն եւ աշխատութեամբ եւ արդեամբք արեւելցի մահտեսի Մալաքիային եւ եղբօրն մահտեսի Յակոբին. այլեւ յո֊ժ֊ա֊ղ֊ո֊վ֊ւրդ֊ո֊ց վտրեւելցի մահտեսի Պերխուդարին, որ աշխատութեամբ եւ յոլով արդեամբք օգնեաց շինութեամբ եկեղեցիս եւ տուք զողորմին ամենայն ջատագովաց. ամէն. ՌՄԺԲ (1763)թւին Հայոց, Յունվարի ժ (10):

Հրատ. *Кучук Иоаннесов, 29.*

615. Տապանաքարին՝

Այս է տապան Շուրժուացի խոճայ Ղազարի որդի Խոշխապարին, որ փոխեցաւ թվ. ՌՃԽԹ(1700) ամիս սեպտեմբերի... Հայր մեր...

Հրատ. *Кучук-Иоаннесов, Древности восточные 1903, т. 2 вып. 3, с. 62.*

616. Տապանաքարին՝

Շիրիմս այս է գերեզման Թոխաթցի Փերհատի որդի անուն նորա Մանուկ կոչի, ԼԵ (35) ամեայ հասակի փոխեցաւ թվ. ՌԽ(1556) ժԵ (15) օգոստոս. որք հանդիպիք, սիրելիք, յիշեցէք զսա ողորմելի:

Հրատ. *Кучук- Иоаннесов, 30,*

617. Տապանաքարին՝

---

255 Նույն տեղում, էջ 44:

256 Տե՛ս Գ. Մ. Գրիգորյան, Վիմագրական տվյալներ 18-19-րդ դդ. հայ-ռուս. կապերի մասին, «Լրաւեր հաս. գիտ.», 1983, N 8:

257 Մ. Բժշկյան, էջ 216:

258 Տե՛ս Х. Кучук Иоаннесов. Старинные армнские надписи..., с. 29.

Այս է տապան Հանդատեան Մարկոսի որդի Խարամանցի Նաւասարդի, որ փոխեցաւ առ Քս թվ. ՌՃԼԶ(1687), օգոստոսի ԺՌ(12):

Հրատ. Кучук-Иоаннесов, 30,

618. Տապանաքարին՝

Այս է տապան Հանդատեան Իամայելցի աւագերէց Տէր-Ստեփանի դուսար Ճօհերին, որ հանգեաւ ի Քս թվ. ՌՃՂՌ(1743), սեպտեմբերի ԺԵ (15)

Հրտա. Кучук-Иоаннесов, Древности восточые, 1903, т. 2 вып. 3, с. 62.

Երկու արձանագրություններ՝ նույն տապանաքարի վրա.

619.

Այս է տապան Թիֆլիզցի մահտեսի Սահակի որդի Մանուկն, որ փոխեցաւ թվ. ՌՃՂԸ(1749):

620.

Այս [է] տապան Թիֆլիզցի մահտեսի Սահակի դուսոր Աննայի, որ փոխեցաւ թվ. ՌՃՂԸ(1749):

Մանոթ. Քուչուկ-Հովհաննիսյանը մյուս արձանագրությունների մասին չի հիշատակում:

ԿԻԼԻԱ (ՔԻԼԻ)

Գրավոր աղբյուրները վկայում են, որ հայերը Կիլիայում բնակվել են դեռևս XV դարից առաջ: Ռումինացի ականավոր հոյագետ Վ. Բընդեյանուն նշում է, որ Մոլդավիայի հգոը իշխան Շտեֆան Մեծը ծառայությունների համար առաջ քաշեց և բարձր պաշտոնի նշանակեց Ղրիմից եկած հայազգի Գոյանին[259]: 1484թ. սուլթան Բայազիդ Բ-ն գրավեց Կիլիան և Ակկերմանը (Աղքերման), որոնց հայ աղգաբնակչությանը բռնի գաղթեցրեց Կ. Պոլիս: Հետագայում՝ 1768թ., վաճառական Ն. Կլեմանսը հիշատակում է, որ Կիլիայի հայ աղգաբնակչությունը ուներ երկու եկեղեցի[260], որոնցից մեկը՝ ս. Աստվածածինը, դեռևս կանգուն է եղել Մ. Բժշկյանի շրջագայության ժամանակ: Ցավոք, Մ. Բժշկյանը իր «Ճանապարհորդության» մեջ համագամանորեն չի անգրագառնում Դանուբ գետի հյուսիսային մասում գանվող Կիլիա գյուղաքաղաքի նկարագրությանը: Հավաստի տվյալների համաձայն, 1903 թ. Կիլիայում ապրում էին 300 հայեր: Այժմ բնիկ կիլիացիներ այստեղ չկան:

Վիմագրական մեր արշտվախուզմրը հանգամանորեն ծանոթացավ Կիլիայի պահպանված հուշարձաններին, սակայն գրանց մեջ ոչինչ հայկական չհայտնաբերեց: Հին գերեզմանոցում հայատառ արձանագրություններ նույնպես չգանվեցին, թեև ճարտարապետ Ա. Խ. Թորամանյանը վերջերս հրատարակած իր գրքում նշում է, որ մոլդավական Ա. Նիկոլայե եկեղեցում կան 9 արձանագրություններ: Ուսումնասիրողի վկայությամբ, այդ արձանագրություններից երեքը գանվում

---

259 Ժ. Անանյան, Հայերի Մոլդավիա և Բեսարաբիա գաղթելու պատմությունից, «Լրարեր հաս. գիտ.» 1966, N 9, էջ 93:

260 Klemans N.E. Reisen von Wien über Belgrad bis Kilianova, leipzig 1773 էջ 40.

են եկեղեցու խորանի հարթակի, մնացածները՝ աստիճանների ու պատերի վրա[261]:

Կիլիայից ընդամենը մեկ արձտնագրություն է հրապարակվել՝ տյն էլ շնորհիվ Աղքրմանի հայոց եկեղեցու քահանա Եղեմիա Ապրիլյանի, որը 1910 թ. Բեսարաբիայի Բուդաղի վայրում հայտնաբերել է սպիտակ մարմարե տապանաքարեր, որոնցից մեկի վրա փորագրված է եղել.

621.

Այս է տապան Հանդպատեան Բրլեցի տիրացու Մելքոնի դուստր Եղիսաբեթի, որ փոխեցաւ թուին ՌՄԺԴ (1765) ապրիլի 7-ին:

Հրատ. *Մելիքսեթ- Բեկ, Из материалов..., с. 12, «Արարատ», 1912, հունվար, էջ 66:*

Քիլիի ուղղափառ. եկեղեցում Քուչակ-Հովհաննիսյանը նկատել է վեց տապանաքար, որոնք օգտագործվել են սալարկելու և քարե աստիճաններ կառուցելու նպատակով: Մեծ մասի արձանագրերը եղել են եղծված: Նա մեջբերում է հետևյալ երկուսը.

622.

